ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

ԿԵՑՑԵԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՈՐ ՎԱՂՆ Է ԳԱԼՈՒ

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(79-րդ տարի) Թիվ-3 (1697) Մարտ 2025

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Միավորվել ընդհանուր նպատակի շուրջ (էջ 1-3)

2- Իրավաքաղաքական

Անի Մելքոնյան
Լենին-Քեմալ դաշինքից մինչև Էրդողան-Փաշինյան-Ալիև դաշինք՝ ընդդեմ Հայաստանի (էջ 4-7)

3- Ռազմաքաղաքական

Սարգիս Սարգսյան
44-օրյա պատերազմի արյունոտ դասերը (Մաս 4) (էջ 8-18)

4- Տնտեսական

Ամերիկյան հետազոտության հայկական կենտրոն
Ի՞նչ են իրենցից ներկայացնում ամերիկյան փոքր մոդուլային ատոմային ռեակտորները (էջ 19-23)

5- Հասարակություն

Մանվել Մկրտչյան
Ինչո՞ւ է մեր հանրությունը դժվար կենտրոնանում (էջ 24-27)

6- Պատմության լուսարձակ

Վանիկ Վիրաբյան
Հայաստանի Հանրապետությունը Վրաց-Ադրբեջանա-Թուրքական ռազմապաշտպանական համադաշնության համատեքստում 1918-1920 թթ. (էջ 28-40)

7- Դեմքեր և դեպքեր

Մովսէս Ծիրանի
«Մենք տակաւին Մուսա Լեռցի ենք, երբ ձուլուինք՝ նոր Հայ պիտի ըլլանք...» (էջ 41-43)

8- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Բանի՞ւ, թէ՞ գանիւ (էջ 44)

Միավորվել ընդհանուր նպատակի շուրջ

Երկար ժամանակ ընդդիմանալուց հետո Հայաստանի իշխանությունը համաձայնեց Խաղաղության պայմանագրի 17 կետերից վերջին երկու պահանջի հետ: Ակնհայտ է, որ այդ կետերի ընդունումը դժվար էր անգամ 2020 թվականից Արցախն ու Հայաստանը ծանր պարտությունների և կորուստների տարած իշխանությունների համար: Իրականում մենք չենք էլ իմանում, թե ինչ է իրենից ներկայացնում այս պայմանագիրը, որի բովանդակությունը մինչև վերջ գաղտնի է պահում այն ղեկավարությունը, որը ժողովրդից մանդատներ կորզելու նպատակով 2018 թվականին խոստանում էր, թե դրանից հետո պետության համար կարևոր որոշումները կայացվելու են հրապարակայնորեն, անմիջականորեն ժողովրդի կողմից: Իհարկե, այս անգամ ևս ադրբեջանական պահանջների առջև նահանջը ներկայացվեց որպես մեծ ձեռքբերում, ինչպես եղել էր մինչ այս, ինչպես անգամ պատերազմում կրած ճակատագրական պարտությունը փորձ արվեց ներկայացնել որպես հաղթանակ: Պետական պատասխանատվության զգացումից զուրկ և նրա կենսական շահերի հաշվին իշխանությունը պահպանել ձգտող անհայրենիք խմբակն այլ կերպ չի էլ կարող վարվել, այլապես կփաստի իշխանության աթոռներին իր գտնվելու անթույլատրելիությունը: Շահագրգիռ ուժերն ու թշնամիները շատ լավ հասկանալով Հայաստանի իշխանությունների անել կացությունը՝ նրա առջև դնում են զիջումների նորանոր պահանջներ, որոնց իրականացման դեպքում Հայաստան պետությունը պարզապես կդադարի գոյություն ունենալ: Իհարկե, այլևս ծիծաղելի են հնչում 2020 թվականի պատերազմի պարտության կամ Արցախը հանձնելու մեղքը նախկինների վրա բարդելու այս իշխանությունների քաղաքական մանիպուլյացիաները, քան որ ակնհայտ են անգամ պատերազմից հետո նրանց չդադարող պարտությունները, թշնամու ֆիզիկական, դիվանագիտական, գաղափարական, հուգևոր-մշակութային ու բարոյական պահանջների առջև ընկրկելը: Ըստ էության, 2020 թվականից հետո Հայաստանի իշխանությունները վերածվեցին երկրում ադրբեջանաթուրքական տանդեմի դրածոների՝ հանուն նրանց շահերի դուրս գալով Արցախի, արցախցիների ու Հայաստանի պետական, անվտանգային շահերի, ու արժեքների դեմ: Հայաստանի և հայության դարավոր թշնամիները շատ լավ տեսնում են, թե ժողովրդային աճող անհանդուժողության, ինչպես և արտաքին, ոչ բարենպաստ զարգացումների պայմաններում ինչպես է նեղանում Հայաստանի իշխանության խուսանավումների դաշտը, և փորձում են աննախադեպ այս իրավիճակից օգտվելով հասնել առավելագույնին, սկզբունքային զիջումների պարտադրանքով կրկին օրակարգ բերելով Հայաստանը վերջնականապես ոչնչացնելու ծրագիրը:

ԱՄՆ-ում իշխանության փոփոխությունը նշանավորեց մի քանի տասնամյակ աշխարհում ավեր գործած գլոբալիզմի գաղափարաքաղաքական պարտությունը: Միացյալ Նահանգների իշխանության այսօրվա քաղաքականության շարունակման դեպքում Եվրոպայի գլոբալիստական էլիտան նույնպես ենթարկվելու է վերջնական քայքայման՝ որը թողնելով Սահակաշվիլու, Ջելենսկու և Փաշինյանի նման դրածոներին: Գլոբալիզմի անառակ զավակները հենց իրենց երկրներում արդեն իսկ մեծ հարված են ստացել USAID-ի նման կառույցի ազդեցության ցանցը ներկայացնող զանազան հասարակական, քարոզչական կառույցների փակմամբ, գլոբալիզմի առաջամարտիկ Սորոսի դեմ ԱՄՆ նոր իշխանության ունեցած մերժողական վերաբերմունքի պատճառով: Գունավոր հեղափոխություններով իշխանության բերված աշխարհի դրածո կառավարությունները մեծ հարված են ստանում «Ամերիկայի ձայն» և «Ազատություն» ռադիոկայանների գործունեության դադարեցման դեպքում՝ կորցնելով քարոզչալրատվական հզոր թիկունք:

Այս քաղաքականության շարունակման դեպքում ավտորիտար իշխանիկները զրկվելու են նաև իրենց երկրների ներսում ուզած ապօրինությունները գործելու, արտաքին հովանավորությունից:

Ասվածի վկայությունը կարելի է համարել սույն թվականի փետրվարի 14-ին ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսի ունեցած ելույթը Մյունխենի անվտանգության համաժողովում, մասնավորապես փոխնախագահի գնահատականները Եվրոպայում ժողովրդավարության իրավիճակի մասին և կոնկրետ անդրադարձը Ռումինիայի ընտրություններում թեկնածուի օրինական հաղթանակը չեղարկելու փաստին:

Մյուս կողմից՝ ԱՄՆ քաղաքականության շրջադարձը Ռուսաստանի նկատմամբ այլ բանի վկայություն չէր, քան Ռուսաստանի հզորանալու փաստի

սթափ գնահատումը: Ուկրաինական ճակատում շոշափելի արդյունքների հասնող Ռուսաստանում այսօր խոսում են Յալթայի կոնֆերանսից 80 տարի անց աշխարհի նոր վերաբաժանման օրինաչափության մասին: Միայն թե այս նոր վերաբաժանման ժամանակ երրորդ աթոռը կզբաղեցնի ոչ թե Հայաստանի իշխանությանը հայրություն անող Բրիտանիան, այլ՝ Չինաստանը: Սա ենթադրելի, սակայն դեռ չհաստատված հեռանկարից է, իսկ կոնկրետ փաստերի թվում է Ռուսաստանի ուշադրության մեծացումը Անդրկովասի և, մասնավորապես, Հայաստանի վրա: Ուշագրավ է, որ վերջերս Ռուսաստանը դիմել է պաշտոնական Հայաստանին տեղեկություններ խնդրելով, թե զորավարժությունների նպատակով ԱՄՆ-ն ի՞նչ զինտեխնիկա է պատրաստվում բերել Հայաստան: Ռուսաստանից ժամանակ առ ժամանակ ուշադրության արժանի հայտարարություններ են հնչում Արցախի հետ կապված: Մասնավորապես վերջերս ՀՀ-ում Ռուսաստանի դեսպան Սերգեյ Կոպիրկինը խոսեց, թերևս ոչ ամբողջովին նախկին ձևաչափով, ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեության վերականգնման մասին. «Մենք միշտ աջակցել ենք այդ ձևաչափին (ԵԱՀԿ ՄԽ), ակտիվորեն աշխատել ենք այնտեղ և երբեք չենք ասել, որ հրաժարվում ենք դրանից»: Մասնավորապես դեսպանի այս արտահայտությունն է 2025 թվականի մարտի 7-ի լրատվության մեջ մեջբերել ռուսական REX տեղեկատվական գործակալությունը: Նույն ամսի 18-ին լրատվամիջոցներով տարածվեց Ռուսաստանի փոխարտգործնախարար Ալեքսեյ Օվերչուկի հայտարարությունն այն մասին, թե. «Մոսկվայի, Բաքվի և Երևանի եռակողմ աշխատանքային խումբը չի փակվել. այն քնած վիճակում է»: Այսպիսով, Ռուսաստանն ազդանշաններ է ուղարկում այն մասին, որ Արցախի հարցը փակված չէ: Մի փոքր շեղվելով տվյալ ուղղությամբ՝ հիշենք նաև, որ նման ազդանշաններ հաղորդում են նաև եվրոպական կառույցները, իսկ Շվեյցարիայի խորհրդարանի վերին պալատը, հետևելով ստորին պալատի որոշմանը, 2025 թ. մարտի 18-ին ընդունեց հետևյալ որոշումը. «Լեռնային Ղարաբաղի համար Խաղաղության ֆորում. հայերի վերադարձի հնարավորության ապահովում»: Հայկական կազմակերպությունների ու հատկապես Հայ դատի հանձնախմբի ջանքերով Արցախի ճակատագրի հարցը շրջանառության մեջ է նաև ԱՄՆ պաշտոնական շրջանակներում: Իհարկե, այս ամենը ոչ թե ավելորդ լավատեսությամբ պետք է համակեն մեզ, այլ վարակեն հետևողական ու անդադրում աշխատանքի եռանդով: Իսկ տխուր ու միաժամանակ զավեշտալին այն է, որ այս գործընթացներին հստակորեն դեմ են հատկապես Ադրբեջանի, Թուրքիայի և Հայաստանի իշխանությունները: Ավելին, Հայաստանի իշխանությունը հավաստում է Մինսկի խումբը լուծարելու և Ադրբեջանի կատարած պատերազմական հանցագործությունների դեմ հարուցված քրեական գործերը ետ կանչելու մասին, ինչն ուղղակիորեն կնպաստի Արցախի հարցը թաղելուն: Կառչած Ադրբեջանի, Թուրքիայի և արևմտյան հովանավորների փեշերից՝ Հայաստանի իշխանությունը մուրում է «Խաղաղության պայմանագիր», որը նրա գլխավոր փաստարկը պետք է լինի գալիք ընտրություններում ժողովրդի առջև արդարանալու և կրկին նրա մանդատը կորզելու համար: Ի դեպ, պատասխանելով լրագրողների հարցին, Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը մարտի 18-ին մշակվող նոր Սահմանադրության մասին ասում է. «Խոսքը «խաղաղությունը չվտանգող Սահմանադրության մասին է»: Սրանից հետո կասկած կարո՞ղ է լինել, որ նոր Սահմանադրության ընդունման հարցն ուղղակիորեն բխում է Խաղաղության պայմանագիրը ստորագրելու դիմաց Ադրբեջանի իշխանությունների պահանջից: Վերադառնանք, սակայն, մեր հիմնական ասելիքին:

Հայաստանի իշխանությունը հասկանում է, որ իր ժամանակն անցել է, որ կորցնում է արտաքին հենարանները և օր օրի ավելանում է իր ձախավեր քաղաքականությունից դժգոհ ժողովրդի անհանդուրժողությունը: Մյուս կողմից, Ռուսական շրջադարձի հետ ավելանում է արտաքին երկկողմանի ճնշումը: Այս պայմաններում ամեն գնով վերարտադրությունն այս ղեկավարության համար դարձել է իր իշխանության գլխավոր հարցը: Ցանկացած գնով աթոռները պահպանելու փաստը Նիկոլ Փաշինյանը այնուհետև կներկայացնի բոլորին որպես իր արտաքին ու ներքին քաղաքականության նկատմամբ ժողովրդի համաձայնության ու վստահության մանդատ:

Ինչ վերաբերվում է աշխարհաքաղաքական խաղերի մեջ ՔՊ-ի ապագային, ապա այս իշխանությունը պատրաստ է ճարպիկ գառան պես կախվելու յոթ մոր կրծքից: Ամերիկյան ձախող այցից հետո Նիկոլ Փաշինյանն ընդգծված ձևով փորձում է ստանալ սեփական քաղաքականության մեջ խճճված Եվրոպայի աջակցությունը: Արդեն առկա են նշանները, ինչպես են նրանք փորձում սրբագրումներ մտցնել Ռուսաստանի հետ հարաբերություններում:

Այսպիսով, վերադառնալով մեր գլխավոր ասելիքին, արձանագրենք, որ արտաքին ու ներքին ճնշումների ավելացման և քաղաքական խուսանա-

վումների դաշտի սահմանափակման պայմաններում Փաշինյանի համար հիմնական խնդիր է դառնում համապետական ընտրություններում գալիք հաղթանակն ապահովելու համար հաղթանակի հասնելը մինչ այդ եղած բոլոր ընտրություններում, որպեսզի հետագա ընտրակեղծարարության համար հնարավորություն ունենա լիարժեքորեն օգտագործելու տեղական իշխանության լծակները: Հակառակ պարագայում որևէ պարտություն կարող է շղթայական ռեակցիա առաջացնել՝ խանդավառելով հաղթանակի համն առած ժողովրդին: Այդ առումով նրա ամենամոտակա փորձությունը մարտի վերջին կայանալիք Գյումրիի ավագանու ընտրություններն են: Փաշինյանը հասկանում է, որ Հանրապետության երկրորդ քաղաքում պարտվելը կարող է դառնալ իր ընդհանուր պարտության սկիզբը: Այսօր այդ ուղղությամբ նա մոբիլիզացրել է իշխանական ողջ ռեսուրսը, պաշտոնյաներից և հիմնարկների աշխատողներից ոչ միայն անվերապահ կողմնորոշում է պահանջվում, այլև իշխանական թեկնածուի օգտին հավաքված ընտրողների ցանկեր: Ակնհայտ է, որ անգամ ընտրական աղաղակող կեղծարարությամբ փաշինյանական ռեժիմի համար դժվար է հանրապետության երկրորդ քաղաքում փոխել ուժերի հավասարակշռությունը: Կգնա՞ արդյոք նա ավելի մեծ ապօրինությունների՝ ընդհուպ մինչև հիմնական թեկնածուի կամ նորընտիր քաղաքապետի դեմ բոյկոտի բեմականացումների և՝ անգամ ձերբակալության: Քայլեր, որոնց նա բազմիցս դիմել է մինչ այս: Այսօր նրա նկատմամբ արտաքին հովանավորությունը թուլացած է, սակայն դեռ պահպանվում է: Դեռ, որ նրան հանցավոր աջակցություն կարող են մատուցել որոշ դեսպանատների ու երկրում գործող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները: Ի դեպ ժամանակն է, որպեսզի ժողովուրդը համապատասխան երկրների և կազմակերպությունների ղեկավարությունից պահանջի, ետ կանչելու Հայաստանի կոռումպացված, ավտորիտար իշխանությանը հովանավորող իրենց պաշտոնյաներին:

Հայաստանում այսօր ավելի ու ավելի բարձր է հնչում ստվարացող զանգվածների ձայնը, ովքեր գիտակցել են դավաճան իշխանության պատճառով հայրենիքի գլխին կախված սպառնալիքի մեծությունը: Ստվարանում է ազգային արժանապատվություն ունեցող երիտասարդության բանակը, որը ցանկանում է կանխել հայրենիքին սպասվող ճակատագրական աղետը: Մինչ հիմա իր նախաձեռնողականությամբ փաշինյանական ռեժիմը միշտ մեկ քայլ առաջ է եղել իր դեմ պայքարողներից: Նրան հաջողվել է նաև ընդդիմադիր դաշտի էներգիան պառակտել, շեղել իրենից և ուղղել միմյանց դեմ: Մենք այժմ գտնվում ենք նման իրավիճակում, երբ կամա կամ ակամա ընդդիմադիր դաշտի որոշ ուժեր ժողովրդական ցասման էներգիան շեղում են հիմնական թիրախից և թուլացնում ազգային դաշտը: Բոլորը պետք է հասկանան, որ չսպանված արջի մորթին

չեն կիսում: Գալիք իշխանության հարցը, այսպես թե այնպես, լուծվելու է ընտրությունների միջոցով:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ.

- Հայաստանի իշխանության ռեյտինգը գտնվում է անցնող 7 տարիների ամենացածր սահմանագծին,
- Հանրապետության մասշտաբով առավել ընդլայնված է իշխանությունների հրաժարականին ձգտող ժողովրդական զանգվածների շրջանակը,
- առավել մեծ և բազմաշերտ է ակտիվ պայքարի պատրաստ մարդկանց քանակը,
- սահմանափակված է իշխանության ապօրինի գործողությունների համար արտաքին աջակցության հնարավորությունը,
- ծրագրված, ճանապարհային հստակ քարտեզով պայքարի վերսկսումը կնվազեցնի տեղական և համապետական ընտրություններում իշխանությունների հաղթելու հավանականությունը, կկանխի ինքնափրկության համար հայրենիքի շահերը զոհաբերելու իշխանության հնարավորությունը,
- մինչ այս և սրան զուգահեռ պետք է կարևորել տեղական բոլոր ընտրությունները՝ այս շարքում կարևորագույններից մեկը համարելով մարտի 30-ին տեղի ունենալիք Գյումրիի ավագանու ընտրությունները,
- ընտրություններում ջլատված ազգային ուժերի դիմաց իշխանությունը կենտրոնացնելու է իր հնարավորությունները, հետևաբար, հաղթանակի երաշխիքը կարող է լինել միասնական թեկնածուի շուրջ ազգային ուժերի համախմբումը,
- բոլոր պարագաներում ազգային ուժերի հաղթանակը և հայրենիքի փրկությունը հնարավոր են ընդհանուր նպատակի շուրջ ազգային բոլոր ուժերի միասնական հանդես գալու դեպքում՝ մինչև իշխանափոխությունը:

Գալիք փորձություններին հանդիման մեր ժամանակը սահմանափակ է, և չպետք է այն մսխել սպասելով, թե երբ հեղափոխական իրավիճակն ինքն իրեն կվերաճի հեղափոխական պայքարի: ■

Լենին-Քեմալ դաշինքից մինչև Էրդողան-Փաշինյան-Ալիև դաշինք՝ ընդդեմ Հայաստանի

Անի Մելքոնյան
Պատմաբան

Մարտը հայոց պատմության մեջ նշանավորվում է մի շարք նշանակալի իրադարձություններով, որոնցից մեկն էլ 2021 թ. մարտի 16-18-ին կնքված խորհրդա-թուրքական բարեկամության և եղբայրության պայմանագիրն էր:

Թե ի՞նչ է իրենից ներկայացնում այս պայմանագիրը, բոլորս լավ գիտենք, բայց մինչև քննարկման բուն թեմային անցնելը, համառոտ խոսենք 1920 թ. Մոսկվայի պայմանագրի մասին:

Նախ մի փոքր, պայմանագրի կնքման ամսաթվի հետ կապված. մարտի 16, թե՞ մարտի 18:

«Նորահայտ փաստաթղթերի համաձայն՝ խնդրո առարկա պայմանագիրը ռուս-թուրքական շահերի շուրջ տեղի ունեցող «առևտրի» պատճառով իրականում կնքվել է ոչ թե մարտի 16-ին, այլ 18-ին:

Մասնավորապես թուրքերը պահանջել են նաև, որ ռուսական կողմը տարեկան վճարի իրենց 10 մլն ռուբլի՝ ոսկով:

Ռուսների զիջողականության դիմաց թուրքական կողմն իր պահանջների հարցում այնքան լկտի է գտնվել, որ, առաջադրելով «Ազգային ուխտի» համաձայն սահմանները գծել ըստ 1877-1878 թթ. պատերազմից առաջ եղած սահմանների, պահանջել է դրանում ներառել նաև Իգդիրն ու Սուրմալուն, այն դեպքում, երբ դրանք չեն մտել այդ սահմանների մեջ:

Դրանք թուրքական սահմաններում չեն ընդգրկվել նաև Բրեստի պայմանագրով…

Նույն 1921 թ. մարտի 16-ին Ռուսաստանի և Անգլիայի միջև կնքվել է տնտեսական համաձայնագիր:

Բանակցությունների ընթացքում անգլիացիները պահանջել են ռուսներից, որ որպես փոխհատուցում որոշ հողային զիջումներ արվեն Հայաստանին:

Գեորգի Չիչերինը Լոնդոնում Ռուսաստանի դեսպանին հրահանգում է փոխանցել անգլիացիներին, որ չեն կարող այլևս թուրքերի առջև նման պայման դնել, քանի որ երկու երկրների միջև մարտի 16-ին պայմանագիրն արդեն կնքվել է:

Իրականում ռուսները ձգձգել են պայմանագրի կնքումը՝ սպասելով անգլիացիների արձագանքին և այն մարտի 16-ի հետին ամսաթվով կնքել են մարտի 18-ին»[1]:

Փաստորեն, Հայաստանի խորհրդայնացումից հետո, բոլշևիկներն ու թուրքերը պետք է որոշեին Հայաստանի ճակատագիրը, առանց հաշվի առնելու հայ ժողովրդի կարծիքը:

Որ հայ ժողովրդի կարծիքը հաշվի չառան, դրա մասին է վկայում նաև այն, որ խորհրդայնացված Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար

Ալեքսանդր Բեկզադյանին թույլ չտվեցին մասնակցել բանակցություններին կամ գոնե տեղեկանալ դրանց ընթացքի մասին:

Իսկ ընթացքն ու հետևանքը հայության համար ավելի քան բացասական էին, որովհետև Հայաստանը կորցրեց իր միջազգայնորեն ճանաչված տարածքի զգալի մասը:

Մոսկվայի բանակցությունների ժամանակ քեմալական պատվիրակությունը պնդում էր, որ անհրաժեշտ է վերականգնել 1877 թ. ռուս-թուրքական նախկին պետական սահմանը, ինչը նշանակում էր, որ դեռևս 1920 թ. գարնանը Ազգերի Լիգայի (ՄԱԿ-ի նախակարապետը) կողմից ՀՀ սուվերեն տարածքում ճանաչված Կարսն ու Արդահանը փոխանցվելու էին Թուրքիային:

1920 թ. հունվարի 28-ին Կ. Պոլսի խորհրդարանը ընդունել էր «Ազգային ուխտ»[2] փաստաթուղթը, ըստ որի ենթադրվում էր, Օսմանյան կայսրության 1877 թ. սահմանների վերականգնում:

Այլ կերպ ասած. «Թուրքիայի անբաժան մաս էին հայտարարվում ոչ միայն Արևմտյան Հայաստանի նահանգները, այլև 1878 թվականից ի վեր Սան Ստեֆանոյի և ապա Բեռլինի պայմանագրերով շուրջ 40 տարի Ռուսական կայսրության և ապա Հայաստանի Հանրապետության օրգանական մաս հանդիսացող ամբողջ Կարսի մարզը (Կարսի, Արդահանի, Կաղզվանի և Օլթիի օկրուգներով) 18784 քառ. կմ տարածք»[3]:

Մոսկվայի պայմանագրի շուրջ բանակցությունների ընթացքում խորհրդային կողմը ոչ միայն ընդունեց թուրքական «Ազգային ուխտը» և համաձայնեց Թուրքիային զիջել Կարսն ու Արդահանը, այլ նաև համաձայնեց «Ազգային ուխտի» մեջ չմտնող և երբևէ Օսմանյան կայսրության տարածքին մաս չկազմած Սուրմալույի գավառն ու Իգդիր քաղաքը ևս փոխանցել Թուրքիային:

«Սուրմալուի գավառը, հայ ժողովրդի համար խորհրդանշական Մեծ ու Փոքր Մասիսներով, Իգդիրով ու Կողբով, Հայաստանի մի քանի բաժանումներից ի վեր, հանդիսացել է Արևելյան Հայաստանի օրգանական մասը և տնականորեն չի մտել Օսմանյան կայսրության մեջ, իսկ Հայաստանի անկախության հռչակումից հետո այն ՀՀ անբաժանելի մաս էր»[4] - բայց սա չխանգարեց, որ Լենինի կառավարությունը Թուրքիային նվիրի Սուրմալուի գավառը՝ 3174 քառ. վերստ տարածքով[5] (մոտ 3688 քառ կմ - Ա.Մ.) և հայության համար ազգային խորհրդանիշ համարվող Արարատ լեռով:

Ստանալով Սուրմալույի գավառը, թուրքերը ընդհուպ մոտեցան հայկական Նախիջևանին, որը «Ազգային ուխտի» հետ որևէ կապ չուներ, բայց պանթուրքիստական քաղաքականության տեսանկյունից, Թուրքիայի համար շատ կարևոր նշանակություն ուներ. Ադրբեջանի հետ միավորվելու և պանթուրքիզմի ծրագրի առաջին փուլն ավարտին հասցնելու առումով:

Ի վերջո, Թուրքիան հասավ իր նպատակին և պոկեց Նախիջևանի գավառը Ադրբեջանի համար, պայմանով, որ «Ադրբեջանի հովանու տակ անցնող Նախիջևանի ինքնավար մարզի հովանավորությունը չի զիջվի մի երրորդ պետության»[6]- մեծ ջանքեր չեն պահանջվում հասկանալու համար, որ «երրորդ պետության» անվան տակ, հասկացվում էր Հայաստանը:

«Մոսկվայի պայմանագրով Նախիջևանի երկրամասի հանձնումը Ադրբեջանին, Հայաստանի համար տարածքային զգալի կորուստ (5500 քառ. կմ) լինելուց բացի, վնասակար էր նաև ռազմավարական տեսակետից:

Դրանով փաստորեն Հայաստանի թիկունքում՝ Արաքսի ձախ ափին, ստեղծվում էր թշնամական մի հենակետ, որը կապող օղակ էր դառնում Թուրքիայի ու Ադրբեջանի միջև և գործուն սպառնալիք՝ Ձանգեզուրի ու Արցախի համար»[7]:

Այսպիսով, 1921 թ. մարտին կնքված խորհրդա-թուրքական պայմանագիրով Թուրքիան ստացավ ոչ միայն «Ազգային ուխտով» սահմանվածը, այլ նաև Վրաստանին զիջելով Բաթումը, ստացավ Սուրմալուի գավառն ու, ի օգուտ Ադրբեջանի, Հայաստանից կորզեց Նախիջևանի գավառը:

Բացի վերը նշվածից, խորհրդային իշխանությունները Հայաստանի անունից հրաժարվեցին 1920 թ. օգոստոսի 10-ին կնքված Սևրի պայմանագրից, այդ մասին Մոսկվայի պայմանագրի 1-ին հոդվածը սահմանում էր.«Կողմերից յուրաքանչյուրը սկզբունքորեն համաձայն է չճանաչել ոչ մի հաշտության պայմանագիր կամ միջազգային որևէ այլ ակտ, եթե կողմերից մեկին ուժով հարկադրեն ընդունել: Ռուսաստանի կառավարությունը համաձայն է չճանաչել Թուրքիային վերաբերող և այսօր Թուրքիայի Ազգային մեծ ժողովը ներկայացնող նրա ազգային կառավարության չճանաչած որևէ միջազգային ակտ»[8]:

Խորհրդաթուրքական բանակցությունները, մարտ, 1921 թ.

Մոսկվայի 1921 թ. մարտի 18-ի պայմանագիրը կնքման պահից անօրինական է, և միջազգային իրավունքի տեսակետից իրավական որևէ ուժ չունի՝ առաջին հերթին այն պատճառով, որ կնքվել է երկու ապօրինի գործող կառավարությունների միջև, որովհետև «մինչև 1922 թ. նոյեմբերը՝ սուլթան Մեհմեդ 6-րդի կողմից Թուրքիան լքելը, սուլթանի կառավարությանն էր վերապահված Թուրքիայի անունից միջազգային հարաբերությունների մեջ մտնելու իրավունքը, և, ըստ Օսմանյան կայսրության Սահմանադրության 7-րդ հոդվածի, միայն սուլթանը կարող էր լիազորել որևէ անձի հանդես գալու երկրի անունից»[9]: Ինչ վերաբերում է ՌԽՖՍՀ-ին, ապա նրա միջազգային ճանաչման հիմքը դրվեց միայն 1924 թ. փետրվարի 1-ին, Մեծ Բրիտանիայի կողմից ճանաչմամբ:

Այս երկու հանգամանքից բացի, կա մեկ այլ փաստ, որն իրավական տեսանկյունից չափազանց կարևոր է՝ Մոսկվայի խորհրդա-թուրքական եղբայրության և բարեկամության պայմանագրի կնքումից՝ 1921 թ. մարտի 18-ից մեկ ամիս առաջ՝ 1921 թ. փետրվարի 18-ին Հայաստանում տեղի էր ունեցել հակախորհրդային ապստամբություն, Հայաստանը ազատագրվել էր խորհրդային լծից, և վերականգնվել էին ՀՀ անկախությունն ու ինքնիշխանությունը, այսինքն, Լենինն ու Քեմալը որոշում էին մի երկրի ճակատագիր, որի օրինական կառավարությունը կամ այդ կառավարության լիազորված ներկայացուցիչը չէին:

Մոսկվայի բոլշևիկյան կառավարության անօրինական պայմանագրի շղթաներից ազատվելու գործում մեզ կարող է օգնել միջազգային իրավունքը, մասնավորապես «Միջազգային պայմանագրի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիան (որի մասին խոսել ենք 2020 թ. մարտի «Դրօշակի» թիվ 3 համարում տպագրված հոդվածում):

Ինչ-ինչ քաղաքական պատճառներով, հետանկախական նախորդ երեք տասնամյակների ընթացքում Հայաստանի իշխանությունները Մոսկվայի պայմանագրի Հայաստանին վերաբերող կետերի չեղարկումը օրակարգ չեն բերել, իսկ այսօր՝ Նիկոլ Փաշինյանի կառավարման պայմաններում այդ մասին խոսելն անիմաստ է, քանի որ Փաշինյանն ինքը 2020 թ. նոյեմբերի 9-ին ստորագրեց մի համաձայնագիր, որը Մոսկվայի պայմանագրից ոչ պակաս խայտառակ ու հակահայկական է:

Եթե Մոսկվայի պայմանագրի դեպքում ասում ենք, որ այն կնքվեց Հայաստանի օրինական կառավարիչը չհամարվող և թաթարական (ժամանակակից եզրույթով ադրբեջանական) ծագում ունեցող Լենինի ու թուրք Քեմալի միջև, ապա 2020 թ. նոյեմբերի 9-ի Մոսկվայի համաձայնագիրը ստորագրողը Հայաստանի ղեկավարն է, որը սակայն, վերազանցել է իր լիազորությունները և նման փաստաթուղթ ստորագրելու, ինչպես նաև 2022 թ. Պրահայում Արցախը Ադրբեջանի տարածք ճանաչելու ժամանակ չի առաջնորդվել ՀՀ Սահմանադրությամբ և չի անցկացրել համաժողովրդական հանրաքվե, ավելի՛ն, այն չի քննարկվել պետության գլխավոր ներկայացուցչական մարմնում՝ ԱԺ-ում մինչդեռ, ըստ ՀՀ Սահմանադրության, Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ...

Բացի այդ, այս դեպքում ևս, գործում է Վիեննայի կոնվենցիան, որովհետև փաստացի Նիկոլ Փաշինյանը Արցախի ժողովրդի ընտրված ներկայացուցիչը չէր և իրավունք չուներ Արցախի ժողովրդի անունից կամ նրա վերաբերյալ որևէ փաստաթուղթ ստորագրելու:

Փաստորեն, 1921 թ. մարտի 18-ի Մոսկվայի պայմանագրով Հայաստանը կորցրեց Կարսի մարզը, Սուրմալուի գավառն ու Նախիջևանը (շուրջ 27 972 քառ կմ), իսկ Մոսկվայի 2020 թ. նոյեմբերի 9-ի համաձայնագրով՝ ազատագրված Արցախի (որը փաստացի ինքնիշխան պետություն էր, և ուներ իր օրինական ընտրված ղեկավարները) 75%-ը իսկ 2022 թ. Պրահայում Նիկոլ Փաշինյանի կողմից Արցախը Ադրբեջանի տարածք ճանաչելուց և բազմիցս այդ մասին հայտարարելուց հետո՝ 2023 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին ամբողջ Արցախը՝ շուրջ 12,500 քառ կմ, այնուհետև նույն Փաշինյանը 2023 թ. հոկտեմբերին Գրանադայում «Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովի շրջանակում ԵՄ-ի, Գերմանիայի և Ֆրանսիայի հետ հանդիպմանը ստորագրել է փաստաթուղթ, որով Ադրբեջանի տարածքը ճանաչել է 86,6 հազար քառակուսի կիլոմետր՝ ներառյալ Արցախը»[10]- հատկանշական է, որ այդ փաստաթուղթը ստորագրել է մեկը, ով Արցախի Հանրապետության ժողովրդի կողմից չի ընտրվել և լիազորված չէր նրան ներկայացնելու: Ի դեպ, Գրանադայի հանդիպմանը Ալիևը չի մասնակցել և փաստաթուղթը չի ստորագրել:

Նույն փաստաթղթում նշված է. «Կողմերը հավատարիմ են մնում Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունների կարգավորմանն ուղղված բոլոր ջանքերին՝ հիմնված Հայաստանի (29800 քառ. կմ) և Ադրբեջանի (86.600 քառ. կմ) ինքնիշխանության, սահմանների անձեռնմխելիության և տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչման վրա»[11]- այսինքն՝ Ալիևը չի ստորագրել այն փաստաթղթի տակ, որտեղ Հայաստանի տարածքը նշված է 29,800 քառ կմ, Ադրբեջանինը՝ 86,600, իսկ Փաշինյանը Տավուշի գյուղերը հանձնելու նախօրյակին հայտարարեց, որ «ՀՀ տարածքի 29,800 ք/կմ-ն կլորացրած թիվ է, ճիշտը ուրիշ թիվ՝ 29,743 քկմ»[12]: Այլ կերպ ասած, հանուն ադրբեջանական շահերի Նիկոլ Փաշինյանը ևս մի քիչ կրճատեց ՀՀ տարածքը, ինչը նրա դեպքում անսպասելի չէ:

Ավելի՛ն, զարմանալի չի լինի, որ ասենք հաջորդ տարի (եթե իհարկե ընտրություններում կրկին վերարտադրվի) հայտարարի, որ ՀՀ տարածքը ասենք՝ 10 կամ 15 հազար քառ կմ է, իսկ 29,743-ը «կլորացրած թիվ է»:

Հայաստանի ապագա ղեկավարները, քաղաքական բարենպաստ իրավիճակի պայմաններում Մոսկվայի պայմանագրի Հայաստանին վերաբերող կետերի չեղարկմանը կարող են հասնել՝ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, բայց նախ և առաջ այսօր օրախնդիր անհրաժեշտություն է «մե-

ռօրյա Լենինի», հայ ժողովրդի հայրենիքի տարածքները Ադրբեջանին նվիրող՝ Նիկոլ Փաշինյանի ձեռքը բռնել, որպեսզի Հայաստան պետությունը և հայ ազգը գոյություն ունենան ու կարողանան հետագայում պայքարել Մոսկվայի անօրինական պայմանագրի չեղարկման և դրա հետևանքների վերացման համար, քանի դեռ Նիկոլի՝ Մոսկվայի պայմանագրի «սինդրոմը» չի վերածվել Բեռլինի պայմանագրի «սինդրոմի», և նա Հայաստանի Հանրապետության տարածքը չի հայտարարել «Թուրքիայի հայաբնակ մարզ»: Գաղափարական առումով, Փաշինյանի համար դժվար չէ այդ անելը, քանի որ դաժան ճակատագրի բերումով Հայաստանի ղեկավար դարձած անձը Քեմալից, Լենինից ու Էրդողանից (իհարկե երիտթուրքերին չհաշված) հետո հարյուրամյակի չորրորդ խոշոր պանթյուրքիստն է, և միանգամայն «բնական» է, որ նրա գաղափարական հենքը Մոսկվայի պայմանագիրն է (դեռևս), ոչ թե ասենք Սևրի պայմանագիրը:

Ինչ վերաբերում է հայությանը, որը միջազգայնորեն ճանաչված ՀՀ ավելի քան 70.000 քառ կմ տարածքից կորցրել է մոտավորապես 40,472 քառ/կմ-ը (Արցախի Հանրապետության տարածքը ներառյալ), ապա նա պետք է շատ լուրջ քննի իր պատմական սխալներն ու բացթողումները և մշակի ազգային ռազմավարություն՝ գոնե մինչև 1920 թ. թուրք-հայկական պատերազմը իր փաստացի տիրապետության տակ գտնված և միջազգայնորեն ՀՀ մաս ճանաչված տարածքները ՀՀ-ին վերադարձնելու վերաբերյալ: Հակառակը՝ կամ այս ուղղությամբ ոչինչ չանելը, կարող է բերել Հայաստանի մնացած վերջին այս հողակտորը ևս կորցնելուն, ուստի հերթական անգամ կրկնում ենք այն, ինչ գրում ենք մեր վերջին շրջանի գրեթե բոլոր հոդվածներում՝ հայությունը ունի միայն երկու ընտրություն ***վահանով կամ վահանի վրա:*** Այս սկզբունքը 135 տարի առաջ շատ պատկերավոր ձևակերպել են ՀՅԴ հիմնադիրները (որոնցից Քրիստափոր Միքայելյանի մահվան 120-րդ տարելիցը կլրանա 2025 թ. մարտի 17-ին)՝ **«Ազատություն կամ՝ մահ»,** և ճակատագրական այս օրերին հայ ազգն ինքը պետք է որոշի՝ մեռնու՞մ է՝ պարարտ հող դառնալով պանթյուրքիզմի ֆաշիստական գաղափարախոսության համար, թե՞ ի վերջո ազատություն է ձեռք բերում՝ վերատիրանալով իր կորսված հայրենիքին ու խլված իրավունքներին՝ փակելով Էրդողան-Ալիև-Փաշինյան պանթյուրքիստների ճամփան:

Ի լրումն նշենք, որ հոդվածում «ռուս-թուրքական պայմանագիր» եզրույթը չենք օգտագործել, որովհետև այն ստորագրող կառավարությունը Ռուսաստանի օրինական կառավարությունը չէր, և այդ կառավարության ղեկավար Լենինն էլ ազգությամբ ռուս չէր ու Մոսկվայի պայմանագրից ոչ պակաս խայտառակ մի պայմանագիր էլ ռուս ժողովրդի վզին փաթաթեց՝ 1918 թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում:

Ծանոթագրություններ

1. Մելքոնյան Ա., Ռուս-թուրքական «Եղբայրության և բարեկամության» պայմանագիրը, Դրօշակ., թիվ-3 (1637), մարտ 2020, էջ 36:
2. Սաֆրաստյան Ռ., Մուստաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ, Եր., 2019, էջ 64:
3. Конопка С.Р., Кавказ, Тифлис 1914, стр. 95.
4. Հակոբյան Ա., Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի (18-ի) պայմանագիրը հայ ժողովրդի ճակատագրում., Վէմ համահայկական հանդես, ԺԳ (ԺԹ) տարի թիվ 1(73)., հունվար-մարտ., 2021, էջ 30:
5. Завриев Д., К новейшей истории северо-восточных вилаетов Турци, Тбилиси, стр. 69-70.
6. ՀԱԱ, ֆ., 114, ց 2, գ 132, թ. 12, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 501:
7. Հակոբյան Ա., Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի (18-ի) պայմանագիրը հայ ժողովրդի ճակատագրում, Վէմ հունվար-մարտ, 2021, էջ 35-36:
8. Մելքոնյան Ա., Ռուս-թուրքական «Եղբայրության և բարեկամության» պայմանագիրը, Դրօշակ, թիվ-3 2020, էջ 37
9. Chen T.-C., The International Law of Recognition, London, 1951, էջ 138:
10. https://hayastan.news/am/post/10816:
11. Նույն տեղում:
12. https://tert.am/am/news/2024/03/12/nikol-pashinyan/4091842:

Օգտագործված գրականության ցանկ

ա) Գրականություն

1. Սաֆրաստյան Ռ., Մուստաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ, Եր., 2019:
2. ՀԱԱ, ֆ., 114, ց 2, գ 132, թ. 12, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.:
3. Завриев Д., К новейшей истории северо-восточных вилаетов Турци, Тбилиси., 1947.
4. Конопка С.Р., Кавказ, Тифлис, 1914.
5. Chen T.-C., The International Law of Recognition, London, 1951

բ) Մամուլի նյութեր

1. Հակոբյան Ա., Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի (18-ի) պայմանագիրը հայ ժողովրդի ճակատագրում, Վէմ համահայկական հանդես, ԺԳ (ԺԹ) տարի թիվ 1(73), հունվար-մարտ, 2021:
2. Մելքոնյան Ա., Ռուս-թուրքական «Եղբայրության և բարեկամության» պայմանագիրը, Դրօշակ, թիվ-3 (1637), մարտ 2020:

գ) Համացանցի նյութեր

1. https://hayastan.news/am/post/10816
2. https://tert.am/am/news/2024/03/12/nikol-pashinyan/4091842

44-օրյա պատերազմի արյունոտ դասերը (Մաս 4)

Սարգիս Սարգսյան
Մոսկվայի Վ. Արծրունու անվան Սևծովյան-Կասպիական տարածաշրջանի ինստիտուտի առաջատար գիտաշխատող

Սույն հոդվածի առաջին մասը (տե՛ս «Դրօշակ»ի 2024 թ., իններորդ համարը, սեպտեմբեր, 2024 թ., Սարգիս Սարգսյան 44-օրյա պատերազմի արյունոտ դասերը (Մաս 1) (էջ 20-31), հիմնականում նվիրված էր 2005-2020 թվականների միջև ընկած ժամանակահատվածում աշխարհի տարբեր երկրների հետ Հայաստանի և Ադրբեջանի ռազմաքաղաքական և ռազմատեխնիկական համագործակցությանը: Հոդվածի երկրորդ մասը (տե՛ս «Դրօշակ»ի 2024 թ., տասներորդ համարը, հոկտեմբեր 2024 թ., Սարգիս Սարգսյան 44-օրյա պատերազմի արյունոտ դասերը (Մաս 2) (էջ 10-22), նվիրված էր մարտական գործողությունների ընթացքին, կողմերի զինված ուժերի քանակին, մարտավարությանը, տեղադրությանը, ինչպես նաև պատերազմում Թուրքիայի ուղղակի ներգրավվածությանը: Հոդվածի երրորդ մասում (տե՛ս «Դրօշակ»ի 2024 թ., տասնմեկերորդ համարը, նոյեմբեր 2024 թ., Սարգիս Սարգսյան 44-օրյա պատերազմի արյունոտ դասերը (Մաս 3) (էջ 16-26), ներկայացել ենք այլազգի, հիմնականում արևմտյան ռազմական, անգլիալեզու մասնագետների տեսակետները: Նշենք, որ 44-օրյա պատերազմի թեմային անդրադարձել են լուրջ հետազոտական, ֆուտուրոլոգիական կենտրոններ տարբեր երկրներում, այդ թվում և՝ Ռուսաստանում: Այս մասում ներկայացնելու ենք ռուս ռազմաքաղաքական վերլուծաբանների տեսակետները 44-օրյա պատերազմի վերաբերյալ: Ներկայացվող նյութերը նաև ռուս վերլուծաբանների հետ հեղինակի առանձնազրույցների և հարցազրույցների հանրագումարն է:

Ղրիմի դաշնային համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների ամբիոնի դոցենտ Անատոլի Ֆիլատովը գտնում է, որ շատ փորձագետներ (տարբեր ոճերի ու որակների) ի սկզբանե կանխատեսեցին Ադրբեջանի անխուսափելի հաղթանակը: Այս սցենարի իրականացումը նշանակում էր և նշանակում է Ռուսաստանի (այսինքն՝ պատմական Ռուսաստանի և, բնականաբար, նրա ներկայիս քաղաքական արտահայտության՝ Ռուսաստանի Դաշնության) պարտությունը: Նման պարտությունը խարխլում է ոչ միայն ռուսական քաղաքակրթական կառուցվածքը, այլև ներկայիս քաղաքական ռեժիմի այսօրվա պատկերը: Այս համատեքստում Ռուսաստանը կորցնում է իր կենսական դիրքը քաղաքակրթական շինարարության և միջքաղաքակրթական առճակատման մեջ, որտեղ նրա ակնհայտ հակառակորդները եվրոպական, կամ, ավելի ճիշտ, այժմ, եվրաատլանտյան քաղաքակրթության պետություններն են՝ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան: Ռուսաստանին հակադրվում

է նաև Թուրքիան, որն այժմ փորձում է վերականգնել Մեժդուրեչենսկ-արաբական քաղաքակրթական մոդելը, վերարտադրող օսմանյան իշխանության նշաններն ու պարամետրերը: Այս սցենարով Ռուսաստանի Դաշնությունը կորցնում է այն, ինչ կորցրեց Վրաստանի հանձնման դեպքում, որն այժմ եվրաատլանտյան համակարգի հակառուսական գործիքն է: Միգուցե ժամանակակից Ռուսաստանի Դաշնությունը կարո՞ղ է դա իրեն թույլ տալ: Մեր իրավիճակում կարևոր է չթողնել, որ արդյունքում Հայաստանը պարտվի: Եվ եթե Ադրբեջանը գնա Թուրքիայից կապերի և կախվածության հետագա խորացման ճանապարհով, ապա Ռուսաստանը պարտավոր է ամեն ինչ անել , որպեսզի Ադրբեջանը կորցնի, այլ կերպ ասած՝ չլուծարվի Արցախը՝ որպես ֆորմալ անկախ պետություն և որպես Հայաստանի Հանրապետության դե ֆակտո մաս: Սա է քաղաքակրթական զարգացման և միջքաղաքակրթական դիմակայության տրամաբանությունը:

Այսպիսով, առաջին սցենարը մնում է այս կամ այն մոդիֆիկացիայի մեջ, գուցե նույնիսկ Արցախի կողմից որոշակի տարածքային զիջումներով, կամ կորստով:

Ո՞րն է ընդհանուր եզրակացությունը 2020 թվականի ղարաբաղյան պատերազմի վերլուծությունից: Ռուսաստանը և՛ որպես քաղաքակրթական կոնստրուկտ,

և՛ որպես ներկայիս քաղաքական նախագիծ՝ Ռուսաստանի Դաշնություն, չի կարող Արցախը հանձնել Ադրբեջանին, առաջին հերթին այն պատճառով, որ Ադրբեջանը խորը գործարքի մեջ է մտել Թուրքիայի հետ, որն իր բնույթով Ռուսաստանի քաղաքակրթական և աշխարհաքաղաքական հակառակորդն է: Անկասկած է, որ Անկարայի ներկայիս քաղաքական ռեժիմը բացահայտորեն փորձում է վերարտադրել Օսմանյան իշխանության չափանիշներն ու ուղենիշները:

Այժմ՝ հանգուցյալ, ռուս ազդեցիկ ռազմական բլոգեր Վլադլեն Տատարսկին (2023-ի ապրիլին դարձավ ահաբեկչության զոհ) ներկայացնում է, թե ով և ինչպես է աջակցել Ադրբեջանին: «Այսպիսով, տեսնենք, թե որ երկրներն են աջակցել Բաքվին Հայաստանի հետ ներկայիս բախումներում:

Թուրքիա. Ռազմական մատակարարումներ և դիվանագիտական աջակցություն: Թուրքիան Ադրբեջանին տրամադրել է ռազմական խորհրդատուների, օպերատորների և Բայրաքթարի նման թանկարժեք ԱԹՍ-ների բանակ:

Պակիստան. դիվանագիտական աջակցություն:

Բոսնիա և Հերցեգովինա. դիվանագիտական աջակցություն երկրի առաջատար իսլամական կուսակցության առաջնորդից (որի հայրը ժամանակին գլխավոր դեր է խաղացել Բոսնիայի պատերազմի բռնկման գործում: - Խոսքը հայր և որդի Իզեթբեգովիչների մասին է- հեղ.):

Աֆղանստան. դիվանագիտական աջակցություն:

Ուկրաինա. ռազմական մատակարարումներ և դիվանագիտական աջակցություն: Լուրեր էին պտտվում Ղարաբաղի մարտական պայմաններում ուկրաինական անօդաչու թռչող սարքերի օպերատորների վերապատրաստման մասին: Կարծում եմ՝ շուտով կիմանանք մանրամասները:

Քաթար. ԶԼՄ-ների աջակցություն, առաջին հերթին ազդեցիկ Al Jazeera-ից:

Վրաստան. փակ օդային տարածք ռուսական մատակարարումների համար, և փակ սահմաններ հայ կամավորների համար: Հետագա էսկալացիայի դեպքում, ինչպես հստակ ակնարկել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Սթոլթենբերգը, Վրաստանին արտերկրում գտնվող տերերի կողմից հանձնարարական կտրվեր լուծել Օսիայի և Աբխազիայի հարցը:

Իրաք. դիվանագիտական աջակցություն:

Իսրայել. ռազմական մատակարարումներ: Ադրբեջանն այժմ Իսրայելի գլխավոր գործընկերներից մեկն է: Երկու երկրների միջև իրականացվում է զգալի առևտուր և իսրայելական զենքի մատակարարումներ Բաքվին: Ըստ երևույթին, Բաքուն նաև ցատկահարթակ է Իսրայելի հետախուզական ծառայությունների համար Իրանի դեմ: Ամենայն հավանականությամբ, Ադրբեջանում իսրայելցիների հիմնական աջակիցները լեռնային հրեաներն են՝ ազդեցիկ համայնք և՛ այստեղ, և՛ այստեղ՝ Ռուսաստանում (լեռնային հրեաների մոսկովյան կլանը՝ Նիսանովներ, Իլիներ և այլն, շատ մեծ կշիռ և ազդեցություն ունի Մոսկվայի տնտեսության մեջ):

Սիրիա. դիվանագիտական և ռազմական աջակցություն սիրիական ընդդիմության կողմից: Բայց նույնիսկ այստեղ դա այնքան էլ պարզ չէ: «Rybar» տելեգրամյան ալիքն այդ օրերին գրեց. «Սեպտեմբերի 20-ին սոցիալական ցանցերում սկսեցին լուրեր շրջանառվել Սիրիայի թուրքամետ հատվածի ազգային բանակի զինյալների մոտալուտ ուղարկման մասին Անդրկովկաս»:

Թուրքիայի կողմից վերահսկվող տարածքներում վարձկանների հավաքագրման մեկնարկի մասին լուրերը շրջանառվեցին հայկական ԶԼՄ-ների հրապարակումներում, և նշվեց, թե սիրիացի զինյալներն արդեն Կովկասում են ու արդեն կորուստներ են կրում: Վարկածներից մեկի համաձայն՝ առաջին 150 մարդը սիրիական Աֆրինից գործուղվել է Ադանա քաղաքի թուրքական ավիաբազա, իսկ այնտեղից՝ Ադրբեջան: Նույն աղբյուրները պնդում էին, որ սիրիացիները տեղակայվել են ոչ թե Լեռնային Ղարաբաղում, այլ Կասպից ծովի ռազմակայաններում, որտեղ ադրբեջանական ստորաբաժանումների հետ միասին անցել են համակարգման և մարտական պատրաստության: Վերլուծաբան և Սիրիայում ԱՄՆ «Հատուկ վճռականություն» օպերացիայի նախկին խոսնակ Մզահեմ ալ-Սալումը՝ վկայակոչելով Լիբիայի հակամարտության վերաբերյալ իր իսկ աղբյուրները, պնդում էր, որ Թուրքիայի ազգային հետախուզական կազմակերպության (MIT) սպան, որը վերահսկում է սիրիացի զինյալների գործողությունները Լիբիայում՝ Աբու ալ-Ֆուրքանը, պետք է վերադառնա Սիրիա և փոխարինի իր գործընկեր Աբու Սահդին: Աբու ալ-Ֆուրքանի «լիբիական փորձը» վճռական դեր է խաղացել նրան Սիրիա վերադարձնելու որոշման մեջ՝ «ադրբեջանական գործի» հետագա վերահսկողության համար: Սիրիացիներին հավաքագրելիս առաջնահերթությունը տրվել է այն զինյալներին, ովքեր արդեն դրսևորել են իրենց Լիբիայում, ովքեր գիտեն, թե ինչպես պետք է կռվել, և որոնց հրամանատարները կարող են երաշխավորել նրանց մարտունակությունը»:

Համապարփակ եվրոպական և միջազգային հետազոտությունների կենտրոնի, Ազգային հետազոտական համալսարանի Տնտեսագիտության

բարձրագույն դպրոցի փորձագետ Վասիլի Կաշինը նկատում է, որ ռազմական հաշվեկշռի տեղեկատուների տվյալներն արտացոլում են կողմերի ռազմական ներուժի միայն մեկ բաղադրիչը, մինչդեռ ժամանակակից պատերազմի ամենակարևոր տարրը հետախուզական միջոցներն են: Փորձագետը վստահ է, որ դա էր Ադրբեջանի գլխավոր առավելությունը. «դուք կարող եք հավասարություն ունենալ հրետանու, ծանր ցամաքային տեխնիկայի, տանկերի քանակի հարցում, բայց պոտենցիալը որոշվում է ոչ թե հրացանների քանակով, այլ հետախուզության արդյունավետությամբ»: Բացի այդ, նա ավելացնում է, որ տվյալները չեն արտացոլում երկրին ժամանակակից զինամթերքի մատակարարումները. «դուք ունեք նույն համազարկային կրակի հրթիռային համակարգը (ՀԿՀՀ-MLRS), կամ սառը պատերազմի շրջանի զինտեխնիկան, բայց մի կողմն ունի ժամանակակից կառավարվող զինամթերք, իսկ մյուսը՝ ոչ»:

«Բայրաքթար TB2»-ի նման հարձակողական անօդաչու թռչող սարքերի դերն այս պատերազմում խիստ ուռճացված էր, վստահ է Կաշինը, քանի որ կորուստներ պատճառելու հիմնական միջոցը եղել է հրետանին, որին օգնել է հետախուզությունը: Հայաստանը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում առաջատար է տարածաշրջանում, և տեսականորեն պետք է ունենար արդյունավետ տեխնիկական և կիբեր հետախուզություն,- ասում է նա: «Ադրբեջանցիները, ըստ երևույթին, վախեցան դրանից և մեծ աշխատանք կատարեցին սոցիալական ցանցերի հետ (դրանք Ադրբեջանում արգելափակված էին ողջ հակամարտության ընթացքում) և կարգապահության պահպանման հարցում: Բայց հայերն ակնհայտորեն շատ քիչ պատկերացում ունեին ադրբեջանական ռազմական օբյեկտների գտնվելու վայրի մասին: Սա պարզ է, քանի որ նույնիսկ ծանր ՀԿՀՀ-ները, որոնք ունեին հայերը, չէին խոցում հակամարտության ողջ տարածքը»,- իր տեսակետն է բացատրում փորձագետը: Հայաստանն անարդյունավետ գործեց հակաօդային պաշտպանության ոլորտում: «Ամբողջ պաշտպանությունը ներկայացված էր որոշ մեկուսացված ֆորտիֆիկացիոն կառույցներով և, առավել ևս, հնացած տեսակի սարքավորումներով», - բացատրում է Կաշինը: Վիետնամի պատերազմից ի վեր հակաօդային պաշտպանության համակարգերի գոյատևման բանալին մշտական մանևրներն են, և կրակոցից անմիջապես հետո դիրքերից արագ հետ քաշվելը: Բայց, ըստ երևույթին, խնդիր կար նաև տնօրինելու այն սուղ ուժերը, որոնց տիրապետում էին հայերը: Ընդհանրապես, ինձ թվում է, նրանք առանձնապես չեն խորացել վերջին տասնամյակների զինված հակամարտությունների փորձի մեջ»:

Հասարակական գիտությունների մասին գիտական տեղեկատվության ինստիտուտի Միջին և Հետխորհրդային Արևելքի ամբիոնի կրտսեր գիտաշխատող, թուրքագետ Ռազիլ Գուզաերովը գտնում է, որ Ղարաբաղյան երկրորդ պատերազմը Թուրքիայի և Ադրբեջանի միջև խորացող հարաբերությունների ցուցադրությունն էր: «Բաքուն ոչ միայն լավ գովազդ արեց թուրքական ռազմարդյունաբերական համալիրի համար, այլև օգնեց ընդլայնել Անկարայի ազդեցությունը տարածաշրջանում: Հատկապես հետաքրքրական է այն, թե ինչպես է Անկարան ռազմական ոլորտի միջոցով մեծացնում իր ազդեցությունը «եղբայրական հանրապետության» վրա: Ադրբեջանական բանակը սկսել է թուրքական չափանիշներին անցնելու ակտիվ գործընթաց: 2022 թվականին թուրք գեներալ Բախտիար Էրսայը նշանակվել է Ադրբեջանի պաշտպանության նախարարի խորհրդական: Երկու բանակների ինտեգրման շարունակությունը դարձավ HAKİM օդային հրամանատարության և կառավարման համակարգի ստեղծման հայտարարությունը, որը միավորում է Թուրքիայի և Ադրբեջանի օդային տարածքի կառավարման համակարգերը: Թուրքիան սիստեմատիկ կերպով մեծացնում է իր ազդեցությունը ադրբեջանական բանակի վրա: Թուրք-ադրբեջանական համագործակցության փոխակերպումն ու զարգացումը հուշում են, որ պետությունները ձգտում են ստեղծել ռազմաքաղաքական միություն: Իհարկե, այս համատեքստում Մոսկվայի և Անկարայի շահերը կարող են չհամընկնել: Մեծացնելով իր ազդեցությունը Հարավային Կովկասում՝ Թուրքիան ավելի շատ հնարավորություններ կունենա համագործակցության/առճակատման նոր կետեր ստեղծելու տարածաշրջանային այլ խաղացողների հետ: Այս պահին Ռուսաստանը և Թուրքիան փոխգործակցում են ճգնաժամի կարգավորման շրջանակներում: Ղարաբաղում գործել է ռուս-թուրքական մոնիտորինգի կենտրոն: Հենց նման երկխոսությունը կօգնի ապահովել, որ Հարավային Կովկասը չդառնա կռվախնձոր երկրների միջև: Հաճախ ռուս-թուրքական համագործակցության/մրցակցության համատեքստում մենք ակտիվորեն չենք նշում Կենտրոնական Ասիան: Երբեմն ավելի մեծ ուշադրություն է դարձվում ԱՄՆ-ի, Եվրամիության և Չինաստանի ներթափանցմանը տարածաշրջան:

Այնուամենայնիվ, Անկարան չափազանց շահագրգռված է այս ռազմավարական կարևոր տարածաշրջանով, այդ թվում՝ ենթակառուցվածքային նախագծերի միջոցով: Սրան զուգահեռ, Թուրքիայի հետ ծայ-

ռահեղ սերտ հարաբերություններն Ալիևին դարձնում են մի քանի հակամարտությունների պատանդ»: Բացի Մերձավոր Արևելքից, որտեղ Անկարան իրեն ինչ-որ կերպ դրսևորեց, քիչ հայտնի դիմակայություն կա Միջերկրական ծովի շելֆի շուրջ Թուրքիայի և Ֆրանսիայի միջև: Այստեղից, ըստ ամենայնի, պարոն Փաշինյանի փորձերը՝ Ֆրանսիայում անվտանգության երաշխավոր փնտրելու: Այս ամբողջ քաղաքականությունը շարունակվելու է և հետագայում:

Ալիևը հասկանում է, որ Ադրբեջանի և տարածաշրջանի շուրջ ամեն ինչ չէ, որ պարզ է: Սկսենք նրանից, որ խաղաղության պայմանագիր կնքելիս Հայաստանը փորձում է օգտագործել միջնորդության տարբեր ձևաչափեր, այդ թվում՝ եվրոպական պետությունների մասնակցությամբ, իսկ Ադրբեջանը ձգտում է ապահովել, որ ամեն ինչ արվի առանց միջնորդների: Եվ այս առումով, հասկանալով, որ կարող է բախվել նաև միջազգային ճնշման, Ադրբեջանի ղեկավարը փորձում է նաև ավելի լեգիտիմացնել իրեն: Հայաստանի և Ադրբեջանի միջև շատ բարդ իրավիճակ է ստեղծվում: Ի վերջո, հարցերը հեռու են փակ լինելուց: Այո՛, Արցախի հարցը փակ է թվում, բայց այս ամենը նույնպես շատ պայմանական է, քանի որ մենք չգիտենք, թե ինչ կլինի Հայաստանում 10-15 տարի հետո: Կլինե՞ն այնտեղ ուժեր, որոնք կցանկանան վրեժ լուծել: Ո՞րն է լինելու այդ ուժերի ռեսուրսային բազան, ի՞նչ վիճակում է լինելու Հայաստանը մինչ այդ և այլն: Այժմ առաջանում է խաղաղության պայմանագրի և սահմանների հարցը: Ինչպես հասկանում ենք, այս սահմանները բավականին անորոշ են: Յուրաքանչյուր կողմն ունի իր պատկերացումները, թե ինչպես և որտեղով պետք է դրանք անցկացվեն: Բացի այդ, Ալիևը տարածաշրջանում բոլոր ճանապարհների ապաշրջափակման մասին կետը հասկանում է որպես «Զանգեզուրի միջանցքի» կառուցման հնարավորություն: Այսպիսով, առաջանում է հայ-ադրբեջանական նոր կարճատև պատերազմի հավանականությունը, որի կենտրոնը կլինի Հարավային Հայաստանը՝ Սյունիքի մարզը: Այս իրավիճակում Ալիևը ևս մեկ անգամ կցանկանա լեգիտիմանալ: Այլ ուղղություններով որևէ քայլ անելու համար Ալիևին այժմ առաջին հերթին անհրաժեշտ է փակել հայկական հարցը, այն էլ՝ իր պայմաններով: Նա շատ է ուզում դա լուծել ուժի իրավունքով և ուրիշ ոչինչ: Ռուսաստանի հետ կապված սա կլինի այն երկակի քաղաքականությունը, որն արդեն իսկ իրականացնում է Ալիևը շատ կոնկրետ ձևով: Մի կողմից՝ նա շատ բարեկամական է Մոսկվայի հետ, բայց մյուս կողմից՝ մենք արդեն գիտենք, որ Ալիևի ռեժիմի և Կիևի ռեժիմի միջև համագործակցության փաստեր կան, այդ թվում՝ զենքի որոշակի տեսակների մատակարարում: Իր ուրույն դիրքորոշումն այս հարցերում ունի Իրանը՝ իր 25-30 տոկոս ադրբեջանցի բնակչությամբ:

Սա, այսպես ասած, Իրանի կառավարության «սիրելի» ազգային փոքրամասնությունն է: Ադրբեջանցիները լուրջ դիրքեր են զբաղեցնում այնտեղի կառավարական ապարատում և բիզնեսում: Բայց իրանցիներն իսկապես չեն ցանկանում, որ իրենց ադրբեջանցիներն ակտիվորեն շփվեն հյուսիսի ադրբեջանցիների հետ, քանի որ վախենում են Բաքվի ազդեցությունից: Եթե հիշում եք, 2023 թվականը սկսվեց իրանա-ադրբեջանական հարաբերությունների կտրուկ վատթարացմամբ, որի պատճառը Իրանում Ադրբեջանի դեսպանատան դեմ իրականացված ահաբեկչությունն էր: Որոշ «առաջադեմ» փորձագետներ նույնիսկ ասում էին, որ եթե Ադրբեջանը հարձակվի Հայաստանի վրա, Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսն անմիջապես կպատասխանի, բայց իրականում դա տեղի չունեցավ: Արցախի հայաթափումը սահուն ընթացավ: Այնուամենայնիվ, Իրանի և Ադրբեջանի հարաբերությունները լարված են: Այն, որ այս լարվածությունը երբեմն փոխարինվում է ամենաբարձր մակարդակով ինչ-որ փոխադարձ հաճոյախոսություններով, էական ոչինչ չի նշանակում: Սրա վրա ուշադրություն դարձնելու կարիք չկա: Միանգամայն ակնհայտ է, որ Իրանն Ադրբեջանում ընկալվում է որպես առնվազն բարդ և անկանխատեսելի հարևան:

Ռուսաստանի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի Կովկասի բաժանմունքի առաջատար փորձագետ Կոնստանտին Տասիցը նկատում է, որ 44-օրյա պատերազմի թեմայով արդեն արվել են մեծ թվով թե՛ ռուսական, թե՛ արտասահմանյան հրապարակումներ: Դրանցից պետք է առանձնացնել «Փոթորիկ Կովկասում» գիրքը, որը պատրաստել են Ռազմավարությունների և տեխնոլոգիաների վերլուծության կենտրոնի (ЦАСТ) փորձագետները: Դեռևս 2018 թվականին հրապարակման հեղինակները «Սպասելով փոթորկին. Հարավային Կովկաս» իրենց աշխատության մեջ կանխատեսել էին իրադարձությունների նման ընթացք, մինչդեռ շատ քաղաքագետներ, նույնիսկ 2020 թվականի աշնանը զինված դիմակայության սկզբնական փուլում, չհավատացին «սառեցված» իրավիճակը փոխելու հավանականությանը, դիվանագետների հետևից կրկնելով այն մանտրան, որ «միջազգային հանրությունը դա թույլ չի տա», և որ «հակամարտությունը կարող է լուծվել միայն խաղաղ ճանապարհով»: Պետք է ասել, որ ղարաբաղյան պատերազմը պարարտ հող էր ստեղծում նման համապարփակ մոտեցման համար:

Հակամարտությունը հասկանալու համար այն պետք է դիտարկել լայն պատմական տեսանկյունից: Հակասությունների արմատները հասնում են հին ժամանակներից, երբ Հարավային Կովկասը կայսրությունների բախման, օտար նվաճումների օբյեկտի, ժողովուրդների վերաբնակեցման և զանգվածային գաղթի թատերաբեմ էր: Հռոմեացիներին և հույներին, որոնք հնում հակադրվել են պարսիկներին (Աքեմենյաններ, Պարթևներ, Սասանյաններ), միջնադարում և նոր ժամանակներում փոխարինել են Սեֆյան Իրանը, Օսմանյան և Ռուսական կայսրությունները: Տարբեր ժամանակներում գերիշխող էթնիկ և կրոնական խմբերի (հայեր և թուրքեր, քրիստոնյաներ և մահմեդականներ) ստեղծած մշակութային և պատմական ժառանգությունը հնարավորություն տվեց երկու կողմերին հավակնելու իրենց «բնօրրան» տարածքին: 20-րդ դարի սկզբին՝ Ռուսական կայսրության փլուզումից և Խորհրդային Միության կազմավորումից հետո, երբ Անդրկովկասում սկսեցին ստեղծվել ժամանակակից ազգային պետություններ, հայերի և ադրբեջանցիների միջև ձևավորվեց հակասությունների խճճված հանգույց, որը հանգեցրեց առաջին Արցախյան պատերազմին 1990-ական թթ: 21-րդ դարի 20-ականներին պարզվեց, որ Հայաստանը բավականաչափ պատրաստ չէ Ադրբեջանի հետ լայնամասշտաբ ռազմական հակամարտությանը: Երևանը պատշաճ ուշադրություն չդարձրեց 1990-ականներին կառուցված պաշտպանության հիմնական գծի ամրապնդմանը և հակաօդային պաշտպանության համակարգի արդիականացման համար անհրաժեշտ քանակությամբ հակաօդային սարքավորումներ ձեռք չբերեց՝ չնայած 2016 թվականի ապրիլին ռազմական բախումների բացասական փորձին: Իրավիճակը սրվեց վարչապետ Նիկոլ Փաշինյանի կառավարման սխալների, և սխալ հաշվարկների պատճառով, որոնք հանգեցրել են գործադիր իշխանության, այդ թվում՝ իրավապահ մարմինների աշխատանքի կազմալուծմանը: Գրքի հեղինակները վերլուծում են 2020 թվականի «աշնանային պատերազմի» հետևանքները միջազգային համատեքստում՝ գնահատելով Հարավային Կովկասում ուժերի աշխարհաքաղաքական հավասարակշռության փոփոխության հեռանկարները: Նրանց կարծիքով՝ խիստ կմեծանա Հայաստանի խոցելիությունը և կախվածությունն արտաքին խաղացողներից, առաջին հերթին՝ Ռուսաստանից: Ադրբեջանը հավասարակշռության է ձգտելու Մոսկվայի և Անկարայի հետ հարաբերություններում: Թուրքիայի միջամտությունը կմեծացնի նրա նշանակությունը ոչ միայն Կովկասում, այլև Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու հանրապետություններում տեղի ունեցող գործընթացներում: Տարածաշրջանում արևմտյան երկրների ազդեցությունը որոշակիորեն կնվազի, թեև նոր պայմաններում դրանք չպետք է հաշվարկից հանվեն: 44-օրյա պատերազմի հետևանքները Ռուսաստանի համար այնքան էլ պարզ չեն, որքան թվում է առաջին հայացքից: Ֆորմալ առումով Մոսկվան դարձավ ռազմական գործողությունների դադարեցման և հետկոնֆլիկտային կարգավորման գլխավոր միջնորդը (տրանսպորտային հաղորդակցությունների բացում և տնտեսական կապերի վերականգնում): Միաժամանակ, սակայն լրջորեն տուժել են ռուսական ռազմաքաղաքական շահերը: Այն փաստը, որ «ռուս հաճախորդն ու դաշնակիցը պարզվեց, որ պարտվող է, իսկ թուրք դաշնակիցը համոզիչ հաղթանակ տարավ», կարող է հանգեցնել հետխորհրդային տարածքում ռուսական ազդեցության ընդհանուր անկման: Պատերազմի ելքը հարվածեց Ռուսաստանի իմիջին Հայաստանում, քանի որ հայ հասարակությունն ավելի մեծ աջակցություն էր սպասում Ռուսաստանից: Խաթարվեց ՀԱՊԿ-ի հեղինակությունը, որն իրեն ոչ մի կերպ չդրսևորեց, թեև զինված հակամարտության ընթացքում հարվածներ էին հասցվում, այդ թվում՝ Հայաստանի տարածքին: Ադրբեջանի օրինակը ոգեշնչեց Կիևի «բազեներին»՝ մղելով Դոնբասում նմանատիպ սցենար իրականացնելու գայթակղությանը:

Ռուսաստանի հրթիռային և հրետանային գիտությունների ակադեմիայի (RARAN) տեղեկատվական քաղաքականության գծով նախագահի տեղակալ, ռազմական գիտությունների դոկտոր Կոնստանտին Վալենտինովիչ Սիվկով

Ըստ էության Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի զինված ուժերի ընդհանուր ներուժը մոտավորապես հինգ անգամ զիջում էր Ադրբեջանի ընդհանուր ռազմական ներուժին: Ադրբեջանցիները ռազմական գործողություններ են սկսել երկու ուղղությամբ՝ հյուսիսարևմտյան և հարավարևելյան: Նման գերազանցությամբ նրանք կարողացան պատերազմի առաջին յոթ օրերի ընթացքում ընդամենը մի քանի կիլոմետր քայլել՝ հսկայական կորուստներով:

Լեռնաշղթայում ելնելով Լեռնային Ղարաբաղի պաշտպանության երկրորդ գծի դեմ՝ նրանք հասկացան, որ չեն կարող այսպես շարունակել առաջխաղացումը: Ուստի մեկ շաբաթ անց նրանք վերախմբավորեցին ուժերը՝ կենտրոնանալով հարավ-արևելյան մեկ ուղղությամբ: Այս ուղղությամբ ադրբեջանցիները կարողացան ուժերի 10-12 անգամ գերազանցություն ստեղծել: Մտածեք այս թվերի մասին՝ ունենալով

այսպիսի գերազանցություն՝ նրանք մեկ ամսվա ընթացքում 30-40 կմ տարածություն են հաղթահարել: Երբ նրանք ճեղքեցին բոլոր պաշտպանական գծերը և մտան օպերատիվ տարածք, շարունակեցին հանդիպել հայերի կատաղի դիմադրությանը: Հայերն ամեն գյուղ, ամեն կիրճ, ամեն արահետ դարձրել էին հենակետ... Նույնիսկ այս ցուցանիշներով պարզ է դառնում, որ ադրբեջանցիները հսկայական կորուստներ են կրել: Ըստ ՌԴ ԳՇ հետախուզության, ադրբեջանական բանակը մինչև 25000 անդառնալի սանիտարական կորուստ է տվել (զոհեր է ունեցել): Ադրբեջանական ռեսուրսները, մասնավորապես զինամթերքի պաշարները, հատկապես հրետանու համար, հիմնականում սպառվել էին:

ը: Համաձայնեք, սա մի սոսկալի տեռոր է մարդու և հասարակության կյանքում: Բանական մարդն այս իրադրության մեջ դառնում է կեղծ, իմպուլսիվ, շփոթված: Մեծ հայտնագործություններն արվել են մենության մեջ, ներքուստ խաղաղ վիճակներում, երբ այդ աղմուկը թեկուզ մի կարճ ժամանակով լռել է, և մարդը մենության մեջ գտել է իր կենտրոնացումը: Դրանք այն սքանչելի պահերն են, երբ էներգիան չի մսխվում զանազան անպետք բաներ հասկանալու կամ դրանց դեմ պայքարելու, դրանք հաղթահարելու վրա: Մենք մեզ չեն վատնում անմիտ և գրեթե ոչինչ չնշանակող պրոբլեմներ լուծելու վրա: Բավական է ուշադիր նայել մեր և մեր մտերիմների արարքներին, կտեսնենք, որ մարդը չի կարող ապրել առանց պրոբլեմների: Լուծիր մարդու մի պրոբլեմը, նա իսկույն կստեղծի ևս երեքը, այս երեքը հաղթահարելուց հետո ի հայտ կգա ևս տասը նմանատիպ խնդիր: Մի անեկդոտ կա այս մասին: Մի տարեց կին գալիս է բժշկի մոտ ու գանգատվում, թե արյան ճնշում ունի: Բժիշկը նրան դեղեր է նշանակում, սակայն մի քանի օրից նա կրկին գալիս է բժշկի մոտ, հիմա էլ գանգատվելով գլխացավերից, իսկ մեկ-երկու օրից հետո՝ ստամոքսի խանգարումներից և այսպես շարունակ: Բժիշկը հոգնում է տիկնոջ այս անմիտ այցերից և հրաժարվում է նրան «բուժել»: «Չհասկացա, ձեզ թվում է միայն դուք եք բժիշկ, կգնամ մեկ ուրիշի մոտ», - ըմբոստանում է «հիվանդ» տիկինը: Սա նշանակում է, որ մենք ասես մեզ դատարկ ենք զգում առանց պրբլեմների, մարդիկ նույնիսկ պատրաստ են լինելու դժբախտ, միայն թե իրենց կյանքից պրոբլեմները չանհետանան: Առանց պրոբլեմի մարդը հայտնվում է խուճապի մեջ, խեղճանում, պրոբլեմը մարդկային էգոյի սնունդն է, նրա թթվածինը: Իբրև թե լուծելով կամ հաղթահարելով այս կամ այն պրոբլեմը, մարդն իրեն զգում է նշանակալից և ուժեղ: Սա մարդու բնույթին հարազատ բան է, և իր ուժեղ արտահայտությունը գտավ ամերիկյան լիբերալ գաղափարախոսության մեջ: Ըստ վերջինիս՝ կայացած է համարվում այն մարդը, ով կարողանում է լուրջ պրոբլեմներ լուծել: Արևելքում մոտեցումը տրամագծորեն հակառակն է՝ հատկապես միստիկների ընկալմամբ՝ պետք է ոչ թե պրբլեմները լուծել, որոնք վերջ չունեն, այլ բուժել պրոբլեմ **ՍՏԵՂԾՈՂԻՆ,** մարդուն, կարգի բերել նրա ներքին կառույցը, հոգևոր ինժեներիան: Գալով մեր բուն խնդրին՝ նշենք հետևյալը. պրոբլեմներ ստեղծելու օգնությամբ քաղաքական գործընթացներ կառավարելը դարձել է հուժկու զենք՝ քաղաքական կենտրոնների համար: Այս տեխնոլոգիաները թշնամական երկրների կողմից ներմուծվել են նաև Հայաստան և կիրառվում են մեծ հաջողությամբ: Շատերին կարող է խիստ տարակուսելի թվալ, թե ինչու հենց հիմա, այս խիստ անբարենպաստ իրադրության մեջ ստահակները սկսեցին նորանոր սոցիալ-տնտեսական պրոբլեմների տարափ տեղալ հասարակության գլխին: Անգլոսաքսոնական քաղտեխնոլոգիական փորձված միջոցները հասցեագրված են պարզունակ, հեշտ մանիպուլացվող զանգվածներին, նրանց հիմարացնելուն: Հրապարակ հա-

նելով կենցաղային կամ նույնիսկ կենսական պրոբլեմը, մարդկանց փորձում են շեղել պետության առջև ծառացած և գոյաբանական սպառնալիքներից: Սրա մշակողները լավ գիտեն, որ երբ մեծ խնդիրը տրոհվում ու ջլատվում է, հասարակությունը, ինչպես նաև՝ լրատվամիջոցները, անմտորեն, սկյուռիկի պես, ասես կաղին ծամելով, այս ու այն կողմ են ցատկոտում: Այստեղ է գլխավոր հնարքը. քիչ թե շատ խելամիտ մարդիկ չեն կարող դեմ լինել օգտակար բարեփոխումներին, որոնց պահանջն իրոք կա՛: Բայց ներկա մանիպուլյատորների բարեփոխումներն արվում են այնքան անմտորեն, անհաշվարկ, որ վերածվում են հակասությունների կծիկների: Արդյունավետ բարեփոխումը, որն առաջընթացի անբաժան մասն է, չպետք է երկիրը հասցնի նոր աղետների դուռը, մարդկանց գցի ջղաձգումների մեջ: Այն շատ նման է սիմֆոնիայի, որտեղ ամեն մի գործիք, նոտա, ամեն ինչյուն և ելևէջ, իր տեղն ու նշանակությունն ունի: Այս դրվագը ինձ պատմել է նախագահ Ռոբերտ Քոչարյանի կաբինետի նախարարներից մեկը, «**Այդ օրերին կառավարությունը՝ նախագահ Քոչարյանի ուղիղ հսկողության ներքո, հաճախ էր լինում Աղետի գոտում, հետևում բնակարանաշինության ընթացքին: Գյումրիում նախագահը կանգ առավ մի երկհարկանի տան մոտ և սկսեց ուշադիր նայել, և ապա՝ հետաքրքրվեց, թե ում տունն է: Արագ գտան տանտիրոջը: Վաթսունն անց, ողջ կյանքում շինարարության մեջ աշխատած ազնիվ մարդ էր, անցել էր թոշակի և սեփական ձեռքերով կառուցել էր իր տունը: Նա պարծենալով ասաց, թե հատկապես ինչով է առանձնանում իր տունը: «Եթե հնարավոր լինի վերամբարձ կռունկով ծխնելույզից բարձրացնել տունը, - ասաց նա,- ապա նրա որևէ մաս չի պոկվի մյուս մասերից: Հիմքը, այուները, տանիքը, բազրիքները, պատշգամբները, դռներն ու պատուհանները, աստիճանները, կից շինությունները և այլն, առանց քանդվելու ու վնասվելու, ամբողջությամբ վեր կբարձրանան, քանի որ ամեն բան միաձույլ է, ճիշտ է հաշվարկված և որակով կառուցված»:** Սա լսելով, Քոչարյանն իրեն բնորոշ սուր հայացքով շուռ եկավ նախարարների կողմը ու ասաց՝ «**սա միայն տուն չի, սա լավ պետության մոդել է, խելամիտ ռեֆորմների լավագույն օրինակ»:** Իսկ այժմ «բարեփոխումները» դեռ չսկսած, հանրությունը տագնապների ու ցնցումների մեջ է: Նախագահի խոսքերը վկայում են, թե ինչքան հեռու են այս մարդուկները բարեփոխումներ իրականացնելուց, և պատահական չէ, որ ինչին էլ ձեռք են տալիս, միանգամից ապականվում է: Եթե սխալ եմ, նշեք գոնե մի չտապալված ոլորտ: Միշտ այսպես է լինում, երբ գործը ձեռնարկում են տգետ ու այլասերված մարդիկ: Կեղծիքը և անհեթեթությունները, ինչպես ասացինք, տրոհում և քայքայում են կենտրոնացման ձգտող հասարակական էներգիան: Պարզից էլ պարզ է, որ երբ հասարակությունը գիտի ինչ անել, տեղնուտեղը զուլալվում է: Մյուս հարցը՝ ինչպես պետք է դա անել: Ու, միամիտ չլինենք, չպատճառաբանված պրոբլեմակոյտերը բարեփոխումների անվան տակ ժողովրդի գլխին լցնելու երևույթի թիկունքում վստահաբար կա մեկ այլ, առավել նենգ մտադրություն՝ երկիրը ներքաշել քաոսի մեջ և, անհրաժեշտության դեպքում՝ բացել դարպասները թշնամու առաջ: Դա արվեց Արցախում և ինչո՞ւ պիտի չարվի նաև Հայաստանում: Ի վերջո, Նիկոլի մեծագույն «նվաճումներից» մեկը իր նման՝ մինչև վերջ ծախու մարդկանց ներգրավումն է իշխանական համակարգ, որպեսզի հնարավոր լինի իրականություն դարձնել ցանկացած այլանդակ գործ: Սա, իրոք, ֆենոմենալ բան է՝ նա հաջողել է իր շուրջը հավաքել իր նման մարդուկների: Նույնիսկ հին գվարդիայի որոշ ծախու գործիչներ չդիմացան նորաթուխ քպ-ականների հետ մրցավազքին: Այս ամենի մասին շատ է խոսվել, հետևաբար ժամանակ և բառեր չվատնենք ակնհայտը ապացուցելու համար: Հիմա մենք գործ ունենք մարդկանց ներքին շփոթի հետ, որը ևս վտանգավոր է: Առաջին հերթին կենտրոնացումից զուրկ մարդը շատ հեշտ տրվում է մանիպուլյացիաների: Նա նման է հոսանքի անջատիչին, որին ցանկացած պահի կարելի է միացնել ու անջատել: Ուզո՞ւմ ես, որ մարդն իրեն վեհ ու վսեմ զգա, գովիր ու փառաբանիր, իսկ եթե պետք է, որ նա իրեն համարի ոչնչություն՝ փնովիր: Օրինակ, երբ Նիկոլ ստախոսը սկսում է իր բարբաջանքները, նա լավ էլ գիտի դրանցից սպասվող արձագանքների մասին: Դա նրան ապահովում է մանիպուլյատիվ դաշտ, որտեղ անհեթեթ մտքերը գոլֆի գնդակների պես այս ու այն կողմ են գլորվում՝ իրենց հետևից տանելով բազմաթիվ մարդկանց ուշադրությունը: Մեկ այլ

իրադրության մեջ կարելի էր արհամարհել դրանք, և մանիպուլյատորը տեղում կոչնչանար, բայց մենք գործ ունենք քաղաքականության հետ, որտեղ ասված ամեն խոսք լսում է նաև թշնամին, լսում և օգտագործում է մեր ազգի ու պետության դեմ: Չէ՞ որ սա էլ տեսանք: Մտովի, պայմանաբար ընտրենք տաս-քսան հայ մարդու և նրանց միայն մեկ հարց տանք, թե ի՞նչ են նրանք ուզում, ու խնդրենք, որ լինեն անկեղծ: Նրանց կեսը կասի, որ ուզում է բարձր աշխատավարձ, մի քանիսը կասեն՝ թե լավ կլիներ, եթե շահութաբեր բիզնես ունենային, կլինեն նաև այնպիսիները, որոնք շքեղ մեքենա և առանձնատուն են տենչում, որպեսզի հարևաններն ու կոլեգաները նախանձից տրաքվեն: Հավանաբար մեկ երկուսն էլ կասեն, որ անվտանգ երկիր են ուզում, և միայն շատ քչերը կնշեն, որ ուզում են ունենալ լավ պետություն, պետական կազմակերպված համակարգ: Սա ցավալի բան է, հենց այն է, ինչն անվանում են «**եզները սայլի առջևից կապել**»: Փաստորեն, սա ինքն իրեն անգիտակցաբար ոչնչացնելու հակված հասարակություն է: Ի՞նչ եք կարծում, շատ մի դժվար է Թուրքիայի կամ Ադրբեջանի համար, ասենք մի 100 կամ 50 միլիոն դոլար գցել Հայաստանի քաղաքական ու լրտեսական շուկա՝ սեփական դրածոյին պաշտպանելու, ոստիկանական պատժիչ համակարգը յուղած վիճակում պահելու և բռնաճնշումներն անվրեպ իրականացնելու համար: Բոլորովին էլ դժվար չէ: Սրան հակազդող որևէ անվտանգային համակարգ չկա, նույնիսկ, հակառակը, նպաստող ուժեր և օղակներ՝ ինչքան ուզեք: Կենտրոնացումից զուրկ մարդն անվերջ վիզը ծռում է տեսնելու, թե որտեղից է գալու փրկությունը: Հենց դա էր պատճառը, որ մարդկանց մի զանգված էլ սկսեց հավատալ Եվրամություն գնալու անմիտ պատրանքին: Ըստ մյուս առասպելի էլ՝ Ռուսաստանը ուր որ է գետնին կփռի Ուկրաինային և փութով կշտապի հայությանը օգնության: Ուռճացված ակնկալիքներ կան նաև Իրանից՝ հայկական Սյունիքն իր համար իբրև կարմիր գիծ ճանաչելու նրա պնդումներից: Թուրքական թշնամական օղակն ակամայից հային ստիպում է ապրել այս միֆերի գերության մեջ: Այսօրինակ պատրանքների մեջ ապրելը նույնիսկ անհեռատեսություն չէ, այլ հիմարություն: Կարող է չէ՞, իրավիճակն ավելի վատ ու օրհասական լինել: Հետևաբար, մենք ունենք միայն մեկ հուսալի հենարան, որը ոչ ոք չի կարող մեզնից խլել, դա մենք ենք, մեր ուժը և խոհեմությունը: Շատերն այդպես էլ չեն փորձում խորանալ ավելի լայն իմաստով «**խորքային պետություն**» հասկացության մեջ, դրանից հետևություններ անել, հասկանալ, որ լուրջ պետություն ունենալ, նշանակում է հույսը դնել ոչ թե անձերի ու լիդերների վրա, ոչ թե ապավինել դաշնակիցներին, այլ առաջինը հենվել սեփական ինստիտուտների, պետական օղակների հնարավորությունների վրա: Երբ ազգի հենվելու կետը պետությունն է, անհանգստանալու պատճառները քիչ են լինում, որովհետև մեկ մարդը, նույնիսկ հանճարեղ, չի կարող իմանալ և անել ավելին, քան պետական համակարգն իր դիվանագիտական, ռազմական, տնտեսական, ֆինանսական, կրթամշակութային օղակներով: Մեր պապերից եկած լավ խոսք կա՝ «**մի թռչունը չգիտի հարավի տեղը, իսկ թռչունների երամը գիտի**»: Ահա ճիշտ այսպես էլ հասարակությունը՝ ոլորտների փորձառու իր մասնագետներով դառնալով այդ «թռչունների երամը», գիտի որտեղ է հարավը, որոնք են ճիշտ ելքերը: «Ո՞րն է ելքը» հարցը հաճախ կեղծիքների և մտավարժանքների տեղիք է տալիս: Սա նույնն է, երբ, ասենք, տունն այրվում է, իսկ ոմանք զբաղված են կրակը մարելու «ստրատեգիա և տակտիկա» մշակելով և դրանց շուրջ բանավիճելով: Իր ազգային շահերը լավ չգիտակցող հասարակությունը թույլ է, խեղճ ու մոլորված, այն իրեն բաշխում է ամենուրեք, կորցնում ներքին էներգիան և շփոթում կարևորի և անկարևորի, առաջնայինի ու երկրորդականի տեղերը, կորցնում է իր մարտունակ կարողությունները, իր կենտրոնացումը: Սա այն է, ինչի մեջ մենք դեռ ապրում ենք, սա այն է, ինչը հանգեցնում է կոլեկտիվ անպատասխանատվության: Այս անպատասխանատվությունը սկսեց իր ավերները, երբ հնարավոր եղավ Հայաստան ներմուծել և ներդնել «նիկոլախտը»: Իսկ այս համաճարակին վերջ կդրվի համախմբվելու ճանապարհով: Մի բժիշկը, նույնիսկ հանճարեղ, միայնակ չի կարող ժանտախտի դեմն առնել: Առակի առյուծը մոնչաց, երբ գիտակցեց, որ ինքը ոչխար չէ, ընկալեց իր առյուծ լինելը, իր ուժը: Հակված ենք հավատալու, որ այս գարնանը վերջապես կլսենք «**հայկական առյուծի**» մոնչոցը:

Հայաստանի Հանրապետությունը Վրաց-Ադրբեջանա-Թուրքական ռազմապաշտպանական համադաշնության համատեքստում 1918-1920 թթ.

Վանիկ Հրանտի Վիրաբյան
Պատմ. գիտ. դոկտոր, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր

Առաջին աշխարհամարտի վերջում՝ 1917-1918 թթ., Գերմանիային և Թուրքիային տարածքային զիջումները բոլշևիկյան կառավարության համար ունեցան որոշակի հետևանքներ: Վ. Լենինը իր չարաղետ դերը խաղաց դրանում, սակայն իրավիճակը փոխվեց 1919-1920 թթ. սահմանագծին և դրանից հետո, երբ հաղթանակած բոլշևիզմին և աստիճանաբար երկրորդ պլան մղված Վ. Լենինին փոխարինելու եկավ Ի. Ստալինը: Վերջինիս առջև կարևորագույն պատմաքաղաքական խնդիր դրվեց՝ չեզոքացնել գերմանական լրտես Վ. Ի. Լենինի գլխավորությամբ իրագործված Հոկտեմբերյան ավերիչ հեղաշրջման ծանրագույն հետևանքները, որոնց հետևանքով ի չիք էին դարձել Առաջին համաշխարհային պատերազմում ռուսական հաղթարշավի պտուղները՝ այդ թվում՝ Կովկասում և Առաջավոր Ասիայում: Ռուսաստանը վերածվել էր երկրորդական երկրի, և «Իմպերիայի» վերականգնումը, թեկուզ բոլշևիկյան զգեստավորմամբ՝ դյուրին խնդիր չէր: Ի դեպ, կարելի է ասել, քիչ այլ ձևով նույնը կրկնվեց Գորբաչովյան տխրահռչակ վերակառուցման ժամանակ, երբ իրողություն դարձավ արևմտյան տերությունների պատվերով գերիզոր համարվող Խորհրդային Միության փլուզումը: Ռուսական իմպերիան ոչ միայն կազմալուծվեց ու մասնատվեց, այլև որոշակիորեն թուլացավ: Այն կրկին ոտքի են կանգնեցնում Վլ. Պուտինն ու նրա զինակիցները իսկ Հայաստանի Երրորդ Հանրապետությունն անմասն չէ այդ բարդ և խճողված գործընթացներից՝ դառնալով համաշխարհայնացման արդի հոլովույթի մասնակիցն ու զոհը: Կարծես թե պատմությունը կրկնվում է՝ միայն այլ նրբերանգներով և նոր աշխարհաքաղաքական վերաձևումներով:

1919-1920 թթ. սահմանագծին ակնհայտ դարձավ, որ բոլշևիկյան նոր Ռուսաստան է ասպարեզ գալիս «իմպերիական» հեռահար ծրագրերով: Արդեն 1920 թվականի աշնանը բոլշևիկյան Ռուսաստանը այլևս մտադրություններ չուներ հաշտվելու նախկինում թույլ տրված տարածքային կորուստների հետ և իր ռազմավարության առաջնահերթ խնդիրը համարում էր նոր ռուսական՝ բոլշևիկյան, կայսրության վերստեղծումը: Նրանում տեղ էր հատկացվում նաև Հայաստանին՝ որոշակի վերաբերմունքով:

Ակնհայտ էր ևս մեկ կարևոր ռազմաքաղաքական հանգամանք: Դեռևս 1918 թվականին, երբ թուրքական զորքերը սանձազերծեցին ագրեսիա դեպի Անդրկովկաս, Ադրբեջանն անվերապահորեն թեքվեց դեպի թուրքերը, իսկ Վրաստանը, որոշակի վերապահումներով հանդերձ, հակվեց դեպի ընդհանուր ճակատի ստեղծումը՝ ընդդեմ բոլշևիկյան Ռուսաստանի, և նրանք համատեղ ձգտեցին փոխշահավետ հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ: Այլ էր իրավիճակը Հայաստանի պարագայում, քանզի հայ քաղաքական-ռազմական շրջանակներում չկային ազդեցիկ ուժեր, որոնք ձգտեին հարաբերությունների սրմանը և վատթարացմանը Ռուսաստանի հետ՝ դա լիներ «Կարմիր», թե՝ Սպիտակ Ռուսաստան»: Հայաստանը որպես այլընտրանք Թուրքերի դիրքերի ուժեղացումն Անդրկովկասում դիտում էր ոչ միայն վտանգավոր, այլև մահացու իր գոյության համար[1]:

1918 թվականի հունիսի 4-ին Ադրբեջանը և Թուրքիան ստորագրեցին խաղաղության և բարեկամության պայմանագիր, որով Թուրքիան պարտավորվեց ռազմական օգնություն ցուցաբերել Ադրբեջանին նրա անվտանգությանը սպառնացող վտանգի դեպքում: Թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական «մերձեցումից» հետո երկու երկրների կառավարող շրջանակները կոնկրետ խնդիր դրեցին գրավել Բաքուն, որն այդ ժամանակ դեռ Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության մաս չէր կազմում, իսկ պետության մայրաքաղաքը Գյանջան էր (Գանձակը): Դեռևս 1918 թ. գարնանը Էնվերը մշակել էր Բաքուն գրավելու ծրագիր, որի համաձայն Նուրի փաշան պետք է Պարսկաստանով անցներ Այսրկովկաս և այնտեղ գործող Մուսավաթ կուսակցության ջոկատներից ու թուրք ռազմագերիներից ձևավորեր Կովկասի իսլամական բանակը և շարունակեր առաջխաղացումը դեպի Այսրկովկասի խորքերը: 1918 թվականի սեպտեմբերի 15-ին Ադրբեջանի ապագա մայրաքաղաք Բաքուն

«ազատագրվեց» Թուրքական և ադրբեջանական զորամասերի միջոցով[2]: Համաձայնագրի 4-րդ կետով Թուրքիան պետք է ռազմական օժանդակություն ցույց տար Ադրբեջանին (թեև առանց այդ համաձայնագրի էլ Նուրի փաշան իր բանակով անարգել գործունեություն էր ծավալում Ադրբեջանում), իսկ ԱԴՀ-ն պարտավորվում էր երկրից վտարել Թուրքիայի հետ պատերազմի մեջ գտնվող երկրների բոլոր սպաներին ու պաշտոնյաներին, ԱԴՀ սահմանամերձ տարածքներից՝ զինված ռազմական խմբավորումները: Պայմանագրի կնքումից անմիջապես հետո ադրբեջանական բանակն ակտիվորեն սկսեց համալրվել թուրքական արտադրության զենք-զինամթերքով, համազգեստով, սպաներով, իսկ Գյանջայում թուրքերի օժանդակությամբ բացվեց սպայական դպրոց, որտեղ սկսեցին դասավանդել թուրք հրահանգիչներ, սովորեցնելով ռազմական գործ, զենքին տիրապետելու ունակություններ[3]:

Այս պատմափուլում Օսմանյան կայսրությունը որոշիչ դեր խաղաց Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի սահմանների որոշման հարցը ուղղորդելու գործում: 1918 թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագրի համաձայն՝ Թուրքական հրամանատարության կողմից յուրաքանչյուր հանրապետության հետ առանձին կնքված պայմանագրով, նրանց սահմանները որոշվում էին միայն Օսմանյան կայսրության հետ ընդհանուր պայմանավորվածության համատեքստում: Մնում էր սահմանել ու հստակեցնել հանրապետությունների փոխադարձ սահմանները: Բաթումի պայմանագրի III հոդվածի համաձայն նախատեսվում էր, որ Ադրբեջանի և Հայաստանի միջև փոխադարձ սահմանները կհաստատվեն երկրների կողմից կնքված արձանագրությունների հիման վրա, որոնք կազմում էին այս համաձայնագրի մի մասը[4]: Բաթումում, սակայն, փոխադարձ սահմանների վերաբերյալ արձանագրություններ այդպես էլ չկնքվեցին: Միաժամանակ, ինչպես նշվել է 1918 թ. հունիսի 14-ին Թիֆլիսում Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչների հետ համատեղ հանդիպման ժամանակ արված հայտարարության մեջ, բանավոր համաձայնություն է ձեռք բերվում տարածքների սահմանազատման հարցի վերաբերյալ[5]: Նենգափոխելով պատմական իրողությունները և խեղաթյուրելով փաստերը՝ ադրբեջանցի պատմաբանները պնդում են, թե այն ժամանակվա Ադրբեջանի քաղաքական առաջնորդները դեմ չեն եղել, որ Երևանը Հայաստանի մայրաքաղաք հռչակվի, և իբր թե, ի պատասխան ադրբեջանական կողմի *«այս բարի կամքի ժեստի»*, Հայաստանը պատրաստակամություն է հայտնել հրաժարվելու Ելիզավետպոլի նահանգի մի մասից, այսինքն՝ Ղարաբաղի լեռնային մասի նկատմամբ իր հավակնություններից[6]:

Ադրբեջանցի իսկ պատմաբանների կողմից շրջանառված տվյալների համաձայն, 1918 թվականի հունիսի 21-ին Վրաստանի վարչապետ Ն. Ռամիշվիլին Մ. Յ. Ջաֆարովին առաջարկում է նախկին հարավկովկասյան կառավարության ունեցվածքը բաժանել Ադրբեջանի և Վրաստանի միջև: Վրացական կողմն առաջարկը հիմնավորում է նրանով, որ Հայաստանն

Նոյ Ռամիշվիլի

արդեն ստացել է իր մասնաբաժինը և այն տեղաբաշխել այն տարածքներում, որոնք, սակայն, անցել են օսմանյան վերահսկողությանը: Ըստ այդ տվյալների, նույն օրը Մ. Ջաֆարովը գաղտնի ծանուցում է ուղարկում Վրաստանի կառավարությանը՝ հարաբերությունները բարելավելու ձգտման վերաբերյալ, պատրաստակամություն հայտնելով ամրապնդել կապերն Ադրբեջանի հետ և փոխշահավետ համաձայնության գալ գույքի բաժանման վերաբերյալ առաջարկության հարցում[7]:

Իրականում Ադրբեջանի կառավարությունը փորձել է վերահսկողության տակ առնել տարածաշրջանային իրավիճակը՝ ագրեսիվ քայլերով հաստատվելով Շուշիում, Աղդամում և Կարյագինում, ու այնտեղ գտնվող մուսուլմանական զորամասերի թուրք սպաներին հրամանատարներ նշանակելով: Նրանք իրավազոր լիազորությունները չեն ունեցել և ճանաչված չեն եղել տեղի հայության և հայ ղեկավարների կողմից: Ինչպես նշում են հենց ադրբեջանական աղբյուրները, թուրքական զորքերի Շուշի մտնելու նախօրեին ադրբեջանական իշխանությունների կողմից պարտադրաբար այնտեղ են ուղարկվել հայերի և ադրբեջանցիների պատվիրակներ՝ բնակչությանը նախապատրաստելու թուրքական զորքերի առաջիկա մուտքին: Ինչպես գրում է «Ադրբեջան» թերթը 1918 թվականի հոկտեմբերի 19-ի համարում, քաղաքի մահմեդականները, իմանալով որ թուրքական զորքերը շուտով ժամանելու են, սկսել են հապճեպ նախապատրաստվել *«այսպես կոչված ազատագրողների»* հանդիսավոր հանդիպմանը, և Շուշիի մուտքի մոտ հաղթական կամարներ են կանգնեցվել Շահի կամրջի

վրա՝ շուկայի սկզբում՝ Մայդան տանող ճանապարհի վրա և շատ այլ վայրերում: Նույն հեղինակի համաձայն, Թուրքական զորքերը՝ Ջեմիլ Ջևադ բեյի գլխավորությամբ, 1918 թվականի հոկտեմբերի սկզբին մտնում են Շուշի: Քաղաքի տագնապած հայ ղեկավարներն անմիջապես հրավիրում են արտակարգ ժողով, որը միայն հինգերորդ օրն է որոշում ճանաչել Ադրբեջանի կողմից պարտադրված իշխանությունը[8]: Արդեն հասկանալի է, թե ինչ լարված մթնոլորտում է այդ ամենը տեղի ունեցել:

«Մշակ» թերթը 1918 թվականի հոկտեմբերի 22-ի համարում թուրքական բանակի մուտքը Շուշի քաղաք նկարագրել է այսպես. «Ջևադ բեյն առաջարկում է հայերին հանձնել զենքերը, հայերը հանձնում են մոտ 150 հրացան»[9]: Լարվածությունը Ղարաբաղում և այլուր չհանդարտվեց և մնաց մինչև թուրքական զորքերի հեռանալը, որից հետո շրջանի վերահսկողությունն անցավ 1918 թվականի նոյեմբերի երկրորդ կեսին Ադրբեջան ժամանած բրիտանական զորքերին, որոնք կարճ ժամանակում բացահայտ թուրքամետ-ադրբեջանամետ քաղաքականություն որդեգրեցին, նավթային շահը բարձր դասելով իրենց հավատարիմ դաշնակից Հայաստանի կենսական շահերից: Թեև Առաջին համաշխարհային պատերազմում գերմանա-թուրքական դաշինքի պարտության և 1918 թվականի նոյեմբերին Օսմանյան կայսրության պատերազմից դուրս գալու պատճառով թուրքական զորքերը ստիպված եղան առժամանակ լքել Դաղստանի և Հարավային Կովկասի տարածքը, սակայն ամենևին էլ չհրաժարվեցին իրենց նպատակադրումներից: 1918 թ. հոկտեմբերի 30-ին Թուրքիան ստորագրում է Մուդրոսի զինադադարը՝ պարտավորվելով դուրս բերել զորքերը Հարավային Կովկասից: Այն հայտարարվում է Մեծ Բրիտանիայի ազդեցության գոտի, սակայն թուրք-ադրբեջանական ուժերը շարունակում են խորքային խարդավանքները, և Ադրբեջանի (Արևելա-Կովկասյան մուսուլմանական հանրապետություն) և Հյուսիսային Կովկասի ազգային ուժերին աջակցելու համար Էնվեր փաշան թուրք սպաներ է նշանակում ադրբեջանական բանակում և Հյուսիսային Կովկասի Լեռնականների Հանրապետությունում՝ դրանք թողնելով Նուրի փաշայի տրամադրության տակ[10]:

Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության կառավարության արտաքին քաղաքականության հիմնական նպատակը դարձավ նպաստելը նորաստեղծ մուսուլմանական պետական կազմավորումների կայացմանը և նրանց միջև ռազմաքաղաքական դաշինքների ձևավորմանը: Ուստի նորաստեղծ Ադրբեջանի կառավարությունը ձևավորման պահից սկսեց ակտիվորեն վարել արտաքին նախաձեռնողական քաղաքականություն:

Միայն ազգամիջյան բախումները չէ, որ խոչընդոտում էին կովկասահայության բնականոն կյանքին և իրավիճակի կայունացմանը՝ Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում: 1918 թ. վերջին և ողջ 1919 թ. ընթացքում անդրկովկասյան թե՛ մուսուլմանական, և թե՛ քրիստոնյա պետական նոր կազմավորումները ներգրավվեցին գեներալ Ա. Դենիկինի՝ այդ ժամանակ Ռուսաստանի գրեթե ողջ հարավը և Հյուսիսային Կովկասը գրաված Կամավորական բանակի կողմից զինված ներխուժման վտանգի՝ Անտանտի դրսից ուղղորդվող միավորիչ գործողությունների դեմ: Դենիկինի զորքերը գրավեցին Կովկասի մերձսևծովյան ափեզրը, մինչև իսկ Սոչին, և միայն դաշնակիցների՝ անգլիացիների միջամտությունը հարկադրեց կամավորականներին կանգնելու Վրաստանի սահմանների մոտ: Դրանով բրիտանացիները խոչընդոտեցին դենիկինյան ռազմավարության իրականացմանը, չնայած միաժամանակ աջակցում էին Ա. Դենիկինին զենքով ու ռազմամթերքով՝ ընդդեմ բոլշևիկյան Կարմիր Ռուսաստանի: Դրանով նրանք ցանկանում էին հյուծել Ռուսաստանը՝ այն էապես թուլացնել ու անդամահատել իրենց կողմից խրախուսվող քաղաքացիական և այլ կռիվներով՝ այն վերածել երկրորդական տերության: Իրականում գեներալ Դենիկինի արշավանքի նպատակն էր նոր հիմքերի վրա վերականգնել Ռուսաստանը և Ռուսական կայսրության գերագույն իշխանությունը Անդրկովկասում, ինչի մասին գեներալն իր հուշերում գրել է. «Կովկասում պայքարի գլխավոր, կամ ավելի շուտ միակ պատճառը եղել է միասնական Ռուսաստանի և կովկասյան նոր կազմավորումների լիակատար անկախության գաղափարների միջև բախումը: Ողջ մնացածը ընդամենը եղել է միայն խոշոր կամ մանր, նշանակալից կամ ոչ նշանակալից շարժառիթ»[11]:

1918 թ. Ռուսաստանում ընթանում էին արյունահեղ քաղաքացիական կռիվներ, համառ պայքար՝ բոլշևիկների և սպիտակգվարդիականների միջև:

Ստեղծված բարդ և խճճված իրավիճակում Հայաստանի Հանրապետության քաղաքական առաջնորդները հարկադրված էին հաշվի նստել թե՛ մեկ, և թե՛ մյուս կողմի հետ՝ աշխատելով հասնել նրանց քաղաքական-դիվանագիտական ճանաչմանը: Որոշակի հանգամանքներում ակնկալելով նաև նրանց ռազմաքաղաքական աջակցությանը՝ մասնավորապես այդպիսի ակնկալիքներ ունենալով Դենիկինի Ռուսաստանից: 1918 թ. սեպտեմբերին գեներալ Ա. Դենիկինը փոխարինեց գեներալ Մ. Ալեքսեևին՝ ստանձնելով Կամավորական բանակի ղեկավարությունը: Ա. Դենիկինը ոչ միայն Դոնի և Կուբանի հացառատ երկրամասերի ողջ քաղաքացիական և ռազմաքաղաքական իշխանությունը կենտրոնացրեց իր ձեռքում, այլև իրականացրեց վերադասավորումներ հրամանատարության կազմում և փոփոխություններ մտցրեց զորքի ղեկավարման, ռազմավարական ծրագրերում: Ռուսաստանի Հարավի զինված ուժերի կենտրոնացումով գեներալ Դենիկինը ձեռնամուխ եղավ վճռական քայլերի՝ միավորելով բոլոր հակախորհրդային ուժերին: Ա. Դենիկինի գլխավորած զորքերի հրամանատարությանն առընթեր ստեղծվեց մի կարևոր կառույց՝ «Հատուկ խորհրդակցություն», որն ուներ քաղաքական-հետախուզական գործառնություններ և, ի դեմս Հայաստանում ռազմաքաղաքական շրջաններում հայտնի գնդապետ Մ. Ջինկևիչի և մի շարք այլ ռուս սպաների՝ Հայաստանի Հանրապետությունում ունեցավ իր ներկայացուցիչն ու

հենարանը: Վերջինս արդեն 1920 թ. կեսերին դարձավ Հարավի զինված ուժերի՝ Կամավորական բանակի զինվորական-քաղաքական ներկայացուցիչը ՀՀ-ում և բազմիցս աջակցեց հայկական կողմին զենքի ու զինամթերքի հայթայթման, ալյուրի և պարենի պաշարներ ստանալու հարցում, ունենալով հստակ բացասական-ժխտողական դիրքորոշում Ադրբեջանին տրամադրվող ռազմական աջակցության խնդրում:

Հայաստանի Հանրապետությունը Կամավորական բանակի կողմից դիտարկվում էր որպես բարեկամ պետաքաղաքական կազմավորում, այն դեպքում, երբ Վրաստանը և Ադրբեջանը ոչ բարեկամ, թշնամական կազմավորումների ցուցակում էին: Բացի այդ, Ա. Դենիկինը Վրաստանի հետ սահմանային-տարածքային հարցերում գտնվում էր պատերազմական իրավիճակում, և այդ հակամարտությունը առավել ցայտուն արտահայտվեց 1918 թ. վրաց-հայկական պատերազմի ժամանակահատվածում: Ոչ վաղ, քան 1918 թ., ինչպես փաստում է Ն. Սամխարաձեն, Վրաստանը բանակցություններ սկսեց Սպիտակ գեներալ Դենիկինի հետ՝ վերջինիս կողմից կազմված Կուբանի Հանրապետության և Վրաստանի սահմանները որոշելու համար: Կուբանի Հանրապետությունը պահանջում էր Սոչիի և Աբխազիայի շրջանը և նույնիսկ ռազմական գործողություններ էր ձեռնարկել Գագրան գրավելու համար, սակայն ետ վանվեց վրացական զորքերի կողմից, որոնք հսկողություն էին սահմանել Սոչիի շրջանի վրա և կանգնեցրել էին Դենիկինին: Վարվող բանակցությունները ձախողվեցին[12]: Այդ հարցում կարևոր դեր խաղացին Անտանտի ռազմաքաղաքական ներկայացուցիչները, որոնք աշխատում էին թույլ չտալ, որ Դենիկինը դուրս պրծնի իրենց ռազմավարական հաշվարկների շրջանակից՝ Դենիկինի համար գերխնդիր սահմանելով բոլշևիկյան Ռուսաստանի ջախջախումը: Այսպես թե այնպես, Վրաստանը և Ադրբեջանը, որոնք բարեկամական եզրեր ունեին միմյանց հետ, Ա.Դենիկինի Հարավի զինված ուժերի հետ գտնվում էին թշնամական հակադրության վիճակում:

Իրավիճակը լուրջ էր: Դենիկինի զորքերը գրավելով Հյուսիսային Կովկասը, կանգնեցին Ադրբեջանի և Վրաստանի սահմանագծին: Ըստ Մ. Բախտաձեի՝ Հայաստանի որդեգրած դիրքորոշումը, տվյալ իրավիճակում, ճիշտ չէր և անընդունելի էր հակաբոլշևիկյան-հակառուսական դիրքորոշում որդեգրած Վրաստանի և Ադրբեջանի համար: Իհարկե, ըստ Սամխարաձեի, Դենիկինն ուղղակի չէր սպառնում Հայաստանին: Սակայն Ն. Սամխարաձեն պնդում է, թե պետք չէր մեծ մարգարե լինել՝ կանխատեսելու համար, թե Հայաստանի ճակատագիրը Վրաստանի և Ադրբեջանի հնարավոր զավթումից հետո ինչ էր լինելու[13], ինչում նա սխալվում էր, քանզի հետագա պատմաընթացքը նման ապացույցներ չտվեց: Դեռ ավելին, ի պատասխան Վրաստանի և Ադրբեջանի միացյալ ընդհանուր ճակատի՝ գեներալ Ա. Դենիկինը տնտեսական բլոկադա հայտարարեց այդ երկու երկրներին, և իր 1919 թ. նոյեմբերի 19-ի № 171 հրամանում հայտարարագրեց հետևյալը. «Ես չեմ կարող թույլ տալ Վրաստանի և Ադրբեջանի ինքնակոչ կազմավորումներին,

Անտոն Դենիկին

որոնք առաջացել են ի վնաս Ռուսաստանյան պետության շահերի, և հանդիսանում են Ռուսական պետության բացահայտ թշնամի, ստանալ պարենամթերք բոլշևիկներից ազատագրված շրջաններից»[14]: Ֆ. Կազեմզադեն այդ առումով նշել է, թե Հայաստանի Հանրապետությունը շարունակեց մնալ Դենիկինի գործոն-սաթելիտը Հարավային Կովկասում[15]: Իսկ արդեն Ադրբեջանի արտգործնախարար Մ. Յու. Ջաֆարովը ելույթ ունենալով պառլամենտում նշել է. «Հայկական հանրապետության վերաբերմունքը ռազմական պաշտպանական կոնվենցիայի կնքման նկատմամբ քիչ այլ էր: Նրա կառավարությունը ենթադրում էր, որ մինչև անկախությունը՝ անհրաժեշտ է լուծել ընդհանուր պաշտպանության հարցը, անհրաժեշտ է առաջին հերթին պարզել տարածքային վեճերը և հարցերը… Հայկական պատգամավորների այդ վերաբերմունքը դրդեց Վրաստանին և Ադրբեջանին գնալու միմյանց հետ սեպարատ համաձայնության»[16]:

Ադրբեջանը, Ա. Դենիկինի տեսանկյունից կրոնական միավոր էր[17], որի ճանաչման խնդրում բացասական դիրքորոշում էր իշխում: Ա. Դենիկինի Կամավորական բանակի հզորացման մեջ թե՛ Վրաստանը, և թե՛ Ադրբեջանն իրենց սպառնացող վտանգ էին տեսնում: Ելնելով դրանից այս երկու երկրները քայլեր էին ձեռնարկում ընդդեմ Դենիկինի՝ ստեղծելու ռազմաքաղաքական պաշտպանական դաշինք, չնայած վերջիններիս հավաստիացրել են, որ իրենց գլխավոր թշնամին բոլշևիկյան Ռուսաստանն է: Իր հերթին, Հայաստանի Հանրապետությունը Ռուսաստանի հարավի զինված ուժերի հետ պահպանում էր հնարավորինս բարյացակամ ռազմաքաղաքական հարաբերություններ: Ի տարբերություն Հայաստանի Հանրապե-

տության հետ մշտապես տարածքային սահմանազատման հարցերում լարվածության մեջ գտնվող Ադրբեջանի և Վրաստանի՝ Ա. Դենիկինը ռազմական և պարենային-տնտեսական բնույթի աջակցություն էր ցուցաբերում Հայաստանի Հանրապետությանը: Ա. Դենիկինի գլխավորած հրամանատարությանն առընթեր ստեղծված «Հատուկ խորհրդակցությունը» ևս Հայաստան-Կամավորական բանակ հարաբերությունների կիզակետում էր: Բացի այդ, «Հատուկ խորհրդակցությանը» կից գործում էր ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Հովհաննես Սաղաթելյանը[18]:

Այդուհանդերձ, 1919 թ. հունիսի 16-ին Վրաստանի և Ադրբեջանի միջև ձևավորվեց ռազմաքաղաքական դաշինք, որի սուր նետերն անմիջականորեն ուղղված էին ընդդեմ Ա. Դենիկինի գլխավորած Կամավորական բանակի:

Հարաբերություններն ավելի զարգացան սպասելով գեներալ Դենիկինի ռուսական սպիտակ զորքերի հարձակմանը, երբ երկու երկրների արտաքին գործերի նախարարները 1919 թվականի հունիսի 16-ին Թբիլիսիում ստորագրեցին ադրբեջանա-վրացական փոխադարձ պաշտպանության պայմանագիր: Այդ համաձայնագրի կնքումից հետո զգալի քանակի զինամթերք և բանակային ճոքակոշիկներ տեղափոխվեցին Վրաստանից Ադրբեջան, մինչդեռ վերջինս վրացական բանակին մատակարարում էր հացահատիկ նավթ ու նավթամթերք[19], անգամ վրաց սպաներից շատերը ծառայության անցան ադրբեջանական բանակում:

Ռազմավարական դաշինքի ստեղծման գաղափարը ձևավորվել է դեռևս անկախության սկզբնական ժամանակաշրջանից: Այն հիմնված էր իբր թե «խաղաղության և կայունության նախաձեռնությունների և էքսպանսիոնիստական պատերազմների մերժման վրա», ինչի մասին այսօր պնդում են ադրբեջանցի պատմաբանները: Թեև 1918-1919 թվականներին Ադրբեջանն ու Վրաստանն էլ ունեին չլուծված տարածքային խնդիրներ, թեև նրանք երբեք չեն կռվել միմյանց հետ: Երկկողմանի խաղաղությունն ու կայունությունը խթանվել է միմյանց և օսմանցիների հետ խաղաղության համաձայնագրերի կնքմամբ: Նայելով երկու երկրների միջև պաշտպանական պայմանագրի բովանդակությանը, որին միանալու հրավեր էր ստացել նաև Հայաստանը, պարզ է դառնում, որ խաղաղ հարաբերություններ կառուցելը և տարածաշրջանն օտար ներխուժումներից պաշտպանելը քողարկիչ գործոններ էին երկու երկրների իրական ծրագրերի իրականացման համար: Դատելով ադրբեջանցի հեղինակների պնդումներից, այդպիսի մոտեցում դրսևորվեց նաև Ադրբեջանի խորհրդարանում 1919 թ. հունիսի 27-ին՝ Մամեդ Յուսիֆ Ջաֆարովի ունեցած ելույթում: Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Մամեդ Յուսիֆ Ջաֆարովը, խոսելով ադրբեջանա-վրացական պաշտպանական պայմանագիրը հետագա բարեփոխումների ենթարկելու մասին, ընդգծել է, որ Վրաստանն ու Ադրբեջանը կարող են կորցնել իրենց անկախությունը, բայց քանի որ նրանք ապրելու են հարևանությամբ ստորագրված համաձայնագիրը երկու կողմերի համար կարող է ունենալ մեծ արդյունավետություն և խոստումնալից լինել հարևան հանրապետությունների ապագայի համար: Դժգոհելով, թե Նիկոլայ II ցարի ժամանակ իրենք տեսան, որ կովկասյան ժողովուրդներն ի վիճակի չեն գոյակցելու, ու իրականում ուզում են ոչնչացնել միմյանց, համաձայնագիրը փաստում է, որ եթե Կովկասի ժողովուրդները վտանգների ենթարկվեն վատ իրավիճակներում, նրանք կարող են մի կողմ դնել իրենց ներքին խնդիրները և գոյակցել որպես հավասար կամ մահանալ[20]:

Ադրբեջանցի հեղինակները եզրակացնում են, որ նման քայլով, որն իրականացավ գրեթե մեկ դար առաջ՝ 1919 թվականի հունիսի 16-ին, Ադրբեջանը և Վրաստանը անկախության առաջին շրջանում կնքեցին մի համաձայնագիր, որով երկու երկրները պայմանավորվեցին արտաքին սպառնալիքներից փոխադարձ պաշտպանության մասին, մասնավորապես՝ գեներալ Անտոն Դենիկինի Սպիտակ գվարդիայից՝ Ռուսաստանի Հարավի զինված ուժերի կողմից սպառնացող վտանգից, որը, ըստ Ադրբեջանի պատմաբանների հայեցակարգի, իրական վտանգ էր ներկայացնում նորանկախ Ադրբեջանի և Վրաստանի կայացման համար: Թեև ըստ ադրբեջանցի հեղինակների, 1919 թ. համաձայնագրով նախատեսված համագործակցությունը այլ կերպ, այլ հիմքերի վրա էր կառուցված, այն նախատեսեց գործարկել Ադրբեջանի և Վրաստանի պաշտպանության նախարարությունների կոլեգիալ մարմին, որը ներառեց բարձրաստիճան զինվորական՝ մեկական ներկայացուցիչ Ադրբեջանից և Վրաստանից, որոնցից մեկը փոխադարձ համաձայնությամբ ստանձնում էր նախագահությունը: Ստեղծված Խորհուրդը վերահսկում էր հակառակորդի ռազմական գործողությունների վերաբերյալ հետախուզությունը՝ ծանոթանալով պաշտպանական պլանների մշակմանը, կառավարելով երկու բանակները մարտական պատրաստության մակարդակում և պլանավորում էր զորքերի տեղակայումը: Եզրահանգելով, ադրբեջանցի պատմաբանները կարծում են, որ, այսօրվա իրողությունների մեկնակետից, 1919 թ. կեսերին կնքված այս տեսակի պաշտպանական դաշնագրի փորձն ուսանելի է, մասնավորապես՝ համատեղ խորհրդի ստեղծման առումով, որ այն այսօր էլ կարող է օգտակար դասեր տալ[21]:

Ադրբեջանա-վրացական մերձեցման առաջին քայլերն արվել էին 1918 թվականի հունիսի 21-ին, երբ Վրաստանի վարչապետ Ն. Ռամիշվիլին Մ. Յ. Ջաֆարովին առաջարկել էր նախկին հարավկովկասյան կառավարության ունեցվածքը բաժանել Ադրբեջանի և Վրաստանի միջև, գրեթե շրջանցելով հայկական կողմին: Բնականաբար, փոխշահավետ այս կապերը հետագա դրսևորումներ ունեցան թե՛ 1919 թ. հունիսի 16-ի պայմանագրի կնքման ժամանակահատվածում, և թե այնուհետ:

Այս առումով բազմանշանակ է Վրաստանի արտաքին գործերի նախարար Եվգ. Գեգեչկորու ելույթը՝ հունիսի 22-ին պայմանագրի վավերացման առիթով հիմնադիր խորհրդարանի պատգամավորների հետ

հանդիպման ժամանակ. «Այս ամբիոնից կառավարության անունից ասվել է ավելին: Մեկ անգամ չէ, որ ասվել է, որ մեր ողջ գործունեության և միջազգային քաղաքականության հիմնական ուղղությունը, որի շուրջ պտտվում է մեր ողջ քաղաքական և վարչական էներգիան, բարիդրացիական հարաբերություններն են Անդրկովկասում ապրող ժողովուրդների հետ... Մեր նախաձեռնությամբ, մեր պնդմամբ ապրիլի 26-ին չորս ազգերի ներկայացուցիչներ հավաքվեցին համաժողովում (նկատի ունենալով Վրաստանի, Ադրբեջանի, Հայաստանի և Լեռնային Հանրապետության ներկայացուցիչներին: Վ.Վ.)... Սա այն ընդհանուր հիմքն է, որը միավորում է մեզ, և մենք պետք է ստեղծենք մի ամբողջություն հարևան ազգերի հետ միասին... Կովկասյան կոնֆերանսը չլուծեց այս հարցերից ոչ մեկը... Ես չեմ պատրաստվում վիճել հիմա, թե ով է մեղավոր դրա համար, անաչառ պատմությունն ի վերջո կասի, ով կամա թե ակամա միջամտեց այս հարցի լուծմանը, սա միայն առաջին քայլն է: Այստեղ միայն երկու ժողովուրդ է միավորվել ընդդեմ ընդհանուր թշնամու, այս պայմանագիրն ուղղված է միայն այս երկու հանրապետությունները և նրանց ժողովրդավարությունը ոչնչացնել ցանկացողների դեմ: Այս պայմանագիրն ուղղված է այն ուժի դեմ, որը կփորձի իր կամքը պարտադրել մեր ժողովուրդներին: Սա պաշտպանական ակտ է, և դա ակնհայտորեն երևում է: Այս դաշինքն ուղղված է արտաքին ուժերի դեմ, որոնք կցանկանան տապալել մեր հանրապետությունները, եթե որևէ մեկը ցանկանա օգտագործել մեր ընդհանուր իրավիճակի սրումը: Վրաստանի կառավարությունն օգտագործում է այս համաձայնագիրը միայն իր շահերը պաշտպանելու, ժողովրդին ցանկացած սպառնալիքից պաշտպանելու համար, անկախ նրանից, թե որտեղից է այն գալիս»[22]:

Այն, ինչ Վրաստանի արտգործնախարարը դիվանագիտորեն ընդգծեց և ուղղակիորեն չասաց, անմիջականորեն հստակ ասվեց ադրբեջանական մամուլում: Ահա թե ինչ է գրում «Ադրբեջան» թերթը. «Անդրկովկասյան ժողովրդավարության կյանքում նոր շրջան է սկսվում: Տարբերակումների ժամանակաշրջանն իր տեղը զիջում է դաշնություններին:

Այս պայմանագրի բովանդակությունից ընթերցողը կտեսնի, որ այս պայմանագրի նպատակը զուտ պաշտպանական է: Նման պայմանագրի անհրաժեշտությունը թելադրված է վերջին իրադարձություններով, երբ Դենիկինը սկսեց կտրուկ սպառնալ երկու հանրապետություններին: Եթե այս սպառնալիքի պայմաններում միայն երկու հանրապետությունները կարողացան միմյանց հասկանալ և պայքարի համար ընդհանուր լեզու գտնել, դա բացատրվում է նրանով, որ, առաջին հերթին, այս երկու ժողովուրդներն են ուղղակի սպառնալիքի տակ, և երկրորդը, որ չնայած որոշ թյուրիմացություններին, թուրքերի և վրացիների միջև միշտ ավելի շատ եղել է ավանդական բարեկամություն, քան ատելություն: Պայմանավորվող հանրապետությունները մեծ էներգիա են ծախսել, որպեսզի երրորդ անդրկովկասյան ազգը, ի դեմս Հայաստանի կառավարության, մասնակցեր այս միությանը: Ցանկությունը մնաց միայն ցանկություն: Պայմանագիրը կնքեցին Ադրբեջանի և Վրաստանի ներկայացուցիչները, ինչի համար մենք մեղավոր չենք: Այն, որ մենք չենք ցանկանում, որ Հայաստանը մեկուսացվի, վկայում է պայմանագրում ներառված կետը, որը Հայաստանին դեռևս հնարավորություն է տալիս անդամակցելու մեր միությանը: Այս պատմական փաստն ավելի թանկ է, քանի որ ամրապնդում է ավանդական բարեկամությունը և մշտական համագործակցությունը հարևան ժողովուրդների միջև»[23]:

Սակայն հենց ադրբեջանցի պատմաբանները խոստովանում են, որ թեև վրաց-ադրբեջանական պաշտպանական պայմանագիրը ստորագրվեց իրականում այն չաշխատեց: Ադրբեջանի հայտնի քաղաքական գործիչ Է. Ռասուլ-Զադեն այս կապակցությամբ պնդում է, որ, այդուհանդերձ. «ադրբեջանական ժողովուրդը եկել է այն մտքին, որ իր ազգային գոյության պաշտպանությունը Անկախ Համադաշնային Կովկասի քաղաքական համակցության մեջ է, որ դրանից դուրս իր համար փրկություն չկա, որ այդ սկզբունքը մասամբ է իրականացվել՝ վկայակոչելով Վրաստանի և Ադրբեջանի միջև կնքված ռազմապաշտպանական դաշինքը»[24]:

Այսպիսով, ըստ 1919 թ. հունիսի 16-ի պայմանագրի, որին հետագայում հաջորդեցին այլ փոխպայմանավորվածություններ ևս, կողմերը պարտավորվում էին բոլոր զինված ուժերով և միջոցներով համատեղ հանդես գալ ընդդեմ ամեն տեսակի հարձակման, ինչը հիշատակված հանրապետություններից որևիցե մեկի անկախությանը կամ տարածքային անձեռնմխելիությանը կարող էր սպառնալ: Վերապահում անելով, որ այն չի տարածվում սահմանավեճերի վրա, որոնք կարող էին ծագել անդրկովկասյան հանրապետությունների դեռևս չավարտված տարածքային սահմանազատման հետևանքով[25]: Այդ մասին «Кавказское слово»-ն արձագանքում է՝ հետևություն անելով, որ այն ուղղված չէր Հայաստանի դեմ: Կարծելով, որ սահմանային բախումները, որոնք կարող են ծագել անդրկովկասյան հանրապետությունների դեռևս չավարտված տարածքային սահմանազատման հողի վրա, թույլ չեն տալիս Հայաստանին կասկածելու ոչ բարյացակամության մեջ, և, ի վերջո, հայկական քաղաքական առաջնորդները, հասկանալով այդ մեկուսացվածության վնասակարությունը, լեռնականների հետ միասին կհարեն վրաց-ադրբեջանական դաշինքին: Հայաստանը աննպատակահարմար գտնելով վրաց-ադրբեջանական դաշնագրին հարելը և անմիջական անդամակցությունը, լավագույն ելքը համարեց չեզոքությունը, որպեսզի աղետներից բզկտված հայոց երկիրը հնարավորինս զերծ պահեր նոր արյունոտ բախումներից և աղետներից: Ինչպես հայտարարել էր Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանը 1919 թ. հուլիսի 5-ին Վրաստանի արտգործնախարարին ուղղված իր պաշտոնագրում, Հայաստանը «Վրաստանի հանրապետության և Կամավորական բանակի միջև նոր բախումների պայմաններում պահպանելու է ակտիվ չեզոքություն, որ ինչպես Վրաստանի և Հայաստանի, այնպես էլ

անդրովկասյան բոլոր քաղաքական կենցաղավարության և անդրկովկասյան բոլոր պետությունների տարածքային շահերին վերաբերող հարցերը չլուծվեն զենքի ուժով, այլ համաեվրոպական վեհաժողովի»[26]: Այնուամենայնիվ ներքին լարվածությունը անդրկովկասյան հանրապետությունների փոխհարաբերություններում մնաց առկախված վիճակում, վստահության մթնոլորտ գոյություն չուներ, յուրաքանչյուրը ներքուստ իր մոտեցումն ուներ:

Այս առումով բնութագրիչ է եղել 1919 թ. ապրիլ-մայիսին Թիֆլիսում ընթացած կոնֆերանսում Ն. Ռամիշվիլու ելույթը, որում բացահայտվել են վրացական կողմի նպատակադրումները և ռազմաքաղաքական շարժառիթները. «Դենիկինը կհարձակվի, քանզի դեռ չի հասել Վրաստանի հետ համաձայնության: Ես պետք է հայտարարեմ, որ մեր կողմից պաշտպանության համար անհրաժեշտ նախապատրաստություններն արդեն կատարված են, քանի որ պարզ է, որ խոսքը ոչ միայն սահմանավեճերի մասին է: Սոչիի ուղղությամբ գործողություններին զուգընթաց, Դենիկինը հարձակվել է լեռնականների վրա: Պարզ է՝ քանի որ Փարիզի կոնֆերանսում քննարկվում է Ռուսական հարցը, Դենիկինը ջանքեր է գործադրում Կովկասի և Անդրկովկասի զավթումով Փարիզի կոնֆերանսին կանգնեցնել կատարված փաստի առջև»: «Իմ կառավարությունը կարծում է, որ մենք պետք է ձգտենք պաշտպանել անկախությունը, այլապես մեր հետ կպատահի նույնը, ինչ և Գորսկի (Լեռնականների) հանրապետության հետ: Մենք ենթադրում ենք, որ ստեղծված իրավիճակի պայմաններում պետք է զենքը ձեռքներիս պաշտպանենք մեր անկախությունը և, հետևաբար, հավանություն տալով դեպի հյուսիսային սահմանները զորքերի առաջխաղացման իմաստով Ադրբեջանական կառավարության գործողություններին, հետագայում ևս մտադիր ենք բոլոր ուժերով աջակցել Ադրբեջանական կառավարությանը իր գործողություններում՝ ընդդեմ Կամավորական բանակի: Մենք հույս ունենք, որ Ադրբեջանը մեզ կաջակցի»[27]:

Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության Տեղեկատու բյուրոյի պետ Մելիք-Քարամյանը 1919 թ. հունիսի 29-ին ներկայացնում է այն տրամադրությունները, որ իշխում էին Թիֆլիսում՝ կապված ադրբեջանա-վրացական ռազմապաշտպանական դաշինքի հետ. «Սույն թվականի հունիսի 22-ի նիստում Վրաստանի Սահմանադիր ժողովը վավերացրեց Վրաստանի և Ադրբեջանի միջև կնքված զինվորական դաշնակցությունը: Վրացական մամուլը իր կառավարության այդ քայլը համարում է խոշոր պատմական մի ակտ, որն ամուր հիմքերի վրա է դնում Վրաստանի գոյությունը և անկախությունը: Այդ առթիվ մենշևիկների օրգան «Էրթօբա»-ն, բացատրելով այդ դաշնակցության իմաստը, իմիջիայլոց ասում է. «Այն ոչ ոքի դեմ չէ ուղղված, ոչ ոքի համար երկյուղ չի ներկայացնում և ոչ ոքի քունը չի կարող խանգարել»: Հետո, խոսելով Հայաստանի մասին, ասում է. «Նա (Հայաստանը- Վ.Վ.) միշտ խույս էր տալիս և այսօր էլ խույս է տալիս իր հարևանների հետ որևէ համաձայնության գալուց, բայց վրաստանի և Ադրբեջանի միջև կնքված դաշնագրության մտքերից մեկն էլ այն է, որ դաշնակցական կուսակցության զգվելի հատկությունները միշտ էլ հաջողություն չեն գտնում, և Հայաստանի կառավարությունը ստիպված կլինի կանգնելու պաշտպանողական քաղաքականության գծի վրա»: Այսպես ոչ ոքի դեմ չուղղված դաշնագրությունը ուղղված է միայն Հայաստանի դեմ և պետք է ստիպի նրա կառավարությանը հարելու այդ դաշնագրության[28]:

Եվ դեռ ավելին: Այդ նույն գրության մեջ բերվում է վրաց ազգայնական-քաղաքական մամուլի վերաբերմունքը: Ազգայնական մամուլը ավելի պարզ է արտահայտվում զինակցության իսկական դրդապատճառների մասին, նա Վրաստանի բախտը կապում է նրա «բարեկամ մահմեդականների և համիսլամական շարժման հետ»: Ահա թե ինչպես է պարզում դաշնագրության իսկական իմաստը ազգային դեմոկրատների «Կլդէ»-ն. «Մենք հաշվի ենք առնում այն կատաղի որոտը, որ լսվում է այսօր հեռավոր Ասիայից: Հնդկաստանը, Աֆղանստանը, Եգիպտոսն ու Պարսկաստանը կազդուրվում են, ամրապնդվում, կազմակերպվում և օգնություն խոստանում անարգված և Փարիզի կոնֆերանսի ձեռքով հաշմանդամ դարձած Թուրքիային», և քանի որ «Ասիան և մահմեդականները երկար դարերի ընթացքում պահպանել են Վրաստանի գոյությունը», ուստի և «Ռուսաստանի ստրկական լծից ազատված վրացիները հիշեցին իրենց բարեկամ մահմեդականներին, որոնք սպասում էին նրանց ձեռք մեկնած»: Այսպես վրաց ազգայնական քաղաքական շրջանակները Ադրբեջանի միջոցով համաիսլամական կողմնորոշում են հաստատում Վրաստանի համար:

Իհարկե, «Գրուզիա» և «Սաքարթվելօ» թերթերում կառավարության ներքին թշնամիներին սանձելու հաճախակի կոչերը (այսինքն հայերին -Վ.Վ.) սովորական երևույթներ են[29]:

Իսկ այդ իրավիճակում Վրաստանը և Ադրբեջանը բոլոր ջանքերը գործադրեցին, որպեսզի Հայաստանի Հանրապետությանը ևս ներքաշեն իրենց կողմից նախաձեռնած այդ գործընթացներում, որոնք ամենևին էլ չէին բխում Հայաստանի ռազմաքաղաքական շահերից: Հայկական կողմն ընդդեմ Ռուսաստանի չէր կարող հանդես գալ, թեկուզև դա Սպիտակ Ռուսաստանն էր[30]: Այն քաղաքական առումով ոչ մի կերպ դրական չէր ընկալվում հայկական քաղաքական-կուսակցական շրջանակներում: Պետք է նկատի առնել նաև այն կարևոր հանգամանքը, որ Ռուսաստանի հարավում ծվարել էին Եղեռնից մազապուրծ հազարավոր հայ գաղթականներ, որոնց աջակցության հարցին, առանց Կամավորական բանակի, հնարավոր չէր ընթացք տալ: Գտնվելով որոշակի բարյացակամ ռազմաքաղաքական հարաբերությունների մեջ Ռուսաստանի Հարավի զինված ուժերի և նրա ղեկավարության հետ՝ ՀՀ կառավարությունը ակնկալում էր լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝ ապահովել Դոնից և Կուբանից Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող հացահատիկային պաշարների, զենք ու զինամթերքի

և այլ ապրանքների ներկրումը Հայաստան: Հետևաբար, ստեղծված պարենային փակուղային ճգնաժամի իրավիճակում Հայաստանի Հանրապետությունը չէր կարող հրաժարվել իր համար որոշակի առումով շահավետ քաղաքական, տնտեսական և ռազմական հարաբերություններից Ա. Դենիկինի Կամավորական բանակի հետ և կուրորեն միանալ վրաց-ադրբեջանական ռազմական դաշինքին, որը կհանգեցներ Կովկասյան տարածաշրջանում և նրա շուրջ Հայաստանի Հանրապետության աշխարհաքաղաքական անցանկալի և վտանգալից մեկուսացմանը, կոմունար ռազմաքաղաքական անկանխատեսելի բացասական հետևանքներ: Առավելևս, որ բոլշևիկյան Ռուսաստանն էլ դեռ բավականաչափ հզոր չէր՝ ազդելու կովկասյան, և հատկապես հայաստանյան ռազմաքաղաքական իրողությունների վրա: Նա դեռ հեռու էր և դեռ թույլ՝ վճռապես ազդելու Կովկասում ընթացող իրադարձությունների վրա, ինչը պարզ դարձավ միայն 1920 թ. կեսերին և դրանից հետո: Այլապես ամենևին էլ չէր հրաժարվի դրանք իրագործելուց, ինչպես որ մշտապես ձգտել է անել, իսկ ՀՀ անտանտի դաշնակիցներն էլ առանձնակի ջանքեր չէին գործադրում զսպելու Հայաստանի ագրեսիվ հարևաններին: Ավելին, ՀՀ կառավարչապետ Հ. Օհանջանյանը այս կապակցությամբ այդ օրերին Թիֆլիսում ասերկբա հայտարարություն արեց առ այն, որ եթե հարկ լինի ընտրություն կատարելու թուրքերի և Դենիկինի միջև, ապա, իհարկե կնախընտրեն վերջինիս[31]:

1919 թ. սեպտեմբերի 26-ին Թիֆլիսի ՀՀ ներկայացուցիչը ԱԳ նախարարին հայտնում էր, թե մի գեներալից տեղեկացել է, որ Ադրբեջանի Զինվորական նախարարի օգնական և զորքերի հրամանատար, Ադրբեջանի Զինվորական նախարար գեներալ Սամեդ բեկ գեներալ Մեհմանդարովը Վրաստանի և Ադրբեջանի միջև կնքված պայմանագրի առիթով եկել է Թիֆլիս, և ասել, որ դժգոհ է Հայաստանի կառավարությունից, որն իր ճյուղավորումն ունի Ղարաբաղում, և աշխատում է այնտեղի ազգաբնակչությանը ապստամբեցնել Ադրբեջանի իշխանությունների դեմ, և եթե Հայաստանի կառավարությունը չդադարեցնի իր վնասակար գործունեությունը Ղարաբաղում, ինքն այնտեղ զորքեր կուղարկի[32]:

Դատելով իրադարձությունների զարգացման խորքային գործընթացներից՝ Խորհրդային Ռուսաստանն, անկախ իր վիճակից, ամենևին էլ չէր պատրաստվում մեկընդմիշտ Անդրկովկասը թողնել թե՛ թուրք-գերմանական, և թե՛ բրիտանա-ֆրանսիական տիրապետության ներքո: Դա ակնհայտորեն պարզորոշվեց 1920 թ. կեսերից հետո, երբ բոլշևիկյան Ռուսաստանը գահավիժելով Կովկասյան լեռներից, իջավ Անդրկովկաս և ուղղակի սպասեց հարմար առիթի՝ այն կրկին վերանվաճելու, ինչպես և վճռելու Հայաստանի նոր հեռանկարի հարցը: Իսկ դաշնակիցները, 1920 թ. գարնանից սկսած, իրենց ծրագրերի մեջ հետևողական և վճռական չէին ինչպես բոլշևիկյան Ռուսաստանի, այնպես էլ Ռուսաստանի հարավի իշխանությունների, ռազմաքաղաքական տարբեր կազմավորումների, այդ թվում նախկինում ցարական Ռուսաստանի կազմի մեջ գտնվող անկախացած հանրապետությունների, ինչպես նաև Թուրքիայի մասնատման հարցում:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն վստահ էր, որ Ա. Դենիկինի գլխավորած Կամավորական բանակը Հայաստանի նկատմամբ առանձնահատուկ, եթե ոչ ընդգծված բարեկամական վերաբերմունք ունի: Դենիկինը ոչ միայն բազմիցս համակրանքով էր արտահայտվել հայ ժողովրդի հասցեին, այլև նպաստել հայ սպաների, զենքի ու զինամթերքի տեղափոխմանը Հայաստան, որոնց կարիքը շատ էր զգացվում: ՀՀ–Կամավորական բանակ ռազմաքաղաքական հարաբերությունները, մասնավորապես 1918 թ. ընթացքում և վրաց-հայկական պատերազմի օրերին, որոշ չափով նպաստեցին ՀՀ կայունացմանը: Այդպիսի վերաբերմունքը ցայտուն երևում է գեներալ Ա. Դենիկինի մի ուշագրավ հրամանի բովանդակությունից. «Նկատի ունենալով ադրբեջանական իշխանությունների թշնամական վերաբերմունքը դեպի ռուս բանակը և նկատի ունենալով ադրբեջանական զորքերի դավադիր հարձակումը Հայաստանի հողերի վրա, հրամայում եմ ադրբեջանական զորքերի մեջ գտնվող ռուսական ծառայության բոլոր սպաներին հեռանալու նրանց շարքերից»[33]:

1919 թ. մարտի 10-ին Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությանն առընթեր ռազմական կցորդ գեներալ Հ. Քիշմիշյանը Զինվորական նախարարին ներկայացրած գաղտնի զեկուցագրում հայտնում էր, որ ինքը Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հանձնակատար Լ. Եվանգուլյանի և Ումիկյանի հետ միասին մեկնել է Բաթումի՝ «Կազակ» նավով բերված փամփուշտները, արկերը, հրետանային արկերը, ինչպես նաև բերված ֆրանսիական աերոպլաններն ընդունելու և դրանք Հայաստան տեղափոխելու համար: Ասվում էր, որ ժամանելով Բաթումի՝ իրենք ականջալուր են լինում անգլիական հրամանատարության հայտարարությանը, թե իբր իրենք իրավունք չունեն ինքնուրույնաբար թույլ տալու արտահանել փամփուշտները և արկերը: Չցանկանալով այդ գործի խոչընդոտողի դերում լինել՝ թույլտվություն ստանալու հարցումով դիմել են Կ. Պոլիս՝ գեներալ Ջ. Միլնին: Թիֆլիսում ՀՀ ռազմական կցորդ գեներալ Հ. Քիշմիշյանը տեղեկացնում էր, որ անգլիական հրամանատարության նման վերաբերմունքի պայմաններում ինքն ու Եվանգուլյանը փոխհամաձայնեցված վճիռ են կայացրել այդ բեռն ուղարկելու Փոթի, սակայն, կապված այն բանի հետ, որ շոգենավի անձնակազմը տրամադրված էր բոլշևիկաբար և սպառնացել էր բեռը ծովը նետել, իրենց կողմից վարձվել է երեք հոգանոց հատուկ պահակազոր, որը երկու կազակների հետ պետք է պահպաներ և հսկեր բեռը մինչև Փոթի հասնելը՝ որպես ուղեկցող ունենալով Կամավորական բանակի մի սպայի և պոդպորուչիկ Ումիկյանին, որը պետք է զբաղվեր բեռը Հայաստան ուղարկելու գործով: Անդրադառնալով աերոպլանների [օդանավ- Վ.Վ.] հարցին՝ գեներալ Քիշմիշյանը հայտնում էր, որ անգլիական հրամանատարությունը դարձյալ խոչընդոտներ է հարուցել դրանք Հայաստան տեղափոխելու ճանապարհին՝ կրկին պնդելով, թե պետք է դիմեն գե-

ներալ Ջ. Միլնին: Ասվում էր, որ հարցը հանգուցալուծելու նպատակով Եվանգուլյանի և Ումիկյանի հետ միասին տարվող բանակցությունները ոչ մի արդյունքի չեն հանգեցնում, որից ելնելով՝ նրանք խնդրանքով դիմում են ՀՀ զինվորական նախարարի աջակցությանը[34]:

1920 թ. մարտի 24-ին գեներալ Քիշմիշյանը ՀՀ Գլխավոր շտաբի պետին հայտնում է, որ փամփուշտներով բեռը և արկերը Բաթումիի անգլիական հրամանատարության կարգադրագրով նույնիսկ չի թույլատրվել բեռնաթափել նավահանգստում, իսկ «Կազակ» շոգենավն ուղարկվել է ռեյդի Փոթի, որտեղից էլ բեռները պետք է բարձվեին վագոններում՝ Հայաստան ուղարկելու համար[35]: Արդեն 1920 թ. մարտի 29-ին գեներալ Քիշմիշյանը Վրաստանի Ռազմական նախարարի օգնականին ուղղված պաշտոնագրում հայտնում է, որ համաձայն Ռազմական մինիստր Լորդկիպանիձեի և Եվանգուլյանի բանակցությունների՝ ինքը պատիվ ունի խնդրելու չմերժել գրավոր կարգադրությունը, որպեսզի Վրաստանի կառավարության կողմից խոչընդոտներ չհարուցվեն Վրաստանով տարանցման դեպքում[36]:

Այդ նույն օրերին, երբ ՀՀ-ի առջև խոչընդոտներ էին հարուցվում, 1920 թ. ապրիլի 1-ին Թիֆլիսում ՀՀ ռազմական կցորդ գեներալ Հ. Ա. Քիշմիշյանը Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետին, տեղեկացնում է, որ իրեն արժանահավատ աղբյուրներից հաջողվել է պարզել, որ Վրաստանի և Ադրբեջանի միջև կնքվել է լրացուցիչ գաղտնի պայմանագիր այն մասին, որ Ադրբեջանի և Հայաստանի միջև զինված կոնֆլիկտի ծագման պարագայում, բոլոր վրացի սպաները ետ են կանչվելու այդ ճակատից[37]:

1920 թ. ապրիլի 3-ին Զինվորական նախարարին ներկայացված զեկույցում գեներալ Քիշմիշյանը հայտնում էր, որ Կամավորական բանակից տեղ չեն հասել միանգամայն սարքին 1916 թ. անգլիական արտադրության «Սոպվիչ Տրիպլան»[38] 4 կործանիչ աերոպլանները, որոնք ներկայվել են Վրաստանի իշխանությունների կողմից և գտնվում են նրանց անգարներում[39]:

1920 թ. ապրիլի 5-ին Զինվորական նախարարին ներկայացված զեկույցում գեներալ Քիշմիշյանը հայտնում էր Կամավորական բանակի ուղարկած և «Կազակ» շոգենավով բերված 1.200000 փամփուշտի և հրետանային զենք զինամթերքի ստացման մասին, որը մարտի 5-ին Բաթումի էր հասել և խոչընդոտների հանդիպել անգլիացիների կողմից: որը Խնդիրները հարթելու համար Քիշմիշյանը և Ումիկյանը մեկնում են Բաթումի՝ ունենալով գեներալ Գեղևանովի հավաստիացումը, որ իր կողմից արված են անհրաժեշտ կարգադրությունները: Մինչ այդ Կամավորական բանակի ներկայացուցիչ գեներալ Պորոխոնսկին ընդառաջու է՝ թույլատրելով Կազակ» շոգենավին ուղևորվել Փոթի՝ պայմանով, որ նավը կապահովվի ածխով, անգլիացիները, սակայն, չեն թույլատրում կանգառել նավահանգստում և նավարկման են ուղարկում: Չի հաջողվում անգլիացիներին համոզել, որոնք այս անգամ էլ պնդում են, որ առանց Վրաստանի կառավարության գրավոր համաձայնագրի չեն կարող բեռները բաց թողնել, ինչը լուծելու համար Ումիկյանն ուղևորվում է Թիֆլիս և թույլտվություն ստանալու համար տեսակցում Գեղևանովի հետ: Նավը Փոթի է հասնում մարտի 21-ին: Գործի ընթացքին խառնվում է և նոր թյուրիմացության է նպաստում Ժողովրդական գվարդիան, որը հայտարարում է, որ առանց Ն. Ժորդանիայի և Վ. Ջուղելու թույլտվության բեռը բաց չի թողնվի Փոթիից: Ստեղծված իրավիճակում Ումիկյանը մեկնում է Թիֆլիս, և խորհրդական Թումանյանի հետ միասին տեսակցում է ԱԳ մինիստրի օգնական Կարպիվաձեի հետ: Վերջինս հայտնում է, որ չի կարելի տրանզիտով տեղափոխել ռազմական բեռներ, որ իրենք վետո են դրել նաև Ադրբեջանի բեռների վրա: Ումիկյանը վիճարկում է այդ հարցապնդումը՝ ասելով, թե Վրաստանն այդպես է վարվել Ադրբեջանի տրանզիտային բեռների հետ՝ Յալամի կայարանում տեղի ունեցած ինչ-ինչ դեպքերի պատճառով: Կարպիվաձեն հայտարարում է, որ եթե հայկական կողմը Վրաստանին զիջի թեկուզև 50 հազար փամփուշտ իրենք հնարավոր կգտնեն Ադրբեջանին ասելու, որ բեռան մի մասը բռնագրավել են: Հայկական կողմը սրան պատասխանում է կատեգորիկ մերժումով: Երկու օր անց Կարպիվաձեն տեղեկացնում է, որ բոլոր խոչընդոտները հաղթահարված են, և Ումիկյանն ընդունելության է արժանանում Վրաստանի կառավարության նախագահի կողմից, նրան հայտնելով հարուցվող խոչընդոտների մասին: Ժորդանիան մարտի 26-ին տալիս է իր համաձայնությունը և նրան հանձնում նամակ՝ Մինիստրների խորհրդի քարտուղար Ցինցաձեի ստորագրությամբ, որից հետո Ումիկյանը մեկնում է Փոթի: Սակայն իրադարձությունները կրկին անակնկալ ընթացք են ստանում, քանզի Ումիկյանը դեռ Փոթի չէր հասել, երբ մարտի 29-ին ստացվում է Ժորդանիայի հեռագիրը՝ բեռն անմիջապես Թիֆլիսի զինանոց տանելու մասին: Հայկական պահակազորը հեռացվում է, Ումիկյանից խլում են 14 կողպեքների բանալիները: Ամեն ինչ նորից է սկսվում, Ումիկյանը տեսակցում է Կարպիվաձեի հետ և ստանում նրա հավաստիացումը, թե այլևս խոչընդոտներ չկան և բեռը հայկական կողմը կարող է ստանալ Թիֆլիսից: Մարտի 29-ին գեներալ Հ. Քիշմիշյանը տեսակցում է Գեղևանովի հետ և կրկին բանակցում, որից հետո մարտի 31-ին գեներալ Գեղևանովը կարգադրում է 10 հոգանոց զինված պահակազորին և մի սպայի՝ ուղեկցելու բեռը մինչև Սանահին: Ի վերջո բեռը Հայաստան է հասնում ապրիլի 8-ին՝ չնայած Վրաստանի կողմից հարուցված անթիվ-անհաշիվ խոչընդոտներին[40]:

1920 թ. հուլիսի 1-ին գնդապետ Ռ. Մարտիրոսյանը ՀՀ Զինվորական նախարարության լիազորների անունից տեղեկացնում է Զինվորական նախարարին, որ մայիսի 17-ին, հրամանի համաձայն, մեկնել են Ղրիմ՝ Սևաստոպոլ, որտեղ գտնվում էին ռուսական բանակի և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները՝ փորձելով գնդապետ Տուրբինի միջոցով պարզել հրետանային վարչության հետ իրենց ունեցած հետաքրքրությունները: Ռուսական կողմը խոստանում է աջակցել այն ամենում, ինչ հնարավոր է: Չնայած Ղրիմում գտնվող ռուսական բանակի դժվարություններին՝ գնդապետ Տուրբինը խոստանում է Հա-

յաստանի կարիքների համար բաց թողնել մեկ միլիոն փամփուշտ, ավելացնելով, որ մի քանի օր անց ինքը հնարավորություն կունենա տրամադրելու ևս 2 միլիոն փամփուշտ[42]: Հուլիսի 4-ին Սևաստոպոլ է հասնում նաև պորուչիկ Ումիկյանը, որը, ՀՀ վերոհիշյալ լիազորներից անկախ, Սաղաթելյանի հետ միասին նոր պահանջներով պետք է ներկայանար գլխավոր հրամանատարի օգնական գեներալ Պ. Ն.Շատիլովին: Հուլիսի 4-ին սեպարատ գործունեության համար Ումիկյանը ենթարկվում է լիազորների ճնշմանը և հարկադրաբար վերջիններիս հայտնում է, որ ՀՀ կառավարության ներկայացուցիչները, հանձինս գեներալ Քիշմիշյանի և ուրիշների, վրաց զինվորական նախարարության հետ Ղրիմից եկած ռազմամթերքը կիսելու համաձայնության են եկել: Մինչ այդ նրանք որոշել են խոստացված 3 միլիոն փամփուշտը «Ֆենիքս» նավով տեղափոխել՝ ինչպես որ պայմանավորված էր եղել Բաթումիում Երվանդ Տեր-Մինասյանի հետ: Հայկական երկու պատվիրակությունների իրարից զատ գործելը խնդրահարույց էր, սակայն երկու կողմն էլ ցանկանում էին շուտափույթ լուծել հարցը՝ օգտվելով Վրաստանի ընձեռած տրանզիտից: Սակայն, բանը դրանով չի ավարտվում, քանզի, ըստ գնդապետ Մարտիրոսյանի, իրենք Ղրիմում հանդիպում են ՀՀ Զինվորական նախարարության մեկ այլ խմբի, կապիտան Անիևի և Մ. Մակարյանի հետ, որոնք լիազորված էին Զինվորական նախարարի կողմից: Բավարարվածություն էր արտահայտվում, որ Վրաստանի կառավարության հետ իրենց թիֆլիսյան ներկայացուցչության ձեռքբերած համաձայնության շնորհիվ հնարավոր եղավ գլուխ բերել 3 միլիոն փամփուշտի հարցը՝ և այն հավասարաչափ բաժանելով Վրաստանի և Հայաստանի միջև, և ավելին, հաջողվեց որոշակի պայմաններով ստանալ ևս 1 փութ սնդիկ և 50 փութ ալյումին, վստահեցնելով, որ առաջիկայում հնարավոր կլինի ստանալ ևս մեկ միլիոն փամփուշտ, 5 միլիոն ցրված փամփուշտ, եթե այնուհետ դեպքերի ընթացքը բարեհաջող դասավորվեր Հայաստանի ներկայացուցիչների համար: Ընդգծվում էր, որ այդ փամփուշտները ստանալու պարտականությունը դրվել է Ումիկյանի վրա, որը մնում էր Ղրիմում, որպեսզի ավարտի կիսատ գործերը: Բացի այդ, Տուրբինից խոստում են ստանում, որ մոտ ապագայում իրենց կուղարկվի նաև հազար գնդացիր, թնդանոթային ռումբեր, շրապնել և անհրաժեշտ այլ ռազմամթերք[43]: Հետաքրքիր է այս կարևոր գործի հետագա ընթացքը: 1920 թ. հուլիսի 24-ին գործուղման է մեկնում ՀՀ Զինվորական նախարարի օգնականը՝ Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար Բաղդասարովը: Վերջինիս խնդիրն էր պարզելը, թե ինչ ընթացք է ստացել կապիտան Անիևի և Մանաս Մակարյանի գործուղումը: Զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանը սույն գործի կապակցությամբ 1920 թ. հուլիսի 27-ին մակագրում է, որ ստուգվի՝ 1) ինչի՞ հիման վրա են իբր արդեն ուղարկված եղել Անիևն ու Մակարյանը, և նրանց զուգահեռ նոր հրահանգներով և նոր պայմաններով ուղարկվել Ումիկյանը, 2) ինչո՞ւ է գործի մեջ հակասություն և երկիշխանություն ստեղծվել, 3) ապա պահանջվում է այդ մասին հայտնել գեներալ Քիշմիշյանին[44]:

1919 թ. նոյեմբերի 11-ին ԱԳ նախարար Խատիսյանը Եվանգուլյանին հայտնում էր, որ զինակոչի ընդհանուր սկզբունքն անհրաժեշտ է տարածել թե՛ ՀՀ բոլոր քաղաքացիների վրա և թե՛ ուրիշ երկրներում բնակվող հայ զինապարտները պետք է ժամանեն Հայաստան և զինվորագրվեն: Բայց քանի որ «Հպատակության մասին» օրենքը բացակայում էր, Եվանգուլյանին հրահանգվում էր մի բան մտահղանալ՝ ելնելով տեղական պայմաններից [45]:

1919 թ. նոյեմբերի 11-ին Զինվորական և ԱԳ նախարարներին ուղղված պաշտոնագրում գեներալ Քիշմիշյանը հայտնում էր, որ Ռուսաստանի Հարավի Զինված ուժերի գլխավոր հրամանատարը թույլատրել է զինծառայող հայերին լքել Կամավորական բանակի շարքերը և ուղևորվել հայրենիք՝ հետագա ծառայության համար[46]:

ՀՀ փոխհարաբերությունները Դենիկինի հետ բազմանշանակ էին: ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության ռազմական կցորդ գեներալ-մայոր Հ. Ա. Քիշմիշյանը 1919 թ. նոյեմբերի 21-ի զեկուցագրում տեղեկացնում է գեներալ Ա. Դենիկինի հոկտեմբերի 1-ի հրամանի մասին, ըստ որի, թույլատրվում էր հայ զինվորականներին լքել Կամավորական բանակը և մեկնել հայրենիք՝ հետագա ծառայության համար: Ինչպես պարզվում է Հ. Սաղաթելյանի կողմից Եվանգուլյանին ուղղված նամակից, համաձայնություն էր կայացվել հայ զինծառայողներին տալ զենք՝ անհրաժեշտ քանակի փամփուշտով, ընդ որում՝ հիմք կար եզրակացնելու, որ Վրաստանի կառավարությունը խոչընդոտներ չէր հարուցի իր տարածքով անցկացնելու այդ ամենը[47]: Ինչպես պարզվում է, որոշակի հաշվարկի հիման վրա Դենիկինի մոտից տեղափոխվողների քանակը հասնում էր մոտ 2800 մարդու, որոնք ապահովված էին 3000 հրացանով և ավելի քան 8 միլիոն փամփուշտով[48]:

Դենիկինից ակնկալիքներն անսպասելի չէին, որի մասին Ռուբենը փաստում է հետևյալը. «Աւելի շոշափելի օգուտ էր դենիկինյան շրջանից 3.000.000-ի չափ Մոսին-հրացանի փամփուշտ ստանալը: Դա թէեւ մեծ թիւ չի երեւում, բայց մեզ հասաւ այն ժամանակ (1920ի Մայիսի վերջերին և յունիսին), երբ մեր պահեստներում ընդամէնը ունէինք 150.000 «Մոսին» մակնիշի հրացանի փամփուշտ, այսինքն ոչինչ՝ 10.000 հրացանի համար: Եթէ այդ ռազմամթերքը չհասնէր, իրոք Հայաստանը զինաթափված կարելի էր համարել այդ թուականներին. Այդ փամփուշտները փրկեցին մեզ եւ միջոց տուին հետագա կռիւները առաջ տանել:

Այսպիսի բարեկամական յարաբերութիւնները կային Հայաստանի և դենիկինցիների միջեւ, եւ, ինչպէս տեսանք, շոշափելի օգուտներ կը ստանար Հայաստանը այդ յարաբերութիւններից»[49]:

Արդյունքները կարող էին ավելին լինել, եթե չլիներ վրացիների ազգայնամոլությունը և հակադենիկինյան դիրքորոշումը, որի հաստատումը տեսնում ենք կրկին Ռուբէնի մոտ. «…Դենիկինի հետ յարաբերութիւնները համակրութիւն ունէր ժողովրդեան լայն խաւերի մէջ,

Ռուբեն Տեր-Մինասյան

ի մասնաւորի զինուորականաց մէջ... մենք կանխիկ սպասելիքներ ունէինք Դենիկինից՝ Հայաստանը ճանաչել տալ, ապահովել նրա իշխանութեան տակ գտնուող հայութիւնը, Հարաւային Ռուսաստանից ստանալ մեզի համար կենսական հաց ու ռազմամթերք»[50]: Դենիկինի մոտ գտնվող ՀՀ ներկայացուցիչներ Սաղաթելյանի և այլոց միջոցով, ինչպես նաև Ջինկևիչի ջանքերով և Դենիկինի կամեցողությամբ Հայաստան էին գալիս իբր մարտական ուժ կամ իբր գաղթական եւ այս թույլտուութիւնը մեծ նշանակութիւն ունեցաւ... գալիս էին հազարաւոր ուժեր, յաճախ իրենց պարենաւորումով եւ զենքով, ուժեղացնելու Հայաստանը իրենց կարողութեամբ»[51]:

Անգամ վրացիները, թեկուզև անուղղակիորեն երբեմն կարծես թե ընդունում էին դա. 1920 թ. հոկտեմբերի հեռագրերից մեկում, ուղղված Վրաստանի ԱԳ նախարարին և վարչապետին, Երևանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մախարաձեն հայտնում էր, թե հայկական կառավարությունը իրեն տեղեկացրել է, որ Վրաստանը արգելափակել է Հայաստանի համար նախատեսված փամփուշտները Փոթիում, ավելացնելով, որ դրությունը Հայաստանում կրիտիկական է. թաթարները թուրքերի հետ միասին հարձակվում են Նախիջևանի և Իգդիրի կողմից, մարտեր են գնում, անհրաժեշտ է անհապաղ լուծել փամփուշտների փոխադրման հարցը, որ դրանք պետք են միայն ներքին ճակատի համար[52]: «Դժբախտաբար, Վրաստանը դժուարութիւններ էր յարուցանում յաճախ Սեւ Ծովի ափով կամ Դարեալի կիրճով եկող այդ բազմութիւններին. Յաճախ խլում գոյքերը, շաբաթներ այս կամ այն կէտում (Մցխէթ, Գորի եւ այլն) պահում եւ թշուառութեան մատնում, բայց այդ արդէն դուրս էր դենիկինեան բարեացակամութիւնից եւ կը վերաբերուէր վրացիների անբարեացակամութեան: Այսպէս թէ այնպէս, Հայաստան մտաւ բաւականաչափ մարդ եւ աշխատող ձեռք:

Ճանապարհի վրայ նստած վրացիները ցանկութիւն ունէին բացարձակ չթույլատրել փոխադրութիւնները. Թէեւ նրանց վրայ կը ճնշէին Դաշնակիցների ներկայացուցիչ Հասկէլը եւ ուրիշներ, թէեւ միւս կողմից դենիկինցիները ատամներ ցոյց կը տային...բայց Վրաստանը կարողացաւ այնքան դժուարութիւններ յարուցանել, որ փոխանակ միլիոնաւոր փութ հաց եւ այլ նիւթեր ստանալու, գուցէ 100.000-ի չհասաւ ուտելիքի մեր ստացածը (որից 30.000ից աւելին՝ սերմնացու, Հասկէլի միջոցով): Ստիպուած էր Հայաստանը, իրեն խոստուացած կամ գնած հացահատիկները հասցնելու համար, տալ վրացիներին ե՛ւ կաշառք, ե՛ւ տոկոս բերածից, երբեմն 50 առ հարիւրի չափ: Միւս կողմից, դենիկինցիները սկսեցին դանդաղեցնել իրենց օգնութիւնները, տեսնելով որ վրացիք բաժին են առնում ղրկածներից, իսկ այդ պարագան նրանց հաշուին չէր գար, քանի որ Վրաստանի հանդէպ էին տրամադրուած», գրում է Ռուբեն Տեր-Մինասյանը[53]:

Իրավիճակը և ՀՀ-ի հետ ռազմաքաղաքական հարաբերությունները փոխվեցին 1920 թ. սկզբներին, երբ գեներալ Ա. Դենիկինի բանակը ջախջախիչ պարտություն կրեց Կարմիր բանակից, և արդեն օրակարգային դարձավ բոլշևիկյան զորքի կողմից Անդրկովկասի նվաճման խնդիրը, որն էլ իր հերթին օրակարգային խնդիր դարձրեց ՀՀ հարաբերությունների հարցը Խորհրդային Ռուսաստանի հետ: Մեծ Բրիտանիան էլ, իր համար առաջնահերթ համարելով Անդրկովկասի պատնեշումը բոլշևիկներից, անդրկովկասյան հանրապետություններին տրամադրեց բոլշևիկյան Ռուսաստանի դեմ՝ տալով պարենի, զենքի ու զինամթերքի որոշակի պաշարներ, ինչպես նաև ռազմաքաղաքական աջակցության հերթական խոստումներ: Դրա նպատակն էր Կովկասը տարանջատել Ռուսաստանից՝ ամեն կերպ խոչընդոտելով բոլշևիկյան առաջխաղացմանը: Եվ միայն Դենիկինի պարտությունից հետո, ինչը պատահական չէր, հակաբոլշևիկյան պատվարի ստեղծման իրենց հեռահար ծրագրերից ելնելով՝ Անտանտի Դաշնակիցները 1920 թ. սկզբին դե ֆակտո ճանաչեցին անդրկովկասյան հանրապետությունները: Դա իրատեսորեն գնահատեց Ալ. Խատիսյանը. «Նույնիսկ մեր անկախության ճանաչումը Փարիզի Գերագույն խորհրդի կողմից մեզ թվում է նրանց կողմից իբրև մի միջոց բոլշևիզմի դեմ կռվելու համար»[54]:

Ա. Դենիկինի պարտությունից հետո նոր իրողություններ ստեղծվեցին, և Հայաստանի Հանրապետության համար, անկախ իր ցանկությունից ու ունեցած և վարվող ռազմավարությունից, բոլշիկյան հեռանկարը դարձավ ակնհայտ: Այս հեռանկարը պարզորոշվեց Ադրբեջանի խորհրդայնացումից հետո՝ 1920 թ. գարնանը: Այն բանից հետո, երբ 1920 թ. օգոստոսին վերջին բրիտանական զինվորը հեռացավ Անդրկովկասից և Մեծ Բրիտանիան «ոչ պատահաբար իր տեղը զիջեց» բոլշևիկյան Ռուսաստանին, ակնհայտ դարձավ, որ Անդրկովկասի նոր տերը բոլշևիկյան Ռուսաստանն է:

Անկախ Հայաստանի Հանրապետության կառավարական-քաղաքական շրջանների դեռևս շարունակվող արևմտամետ ձգտումներից և ռազմավարությունից, 1920 թ. աշնանը թուրք-հայկական պատերազմում ջախջախիչ պարտություն կրելուց և դեկտեմբերի 2-ի՝ ՀՀ համար խիստ անցանկալի և ռազմաքաղաքական ծանրագույն հետևանքներ ունեցող պայմանագրի ստորագրումից հետո, բոլշևիկա-քեմալական մերձեցման և ձախողված բոլշևիկա-հայկական բանակցությունների պայմաններում, Հայաստանի Հանրապետությունը կանգնեց խորհրդայնացման անխուսափելության փաստի առաջ, ինչն էլ իրագործվեց Երևանի համաձայնագրով:

Ինչպես նախկին ցարական, այնպես էլ բոլշևիկյան Ռուսաստանի, և վերջինիս տարածքում ստեղծված ռուսական պետական կազմավորումների, այդ թվում՝ Ա. Դենիկինի Կամավորական բանակի համար հեռահար ռազմավարության տեսանկյունից գերխնդիրը երկրի միասնության և ամբողջականության վերականգնման և պահպանման հարցն էր: Ըստ այդմ՝ նրանք հետևողական էին Անդրկովկասում վարվելիք քաղաքականության հարցում, ուստի ամեն ջանք գործադրում էին Մեծ Բրիտանիային և Անտանտի մյուս տերություններին այդ տարածաշրջանից դուրս մղելու և վճռականորեն այնտեղ հաստատվելու համար: Այս երևույթը ակնհայտ է նաև նորօրյա Ռուսաստանի արտաքին քաղաքական ծրագրերում և ռազմաքաղաքական քայլերում:

Վերադառնալով վրաց-թուրքական հարաբերություններին՝ դրանց խորքային բնույթը լավ է նկատել Թուրքիայում Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության լիազոր ներկայացուցիչ Սիմոն Մդիվանին: 1921 թվականի փետրվարի 8-ին նա Վրաստանի արտաքին գործերի նախարարությանը զեկուցում է, որ հանդիպել է Մուստաֆա Քեմալի հետ, ով «շոշափել է մեզ համար հետաքրքիր բոլոր հարցերը», և «բավարար չափով պարզաբանել է այդ հարցերը»: Ս. Մդիվանին հայտնել էր, որ շուտով բանակցություններ են սկսվելու սահմանների շուրջ, որի մասին փաստաթղթերն ուղարկվել են ռուս-վրացական պատերազմի սկսվելուց երեք օր առաջ: Խորհրդա-վրացական պատերազմի բռնկումից անմիջապես հետո՝ փետրվարի 19-ի նամակում Սիմոն Մդիվանին ընդգծում է, որ վրաց-թուրքական հարաբերություններն ակնհայտորեն փոխվել են, որ դեռ անհնար է թուրքերի հետ որևէ պայմանագիր կնքելը, որ իրենց դիրքորոշումը «տարուբերվում է» Լոնդոնի և Մոսկվայի միջև: Նրանք չեն որոշել, թե ինչպես վարվել: Հասկանալի է, որ Թուրքիայի կեցվածքը պայմանավորված էր նրանով, որ սպասում էին Լոնդոնի կոնֆերանսին և ռուս-վրացական պատերազմի արդյունքներին: Թուրքական կառավարությունը մտահոգված էր փետրվար-մարտին Լոնդոնի կոնֆերանսում քննարկվող հարցերի ելքով, որին մասնակցում էին Անտանտի երկրների ներկայացուցիչները, ինչպես նաև Թուրքիան, որը կռվում էր Հունաստանի դեմ և փորձեց հաշտության ձեռնատու պայմանագիր կնքել[55]:

Պետք է նկատել, որ վրաց-ադրբեջանական հունիսի 16-ի դաշինքը բավականին կայուն էր, որը սեպտեմբերին ամրապնդվեց նոր պայմանագրով: 1919 թ. հոկտեմբերի 29-ին կնքվեց առաջին թուրք-ադրբեջանական համաձայնագիրը «Թուրք-ադրբեջանական ռազմական միություն» անվամբ, որի 10-րդ հոդվածի «բ» կետով Ադրբեջանը՝ առանց Թուրքիայի թույլտվության մասնավորապես արտաքին քաղաքականության ոլորտում, այլ պետությունների հետ հարաբերվելու իրավունք չուներ: Դա համատեղ պաշտպանության, ռազմական համագործակցության և ռազմական միություն ստեղծելու երկկողմ պայմանագիր էր՝ ուղղված Հայաստանի և հայ ժողովրդի դեմ[56]: Այն լրացվեց 1920 թ. ապրիլի 15-ին Էրզրումում ստորագրված թուրք-ադրբեջանական գաղտնի պայմանագրով, որը ձեռք բերվեց ՀՀ հետախուզական ծառայության կողմից, հրապարակվեց 1920 թ. հուլիսի 6-ի ամփոփագրում[57]: Պայմանագիրը վավերացվեց ԱԴՀ զինվորական նախարարի օգնական Ալի աղա Շիխլինսկու և թուրքական 15-րդ բանակի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրի կողմից: Երկուսն էլ իրականում ուղղված էին Հայաստանի դեմ[58]:

ՀՀ հետախուզական բաժնի պետին ուղղված հեռագրում գեներալ Քիշմիշյանը հայտնում էր այն մասին, որ Ֆրանսիայի զինվորական ներկայացուցիչ գնդապետ Է. դե-Կորբեյլը խնդրել է թույլ տալ իրեն ծանոթանալու բոլշևիկների և Մ. Քեմալի համաձայնության մասին ապացույցների հետ: Այդ կապակցությամբ Քիշմիշյանը խնդրում էր ուղարկել այդ պայմանագրի վերաբերյալ առկա գրավոր ապացույցների և ամփոփագրերի բոլոր պատճենները: Հունիսի 4-ին ստացվում է պատասխան հեռագիրը կապիտան Դեվոյանցի և նրա օգնական, պրապորշչիկ Նազարբեկյանի ստորագրությամբ, որում վերջիններս Քիշմիշյանին լիազորում էին դե-Կորբեյլին ծանոթացնել բոլշևիկների հետ Մ. Քեմալի համաձայնության մասին բոլոր տեղեկություններին՝ նյութերը վերցնելով հետախուզական ամփոփագրերից: Այդ տեղեկությունները քաղված էին միանգամայն արժանահավատ աղբյուրներից՝ թուրքական 15-րդ կորպուսի հրամանատարի և Զինվորական նախարարի՝ միմյանց հասցեագրված ծածկագրված հեռագրերից: Հենց դա էլ Քիշմիշյանը հունիսի 18-ին կարգադրում է հաղորդել դե-Կորբեյլին՝ ասելով, որ ուղարկվում է թուրք-ադրբեջանական ռազմական միության պայմանագրի պատճենը: Սույն փաստաթղթի հավելվածին կցվում է ադրբեջանա-թուրքական պայմանագրի պատճենը, որն այդ երկրների միջև ստորագրվել էր 1919 թ. հոկտեմբերի 29-ին: Նրանով թուրքական կողմը պարտավորվում էր կազմակերպել ադրբեջանական բանակը, պատրաստել հրահանգիչներ, սպաներ, մատակարարել զենք ու զինամթերք, չկնքել որևիցե պայմանագիր այն պետությունների հետ, որոնք կլինեին Ադրբեջանի հետ թշնամական հարաբերությունների մեջ[59]:

Ստեղծված իրավիճակը թե՛ Վրաստանը, թե՛ Ադրբեջանը խելամտորեն և հաշվենկատորեն փորձեցի ծառայեցնել հօգուտ երկու դաշնակից և դրացի երկրների շահերի՝ որի հիմքը 1919 թ. հունիսին և սեպտեմբերին կնքված պաշտպանական բնույթի ռազմաքաղաքական պայմանագրերն էին: ■

Օգտագործված գրականություն

1 Տես Քաջազնունի Հովհ., Բաց նամակ Z–ին. Թուրքիա, թե՞ Ռուսաստան, Եր., 1990, էջ 15:
2 Хапчаев Салех, Какагасанов Гаджи-Курбан, Болдырев Юрий, Назарова Ольга. Азербайджанская Демократическая Республика и Горская Республика: история взаимоотношений. 11 мая 1918 г. – 18 мая 1919 г.: Diplomatiya Aləmi: World Of Diplomacy. Journal Of The Ministry Of Foreign Affairs Of Republic Of Azerbaijan № 48, 2018, с. 282.
3 Կյազյան Դ., Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-1920 թթ., Եր., Հեղ. Հրատ., 2008, էջ 25; Армия Азербайджанской Демократической республики, http://www.ourbaku.com/ index.php5/Армия_Азербайджанской_Демократической_республики._1918_—_1920. (հրումն արված է 05.03.2024 թ.):
4 Азербайджанская Демократическая Республика. Внешняя политика. (Документы и материалы). Баку, 1998, с.15.
5 Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов. Отв. ред. В.А.Микаелян. Ереван, 1992, с. 5.
6 Гасанли Дж. Внешняя политика Азербайджанской Демократической Республики (1918-1920). М., 2010, с.106.
7 Aliyev Gabil. 100 years of diplomatic service of the Republic of Azerbaijan. In History Role Of Diplomatic Missions In Forging Relations Between The Azerbaijan Democratic Republic And Georgia (1918-1920), IRS, p. 87.
8 Нифталиев Ильгар, Военно – дипломатическая борьба вокруг Карабаха и Зангезура в период АДР (1918-1920 гг.): Diplomatiya Aləmi: World Of Diplomacy. Journal Of The Ministry Of Foreign Affairs Of Republic Of Azerbaijan № 48, 2018, с. 232; История Азербайджана по документам и материалам. Баку, 1990, с. 285.
9 Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов, с. 38.
10 Азербайджанская Демократическая Республика. Архивные документы Великобритании. Перевод на русский язык. Баку: Шарг-Гарб, 2011, с. 178-182.
11 Տես Деникин А. Очерки российской смуты, т. IV. Берлин, 1924-1926, с. 139. Наджафов Б., Лицо врага. История армянского национализма в Закавказье в конце XIX – начале XX века. ч. II, Баку, изд-во «Шарг-Гарб», 1994, с. 77:
12 Տես Samkharadze N., Georgian State Border–Past and Present, Foreign policy & security programme, August, 2012, p. 6-7: Տես www.css.ge:
13 Տես Бахтадзе М., О военном договоре 1919 года между Грузией и Азербайджаном «Право и политология», 2010, № 7: Տես https:// cyberleninka.ru/.../ azerbaydzhan-i-gruziya-v-period-stan: Տես www. elibrary. ar/docs/JURNAL/jin2010:
14 Деникин А., Очерки российской смуты, т. IV, Берлин, 1924-1926, с. 139:
15 Տես Каземзаде Ф., Борьба за Закавказье (1917-1921)., Серия «История Кавказа». Институт Стратегических Исследований Кавказа, Стокгольм, CA&CC Press®, 2010, с. 234-235:
16 Տես Гусейнзаде Р. А. Оглу, Кавказ и армяне, Баку, Печатный дом «Апострофф», 2014, с. 380: Տես նաև АДР, Парламент–Азербайджанская Демократическая Республика. 1918-1920. Парламент: Стенографические отчёты, Баку, 1998, с. 484-485:
17 Տես ՀԱԱ (Հայաստանի զգային արխիվ), ֆ. 275, g. 5, գ. 12, թ. 16:
18 Տես Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի դիվանագիտական հարաբերությունների պատմությունից. 1918-1920 թթ., Եր., 2002, էջ 67:
19 Harun Yilmaz, "An Unexpected Peace: Azerbaijani-Georgian Relations, 1918-1920," Revolutionary Russia, vol. 22, no. 1, 2009, p. 51.
20 Azerbaijan People's Republic, Parliament (Stenographic Reports), Azerbaijan Publishing House, First Volume, 1998, Baku, Azerbai jan, pp. 709-711; Azerbaijani-Georgian Relations The Foundations And Challenges Of The Strategic Alliance Zaur Shiriyev & Kornely Kakachia, Center For Strategic Studies. Sam Review. Special Double Issue | Volume 7-8, July 2013, p. 10.
21 Azerbaijani-Georgian Relations The Foundations And Challenges Of The Strategic Alliance Zaur Shiriyev & Kornely Kakachia, Center For Strategic Studies. Sam Review. Special Double Issue | Volume 7-8, July 2013, p. 33.
22 Бахтадзе Михаил. О военно-оборонительном договоре 1919 года между Грузией и Азербайджаном: Diplomatiya Aləmi: World Of Diplomacy. Journal Of The Ministry Of Foreign Affairs Of Republic Of Azerbaijan № 48, 2018, с. 250.
23 Бахтадзе Михаил. О военно-оборонительном договоре 1919 года между Грузией и Азербайджаном: Diplomatiya Aləmi: World Of Diplomacy. Journal Of The Ministry Of Foreign Affairs Of Republic Of Azerbaijan № 48, 2018, с. 250-251.
24 Расул-заде М. Э., О Пантуранизме в связи с кавказской проблемой, Париж, 1930, с. 24.
25 Տես Бахтадзе М., О военном договоре 1919 года между Грузией и Азербайджаном «Право и политология», 2010, № 7, Տես https://cyberleninka.ru/.../azerbaydzhan-i-gruziya-v-period-stan; ՀԱԱ, ֆ. 275, g. 5, գ. 112, թ. 24:
26 Տես «Кавказское слово», Тифлис, 21 июня, 1919 г., N 12; ՀԱԱ, ֆ. 275, g. 5, գ. 158, թ. 152-152 հակ.:
27 Տես ՀԱԱ, ֆ. 275, g. 5, գ. 158, թ. 152-152 հակ.:
Տես ՀԱԱ, ֆ. 275, g. 5, գ. 158, թ. 299:
28 Տես Бахтадзе М., О военном договоре 1919 года между Грузией и Азербайджаном: «Право и политология», 2010, № 7: Տես https://cyberleninka.ru/.../azerbaydzhan-i-gruziya-v-period-stan.
29 Տես ՀԱԱ, ֆ. 275, g. 5, գ. 93, թ. 214:
30 Տես ՀԱԱ, ֆ. 275, g. 5, գ. 93, թ. 214:
31 Տես մանրամասն Վիրաբյան Վ., Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները 1918-1921 թթ., Եր., ԵՊՀ հրատ., 2016, էջ 557-571: Կյազյան Դ., Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-1920 թթ., Եր., Հեղ. Հրատ., 2008, էջ 109-110:
32 Տես Ղուլյան Յ., Ռուսաստանի իշխանությունների դիրքորոշումը Հայաստանի Հանրապետության անկախության վերաբերյալ 1918-1920 թթ., «Բանբեր Հայաստանի արխիվների», 2017, № 125, էջ 304:
33 Տես ՀԱԱ, ֆ. 275, g. 5, գ. 196, թ. 1:
34 Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր. Հայաստան, 1993, էջ 381:
35 Տես ՀԱԱ, ֆ. 275, g. 5, գ. 209, թ. 60-60 հակ.:
36 Տես նույն տեղում, թ. 68:
37 Տես նույն տեղում, թ. 82:
38 ՀԱԱ, ֆ. 199, g. 1, գ. 184, թ. 12:
39 Տես Հովհաննիսյան Ա., Ամենահայտնի ռազմական ինքնաթիռները, Եր., «Անտարես», 2005, էջ 14:
40 Տես ՀԱԱ, ֆ. 275, g. 5, գ. 209, թ. 108:, էջ 2
41 Տես ՀԱԱ, ֆ. 275, g. 5, գ. 209, թ. 114-116:
42 Տես նույն տեղում, ֆ. 275, g. 5, գ. 154, թ. 204, 207:
43 Տես նույն տեղում, թ. 204:
44 Տես նույն տեղում:
45 Տես նույն տեղում, ֆ. 275, g. 5, գ. 196, թ. 27:
46 Տես նույն տեղում, գ. 197, թ. 251:
47 Տես ՀԱԱ, ֆ. 275, g. 5, գ. 197, թ. 151:
48 Տես նույն տեղում, թ. 151 հակ.:
49 Տես Ռուբէն, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, h. 7 (Է), Գ. հրատ.: Արտասահման, Սասուն եւ Հայաստանի Հանրապետութիւն, Հրատարակութիւն, Թեհրան, էջ 261:
50 Տես նույն տեղում:
51 Տես նույն տեղում:
52 Տես ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 386, թ. 118:
53 Տես Ռուբէն, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, h. 7 (Է), էջ 260-261:
54 Տես Ղուլյան Յ., Ռուսաստանի իշխանությունների դիրքորոշումը Հայաստանի Հանրապետության անկախության վերաբերյալ 1918-1920 թթ., «Բանբեր Հայաստանի արխիվների», 2017, № 125, էջ 310:
55 Javakhishvili Irakli. The Democratic Republic Of Georgia In Diplomatic Relations Of The Great Powers 1918-1921 Dissertatio Ad Lauream In Facultate Scientiarum Socialium Apud Pontificam Universitatem S. Thomae In Urbe, Pontificia Studiorum Universitas A S. Thoma Aq. In Urbe, Romae, 2017(MMXVII), Rome, 2017, p. 51.
56 ՀԱԱ, ֆ. 275, g. 5, գ. 184, թ. 67:
57 Վիրաբյան Վ. Հ. Հայաստանի Հանրապետության Պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը (Հետախուզություն, բանակ և ՆԳՆ). Մենագրություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2015, 568-575; Казахецян Вл. Новый документ о турецко-азер¬байджанской полит¬тике геноцида арм¬ян, С. 1-3: httpwww. academhistory.amimagesdownloadfilesKAZACHECYAN%20rus. pdf: День погрузки: 02.04.2018, с.1-3:
58 Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետությունը, էջ 473-474:
59 ՀԱԱ, ֆ. 275, g. 5, գ. 184, թ. 66-67:

«Մենք տակաւին Մուսա Լեռցի ենք, երբ ձուլուինք՝ նոր Հայ պիտի ըլլանք...»

(Եդուարդ Պոյաճեանի ծննդեան 110-ամեակի առիթով)

Մովսէս Ծիրանի (Հերկելեան)
Արվեստաբանութեան դոկտոր

Էդուարդ Պոյաճյանը 1915 թ. ծնունդ է՝ թե՛ որպես մարդ և թե՛ որպես գրող: Իր առաջին գաղթը Մուսա լեռան Խդրբեկ հայրենի գյուղից եղել է երեք ամսական հասակում: Չորս տարի Եգիպտոսի նավահանգստային Պորտ Սաիդ քաղաքում անցկացնելուց հետո գաղթականները եր են վերադարձել, և նրանց հետ Էդուարդ Պոյաջյանը դրախտային ծննդավայրում ապրել է մինչև 1930 թվականը: Այստեղ նախնական կրթություն ստանալուց հետո տեղափոխվել և ուսումը շարունակել է Բեյրութի Նշան Փալանճյան ճեմարանում:

Իր գիտակցական կյանքի ամենամեծ ցնցումը եղել է 1939-ի Մուսա լեռան դավաճանական հանձնումը, հայրենակիցների նոր տեղահանությունը և նոր կյանքի ծանր սկիզբը հետագայում երկրորդ փոքր ու սիրելի հայրենիքը դարձած Լիբանանի Այնճար գյուղում: Կենսագրությունն ապրել է որպես ուսուցիչ և խմբագիր, իր հոգևոր ընթացքը եղել է գրականությունը, որի մեջ ապրել է հայրենի եզերքի ու նրա մարդկանց կարոտով, փառաբանությամբ, դառն ու ուրախ առօրյայով: Էդուարդ Պոյաճյանի գրականությունը եփվել է իր սրտի մորմոքուն կրակի վրա, որ չի խանձել, այլ ջերմացրել է, դարձրել է տողերը նուրբ, լուսավոր, լցված մարդասիրության ու լավատեսության ավիշով: Էդուարդ Պոյաճյան գրողը ճանաչվել ու գնահատվել է Հայաստանում կոմունիստական արգելանքների խորտակումից հետո: Նրա գրքերը հրատարակվել են Երևանում, մայրաքաղաքում գործում է Էդուարդ Պոյաճյանի անվան դպրոց: Ծննդյան տարեդարձի առիթով անդրադառնալով տաղանդավոր ու ինքնատիպ գրողին, կարծում ենք, որ ավելին պետք է անել պետականորեն և ըստ արժանվույն գնահատելու, լայնորեն ճանաչելի դարձնելու համար նրա և, ի դեպ, սիրուքահայ այն գրողների վաստակը որոնք հանիրավի մոռացության են մատնված եղել գաղափարական, քաղաքական պատճառներով:

Խմբագրություն

Սիրելի ընթերցող

Այն ինչ որ այսօր վերամշակուած ձեւով թուղթին կը յանձնեմ, երկար տարիներ ոեւէ մէկուն չէի պատմած, որովհետեւ եղածը պատանիներու յատուկ, շատ անձնական «որոշում» մըն էր...: Սակայն ի նկատի առած մեր ազգի ու առհասարակ մարդկութեան ոգեղէն արժէքներու հետեւողական նսեմացումն ու նաեւ անոր անտեսումն ու նոյնիսկ կորուստը, չեմ վարանիր անգամ մը եւս հրապարակելու, ցոյց տալու համար թէ ինչպէ՞ս եւ ինչու իմ սերունդը ջրդեղուած էր ազգային ու մարդկային ոգեղէն արժէքներով ու հետամուտ էր այն պահել ու պաշտպանել... ամէն գնով:

Անձնապէս կը ճանչնայի Եդուարդ Պոյաճեանը, նախ իբրեւ գրող եւ ապա իբրեւ հօրս՝ Որսորդ Սդդանին ընկերը: Անոնք նոյն տարին, 1915-ին ծնած էին Մուսա Լերան նոյն գիւղը՝ ու մկրտուելէ ետք իրենց ծննդավայրի՝ Խտըրպէկի նոյն եկեղեցիին մէջ, դեռեւս նորածին միասին բարձրացած էին լեռ ու անցած՝ արտագաղթի նոյն ճանապարհներէն, ի վերջոյ հանգրուանելու համար Այնճար:

Իմ ընկերասէր ընթերցող

Իր հայրը «Պոյաճէն»՝ (Մարտիրոս Պոյաճեանը) գիւղի երեւելի ղեկավարներէն էր, յարգուած ու մեծարուած անձնաւորութիւն մը, որուն կարծիքը կշիռ ունէր հանրութեան մօտ: Երեխաները՝ Հրայրն ու Սիլվան մանկապատանեկան ընկերներս էին: Իսկ տիկինը՝ Արաքսին յաճախ առիթ կ'ունենար այցելելու մօրս, որովհետեւ իր քոյրը Տք. Ալթունեանի կողակիցը՝ տիկին Շուշանը մեր հարեւանուհին էր: Սակայն այս բոլորին մէջ ամենակարեւորը այն էր, որ Պոյաճեանը երբ քաղաքէն գիւղ գար, պարբերաբար կ'այցելէր նաեւ հօրս: Ես երբեմն հաճոյքով ներկայ կ'ըլլայի անոնց զրոյցներուն, որոնք աւելի անցեալին կը պատկանէին քան՝ ներկային:

Հակառակ անոր որ այն օրերուն, երբ տակաւին Պոյաճեանը չէր գնահատուած ու մեծարուած իբրեւ կայացած գրող, հայրս շատ մեծ կարծիք ու յարգանք կը տածէր անոր հանդէպ, ու... չէր սխալած:

Հայրենի հողի կարօտէն տաղուած ու ծննդավայրի յիշատակներով ջրդեղուած այս տաղանդաշատ լեռնցին, հաճոյքով կը լսէր հօրս պատմածները, որոնք մեծամասամբ դրսեւորումներն էին անցեալի մէջ անթեղուած ոգեղէն արձագանգներու: Պոյաճեանը,

Եդուարդ Պոյաճեան

այլոց շարքին գրեց ու կերտեց նաեւ հօրս կերպարը, իբրեւ «Այնճարի Մէկ Տղան»՝ Սեդրակը, որուն համար հպարտ էր հայրս: Իր հօրը՝ Մովսէսին անժամանակ մահուան հետեւանքով, հայրս բնաւ դպրոց չէր տեսած, գրել կարդալ չէր գիտեր, բայց երբեմն, ընթերցել կու տար մեզի հատուածներ Պոյաճեանի գիրքերէն: Ինչպէս. «Հողը», «Թուղթ զաւակներուս», «Տոմար տարագրի», «Պայքարողներ, Պայքարողներ դուք գազազած», եւ այլն...:

Այն ատեն «Բաբգէն Սիւնի» ակումբէն ներս յատուկ ընթեցարան ունէինք, ուր յաճախէլն ու ընթերցասիրութիւնը մեր առօրեային մաս կը կազմէր: Մենք՝ Այնճարի պատանիներս հայ գիւղագիրներէն (Համաստեղ, Բակունց, Օշական...) ամենէն շատ կը սիրէինք ընթերցել Պոյաճեանը իբրեւ մեր հայրենակիցը, որուն համար մենք եւս հպարտ էինք...: Իր վաղաժամ մահէն ետք ան աւելի մեծցաւ մեր աչքին ու աւելի սկսանք հասկնալ ու ըմբռնել իր գրականութիւնը. այնքան որ երբ կը կարդայի «Թուղթ Զաւակներուս»ը, կը կարծէի թէ հայրս յատուկ ինծի համար գրած է զայն: Իսկ իր բանաստեղծութիւններէն ոմանք, յատկապէս «Գինով Ալեքսանը» գոց սորված էինք ու կ'արտասանէինք մեր հաւաքոյթներու եւ կամ խնճոյքներու ընթացքին: Ահաւասիկ թէ ինչո՞ւ, պատահական չէր որ հայրենիք մեկնելէս առաջ որոշեցի այցի երթալ իր դամբարանին:

1971, Սեպտեմբեր, Այնճար:

Ամէն ինչ որոշուած էր ու իմ մեկնումս մօտեցած: Պարոյր Սեւակի մահուան «խորհրդաւոր» գոյժը ոչ միայն ցաւ ու տագնապ յարուցած էր գիւղի մէջ, այլ նաեւ բնազդաբար կ'աւելցնէր ծննդավայրէս բաժնուելու հոգեկան տուայտանքներս: Ներքնապէս հանգիստ չէի...: Պէտք ունէի արտայայտուելու ու ամրապնդելու կուսակցական երդումս, որ տեղի ունեցաւ «Բաբգէն Սիւնի» ակումբի ամենափոքր սենեակին մէջ, Կարօ Սասունիի կնքահայրութեամբ ու ներկայութեամբ՝ միայն երկու պատասխանատու ընկերներու՝ Խաչիկ Պագալեանի և կրտսեր Սարգիս Յ. Ջէյթլեանի...:

Իմ հաւատացեալ ու հայրենասէր ընթերցող՝

Այդ օրերուն մեր սերունդի տղոցմէ խումբ մը, զոր գիւղի «չարերը» կը համարուէինք, կ'ատէինք եկեղեցին ու յատկապէս Տէր Նարեկը, որ հայրենասիրութիւնը կը շփոթէր կրօնամոլութեան հետ, տգիտութիւնը՝ խորամանկութեան, իսկ տնօրէնութեան պաշտօնը՝ բաժնատիրութեան: Ուղղակի բռնակալ մըն էր ան, որ անընդհատ, ամէն օր աղօթել կու տար մեզի, որմէ ուղղակի զզուած էինք...: Իր մանկավարժական սխալ վարուելակերպին հետեւանքով, ընկերներէս շատեր ժամանակէն առաջ դպրոցը լքեցին: Գտած էինք իր թոյլ կողմը. շատ կը զայրանար երբ իրմէ կը խնդրէինք որ աղօթքները, (որոնք գրաբար էին) թարգմանէ ու բացատրէ մեզի...: Իր տգիտութիւնը քողարկելու համար անգթօրէն կը ծեծէր մեզ, նոյնիսկ մարմնական վնասներ պատճառելով աշակերտներուն: Փոլ Հերկելեանն ու Ռոստոմ Հապեշեանը իր ծայրահեղ վայրագութեան հետեւանքով կաղ մնացին, որմէ մինչեւ հիմա երկուքն ալ կը տառապին: Այս պատճառով մենք աւելի ակումբներուն կապուած էինք քան՝ դպրոցին ու եկեղեցիին: Թէեւ ժամանակի ընթացքին սկսանք հետաքրքրուիլ նաև «հիփիական» եւ ընկերային ազատախոհական այլ շարժումներով, սակայն միաժամանակ տոգորուեցանք համամարդկային ու ազգային գաղափարներով, որոնցմով պայմանաւորուած էր նաեւ մեր ազգային ինքնութեան գիտակցութիւնն ու կուսակցութեան հանդէպ մեր ունեցած հաւատարմութիւնը: Կէս լուրջ կէս կատակով «Եապանճի»ներուն (պէյրութահայերուն) կ'ըսէինք. «*Մենք փակաւին Մուսա Լեռցի ենք, երբ ձուլուինք՝ նոր Հայ պիտի ըլլանք*»: Այդպէս դաստիարակուած էինք...:

Տիրող այս մթնոլորտին մէջ ներքին ձայն մը անընդհատ կը յուշէր ինծի, եկեղեցիի փոխարէն պէտք է որ երթամ Պոյաճեանի գերեզմանին, աղօթեմ, աւելի ճիշդը, գրուցեմ հետը ու խօսք տամ որ ես կը մնամ այն ինչ որ եմ ու լի ու լի կը կատարեմ իմ ազգային պարտաւորութիւններս հայրենիքէն ներս...: Պատճառը այս ընտրութեան անոր՝ Գլխագիր Մարդու ու ջինջ հայրենասէրի կերպարն էր որ տարերայնօրէն կազմաւորուած էր մէջս...:

Յաջորդ օրը ծնողներս քաղաք՝ Զահլէ պիտի մեկնէին...: Առիթէն օգտուելով որոշեցի առանձին որսի երթալ: Արեւածագէն առաջ արթնացայ, որսորդական յարմարանքներու հետ առի նաեւ սկաուտական դաշոյնս, ու երբ հօրս բարձին տակէն գաղտնաբար ատրճանակը պիտի վերցնէի, ան աչքերը բացաւ ու ըսաւ. «*Որսորդը դաշոյնի պէտք ունի ոչ թէ ատրճանակի*»... տեղը դիր: Ես ցոյց տուի թէ կը համակերպիմ, սակայն երբ ան անկողնէն իջաւ եւ ուղղուեցաւ դէպի բաղնիք, ատրճանակը առի ու դուրս ելայ...: Օդը մեղմ էր ու թեթեւ զեփիւռ մը կը մաղուէր շուրջս: Կը քալէի առանձինն, մտամոլոր... կ'աճապարէի ու չեմ գիտեր ինչո՞ւ կ'ուզէի հասնիլ արեւածագէն առաջ...: Հոն եմ արդէն, քրտնախաշ մօտեցայ Պոյաճեանի դամբանին: Աւետարանի փոխարէն պայուսակէս հանեցի «Թուղթ

Զաւակներուս» հատորեակը ու դաշոյնի ու ատրճանակի կողքին դրի շիրմաքարին, ճի՛շդ այնպէս ինչպէս դրուած էին երդման արարողութեան ատեն...: Փոխանակ աղօթելու, երդում ընելու և կամ գրուցելու Պօյաճեանի հետ, բնազդաբար սկսայ արտասանել անոր «Գինով Ալեքսան» բանաստեղծութիւնը ... բարձրաձայն...: Երբ հասայ հոն ուր կ'ըսուի.

«Ինկած է ափին սրտագոյն ջուրին՝
Եւ կ'ուղղէ խօսքեր զինք այրող հուրին,
Ու կ'ըսէ՛... կ'ըսէ.
Խմել այս Ջուրը,
Մեծ ճշմարտութեան մեծագոյն հուրը,
.....
Խմել այս Ջուրը,
Ու կեանքին դիմաց միշտ քաշել Սուրը,
Ուղղելու ծուռը....»

Ու տարերայնօրէն Մուսալերան առասպելական Սօսիի խոռոչներէն Պօյաճեանի ձայնը (ոգեղինացած արձագանգի նման) սկսաւ հնչել ականջիս...

ՈՒՂՂԵԼՈՒ ԾՈՒՌԸ... ՈՒՂՂԵԼՈ՛Ւ ԾՈՒՌԸ...

ՈՒՂՂԵԼՈՒ ԾՈՒ՛՛՛ՌԸ...:

Լռեցի.... Անդրադարձայ որ Պօյաճեան իր գրականութեամբ թուրը քաշած կեանքին դիմաց կը պայքարի... ՈՒՂՂԵԼՈՒ ԾՈՒՌԸ:

Ես հասկցայ որ հայրենիք կ'երթայի պարզապէս ԾՈՒՌԸ ՈՒՂՂԵԼՈՒ...

Արեւու առաջին ճառագայթները սկսան «համբուրել» Պօյաճեանի նուիրագործուած դամբանաքարը: Մինչ շուարած կը յամենայի անոր շիրիմին դիմաց... ու կը մտածէի ծունկի գալ ու աւարտել բնաստեղծութիւնը աղօթքի մը հանգոյն, յանկարծ հօրս հաւատարիմ շունը՝ Joli-ին դիմացս տնկուեցաւ ու պոչը շարժելով, սկսաւ վրաս հաչել: Հասկցայ... ըսել կ'ուզէր «*Ի՞նչ կ'ընես հոս... առանձին...*»:

Ետ դարձայ... իմ հաւատարիմ ընթերցող, հայրս էր... գերեզմանոցի դրան առջեւ, հրացանը ուսին... կազմ ու պատրաստ... կը սպասէր... ՈՒՂՂԵԼՈՒ ԾՈՒՌԸ...

Խանգարուեցայ...: Հակառակ անոր որ հնարաւոր չէր ծունկի գալ ու բանաստեղծութիւնը աւարտել, այնուամենայնիւ վերջաբանը կրկնեցի միտքէս: Յետոյ, որովհետեւ Joli-ին էր որ իր շան բնազդով հօրս առաջնորդած էր մինչեւ գերեզմանատուն, յանդիմանական հայեացք մը նետեցի անոր վրայ, որ կը շարունակէր պոչը շարժել ու հաչել վրաս: Իսկ ես յանցանքի վրայ բռնուած աշակերտի նման, գլուխս կախ դիմեցի դէպի հայրս...

Իմ գիտակից ու համբերատար ընթերցող

Այսօր աւելի լաւ կը հասկնամ ու կ'ըմբռնեմ սոյն բանաստեղծութեան վերջին տողերը.

Տարագրութեան գոյժն էր հասեր.
Յաջորդ գիշեր՝
Փիլիսոփայ մարդն ու օրին,
Դրին ծոցը Հայրենական մաքուր հողին:
Սօսին Հայուն, հսկայ, անգին,
Լացաւ Լաց մը, հի՛ն, շատ հին...

Հայրենական Մաքուր Հողն *ու* Խտրբպէկի Սօսին հոն են տակաւին... ու կը սպասեն... ՈՒՂՂԵԼՈՒ ԾՈՒՌԸ...

.....

Սիրելի ընթերցող

Թէեւ հոս կ'աւարտի իմ յուշագրութիւնը: Սակայն չեմ կրնար չնշել որ այդպէս դաստիարակուած էր մեր սերունդը, շնորհիւ նաեւ՝ հայ ազգային-Յեղափոխական գրականութեան, որուն մէջ (յատկապէս մեր՝ Մուսալեռցիներուս համար) իր կարեւոր դերն ու նշանակութիւնը ունէր Պօյաճեանի «Թուղթ Զաւակներուս»ը:

Գաղտնիք մը չէ, որ յետագային մեր սերունդը ապացուցեց որ տէրն է ազգային ու համամարդկային ոգեղէն արժէքներու գնահատման ու պաշտպանութեան...:

Իսկ այս օրերո՞ւն...

Այն ինչ որ տեղի ունեցաւ եւ կը շարունակէ տեղի ունենալ յատկապէս Հայրենիքի մէջ... բացայայտ է ու մէկին: Իբրեւ ականատես կրնանք վկայել, թէ ինչպէս մեր ազգային՝ ու յատկապէս համամարդկային ոգեղէն արժէքները, դաժանօրէն կը շարունակին ոտնահարուիլ ու բռնաբարուիլ...՝ մարդկային «քմահաճ խղճի» ու համամարդկային «բարեհաճ խնամքի» ներքոյ...

Բոլոր պարագաներուն սակայն,... ոգեղէն արժէքները համամարդկային ու ազգային գետնի վրայ գնահատողներ ու անոնց համար պայքարողներ միշտ եղած են ողջ պատմութեան ընթացքին, այսօր ալ քիչ չեն անոնք... յատկապէս՝ երիտասարդներու մօտ: Վկայ՝ մօտիկ անցեալի դէպքերն ու բազմահազար նահատակները...:

Իսկ.

Պօյաճեանը ոեւէ մէկը չէր: Բացի իր լեռնցիի առհասական պինդ նկարագրէն, ան կրթութիւն ստացած ու կազմաւորուած էր նաեւ Պէյրութի Նշան Փալանճեան ճեմարանէն ներս... Լեւոն Շանթի եւ կամ Նիկոլ Աղբալեանի նման ականաւոր դէմքերու շունչին տակ: Ինչպէս շատերու, Եդ. Պօյաճեանի անունը եւս «թապու» էր խորհրդային Հայաստանի մէջ, սակայն անկախացումէն ետք սկսաւ գնահատուիլ ու մեծարուիլ նաեւ Հայրենիքի մէջ: Իր անունով մկրտուեցաւ Երեւանի միջնակարգ դպրոցներէն մէկը, որուն մուտքին նախանցեալ տարի զետեղուեցաւ նաեւ իր կիսանդրին (Գործ՝ Յակոբ Ճանպազեանի): Ու թէեւ իր քանի մը անտիպ գիրքերը իր մահէն ետք հրատարակուեցան ըլլայ Սփիւռքի թէ Երեւանի մէջ, սակայն տակաւին ան իր արժանաւոր պատուանդանը չէ գտած Հայ գրականութեան ոսկէ ֆոնտէն ներս:

Տրուած ըլլալով որ այս տարի իր ծննդեան հարիւրամեակն է եւ տրուած ըլլալով որ ան արդարօրէն կը դասուի Հայ մեծագոյն գիւղագիրներու՝ Համաստեղի, Բակունցի, Մնձուրիի եւ այլոց շարքին, լաւ պիտի ըլլար յատուկ միջոցառումներով (ըլլայ հայրենիքի թէ Սփիւռքի ողջ տարածքին), վեր հանել ու գնահատել անոր գրական վաստակը, յատկապէս յետ մահու հրատարակուած իր գիրքերու լոյսին տակ...: ■

Բանի՛, թէ՞ գանի

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Բանը խօսքն է, մարդու ունեցած ամենէն զօրաւոր ուժը: Ի սկզբանէ էր բանն եւ բանն էր Աստուած: Այսինքն՝ խօսքը համազօր է Աստուծոյ: Խօսքի ուժը՝ Աստուծոյ ուժին:

Գանը գաւազանն է, գաւազանի ուժը, որ մարդկութեան պատմութեան սկիզբէն թուած է, թէ գերադաս է, ու անկէ ալ յառաջացած է ծանօթ ասոյթը՝ «Որ ոչ լուիցէ բանի, լուիցէ գանի», – այսինքն՝ «ով որ խօսքով չհասկնայ ծեծով կը հասկնայ»:

Գանը, ուրեմն, խորհրդանիշն է բիրտ ուժի, ներկայիս շատ տարածուած տարբեր բառով մը՝ կոպիտ ուժի, ուժ մը, որ գիտենք թէ այսօր ինչպէս կը գործածուի եւ որո՞նց կողմէ կը գործածուի:

Բայց, արդեօք կը գերազանցէ՞ խօսքին ուժը:

Եւ արդեօք խօսքին ուժն ալ դրական նպատակո՞վ կը կիրարկուի միշտ:

Ահա այս մասին է, որ կ՚ուզեմ խորհրդածել, «զրուցել» ընթերցողներուս հետ, չէ՞ որ «Ընկերական զրոյցներ» վերտառութեան ներքեւ կը գրուին սոյն տողերը:

Եթէ բիրտ ուժի գործածութիւնը երեւցած է մարդկութեան ծնունդէն ի վեր, գուցէ ժառանգութիւն մեր անասնական արմատներէն, խօսքն է, որ սկիզբ դրած է քաղաքակրթութեան: Նոյնիսկ նախամարդը յաջողած է իր վերապրումը ապահովել շնորհիւ խօսքին, անո՛վ կարենալով զգուշացնել իր տեսակի անդամները շրջակայ վտանգներէն:

Խօսքով է, որ յիշողութիւնը պահուած է, անցեալը պատմուած, ապագան ծրագրուած:

Հետզհետէ խօսքը հիմքը դարձած է կրթութեան, որքան ալ որ «միսը քեզի, ոսկորը ինծի» մտայնութեամբ ծնողներ իրենց զաւակները յանձնած են կրթարաններուն:

Խօսքո՛վ է, որ մշակոյթներ զարգացած են, աղօթք ու երգ է գրուած ու մարդը վեր բերած ոգեկանի բարձրութեան, խոհեր ու իմաստասիրութիւններ են գրուած ու մարդը մղած մտածելու: Աստուածաշունչ է գրուած ու թարգմանուած: Նարեկ է երկնուած:

Բայց ընդունինք նաեւ, որ խօսքով եւս վայրագութիւններ կատարուած են, անէծք ու նզովք, հայհոյանք ու սպառնալիք նոյնպէս խօսքով են եղած, բռնութիւններ, ստրկացումներ եւ մասամբ նորին: Իրողութիւն մը, որ միայն անցեալին չի պատկանիր: Մենք այսօր ալ տակաւին ականատեսն ենք կամ ականջալուրը խօսքի ճամբով տեղի ունեցող բռնութիւններու, անարդարութիւններու եւ անմարդկայնութիւններու՝ ընտանեկան յարկերէն մինչեւ ազգային ժողովներ թէ միջազգային բեմեր:

Բռնի ուժը, սակայն անպայման գաւազանով չէ, պատերազմներով ու հիւլէական ռումբերով չէ, որ պատրաստուած է ու կը պարտադրուի: Անհատներու թէ հաւաքականութիւններու ուժերը կը գործածուին նաեւ տնտեսական, մշակութային, վարչական թէ այլ մարզերու ճամբով՝ զօրաւորին կամքը տկարին պարտադրելու համար: Եւ ի վերջոյ տկարն ալ ստիպուած է եղած, մինչեւ օրս ալ կը ստիպուի բռնի ուժին հակադարձել բռնի՛ ուժով: Եւ այդ ընթացքին հասնիլ հերոսութեան: Մեր Սասունցի Դաւիթի աւանդավէպը ատոր լաւագոյն օրինակն է:

Հայ յեղափոխութիւնը Խաչատուր Աբովեաններու «Վէրք Հայաստանի»-ներով խմորուեցաւ, բայց պայթեցաւ Խրիմեան Հայրիկի երկաթէ շերեփի պատգամին ընդառաջ՝ նուիրագործելով բռնի ուժին դիմելու պարտաւորութիւնը: Եւ դարձեալ ուժը խօսքին՝ Ազատութի՛ւն կամ մա՛հ: Խօսքի՛ ուժին ներքեւ մենք դիմեցինք բռնի ուժին՝ մեր ֆիզիքականը պաշտպանելու, մեր պատիւն ու ինքնութիւնը պահպանելու համար: Հակառակ ուժերու անհամեմատութեան, փոքր ածուի մեր այդ ուժովն է, որ պատուհասուեցան ջարդարարներ ու պատժուեցան դաւաճաններ: Եւ ծնան հերոսներ:

Բայց զգո՛յշ. Գանը սուր է երկսայրի: Պէտք է գիտնալ զայն վարպետօրէն գործածել ու տեղի՛ն, որովհետեւ ան կրնայ վնաս հասցնել որքան թշնամիդ, նոյնքան ալ քեզի՝ քամելով մարդկայնութիւնդ, սրբել-տանելով բարոյական արժէքներդ: Մանաւանդ ան երբեք կիրարկուելու չէ ներազգային առումով՝ չստեղծելու համար խրամներ ազգին տարբեր հատուածներուն միջեւ: Բացառիկ, բացառիկ պարագաներու ձեռք պիտի առնուի այդ սուրը «երբ չի մնում ելք ու ճար»՝ վէրքը բուժելու բոլոր միջոցներու սպառումէն ետք: Սուր կէ՛ծակին որպէս վերջին, գերագոյն լուծում: Վա՜յ այդ լուծման դատապարտուողին, նոյնիսկ եթէ Մելիքն է ան Մսրայ:

Մարդկութիւնը եւ հաւաքականութիւնները, սակայն, պիտի հասնի՛ն ի վերջոյ կեցութեան վեհագոյն այն մակարդակին, որ Գանը կոչուի հանգստեան, ու Բանը ըլլայ տիրական:

Ոչ թէ գանի, այլ միայն բանի...:

ՀՅԴ 35-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՅԴ 35-րդ Ընդհանուր Ժողովը գումարվեց Հայաստանի Հանրապետության և ողջ հայության համար աշխարհաքաղաքական և ներազգային լրջագույն մարտահրավերների, Արցախի Հանրապետության բռնազավթման, Արցախում տեղի ունեցած ցեղասպանության, Հայոց պետականության դեմ ուղղված գոյութենական սպառնալիքների ժամանակահատվածում:

Պատերազմներով ուղեկցվող համաշխարհային վերադասավորումները, միջազգային ինստիտուտների և միջազգային իրավունքի, ինչպես նաև զսպման արդյունավետ մեխանիզմների բացակայությունը անվտանգային մարտահրավերներ են Հայոց պետականության լինելիությանն ու հայկական համայնքների կենսունակությանը:

44-օրյա պատերազմից հետո տարածաշրջանում խախտված ռազմաքաղաքական հավասարակշռությունը, Ադրբեջանի շարունակական ռազմատենչ նկրտումներն ու ՀՀ իշխանությունների որդեգրած խաղաղության կեղծ օրակարգն անվտանգային նոր սպառնալիքներ են ստեղծում:

Ինչպես թուրք-ադրբեջանական տանդեմի, այնպես էլ ՀՀ վարչախմբի համար առաջնային թիրախ են ազգային ինքնութենական արժեքներն ու ազգային գաղափարախոսություն կրող ուժերը:

Հայաստանի անվտանգային և կառավարման ճգնաժամը, ներազգային թշնամանք հրահրելու և Սփյուռքը պառակտելու իշխանության քայլերը խորացնում են հանրային հուսալքությունը:

Քննելով իրավիճակը ՀՅԴ 35-րդ Ընդհանուր Ժողովը հաստատեց.

Միցունակ, նոր որակի ազգային պետության կառուցումը և հայկական ինքնության պահպանումը ՀՅԴ-ն հռչակում է ռազմավարական նպատակ և հայտարարում է պայքարի վճռական հանգրվանի մասին:

Ըստ այդմ սահմանվում են ռազմավարական հետևյալ առաջնահերթությունները՝

- Հայոց անկախ պետականության հզորացում, տարածքային ամբողջականության և ինքնիշխանության վերականգնում, ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետության կերտում՝ Անկախության հռչակագրի տառին և ոգուն համապատասխան,
- Արցախի ազատագրման օրակարգի շուրջ համազգային համախմբում, միջազգային իրավաքաղաքական երաշխիքների գործադրումով՝ արցախահայության հավաքական վերադարձի և հիմնարար մյուս իրավունքների իրացում,
- Հայոց բանակի, պաշտպանության և անվտանգության համակարգերի ամրապնդում,
- Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման և հատուցման իրավունքի հետապնդում,
- Ազգային և պետական շահերի վրա կառուցված, անվտանգային սպառնալիքները հաղթահարող արտաքին քաղաքականության որդեգրում,
- Սփյուռքի կազմակերպական հզորացում, համահայկական օրակարգերի շուրջ ազգային և քաղաքական համախմբում:

Միաժամանակ ՀՅԴ 35-րդ Ընդհանուր ժողովը հաստատեց.

ՀՀ իշխանությունների որդեգրած ապազգային և ապապետական ընթացքը կասեցնելու, Հայրենիքի անվտանգությունը երաշխավորելու, կենսունակ հայկական պետություն ունենալու, սոցիալական արդարություն հաստատելու, ներազգային համապարփակ ճգնաժամը հաղթահարելու և ՀՅԴ ռազմավարական նպատակներն իրագործելու անհրաժեշտ պայմանն իշխանափոխությունն է:

ՀՅ Դաշնակցությունը լի է վճռականությամբ և պատրաստակամ է պետականության և ազգային ինքնության պահպանման ու զարգացման օրակարգի շուրջ գոյացնել համազգային համախմբում:

Մարտ 6, 2025, Ծաղկաձոր

Քրիստափոր Միքայելեան
1859-1905

Այդպիսով պարզւում է մեզ համար, որ այն բոլոր գանգատները, որոնք այսօր ծանրանում են յեղափոխական շարժման կամ ձեռնարկների վրայ, – իբրեւ կոտորածների պատճառ կամ առիթ – իսկապէս ոչ այլ ինչ են, եթէ ոչ ամբոխային տրամաբանութեանը յատուկ խառնիճաղանճ ճիչեր, որոնք անխուսափելի են դառնում, երբ մարդիկ կամ անընդունակ են ըմբռնելու այդ շարժման ամբողջ նպատակայարմարութիւնը եւ կամ գաղափար չունեն նրա զարգացման համար անհրաժեշտ պայմանների մասին: Հազար ու մի տեսակ ձեռնպահութիւններ, պայմանական համաձայնութիւններ, «թէեւ» ու «բայց»երի հետ համեմուած համակրութիւններ կամ հակակրութիւններ. դրանք բոլորը խղճուկ մտքի արտահայտութիւններ են, որոնց տակ թագնւում է կամ փափուկ կեանքի սիրահար հակայեղափոխականի դժգոյն ու անտարբեր դէմքը կամ թէ եսամոլ իմաստակի աղքատիկ հոգին:

Քրիստափոր Միքայելեան,
Յեղափոխականի մտքերը,
Զավարեան մատենաշար թիւ 1,
Ամբոխային տրամաբանութիւն էջ 46,
Պեյրութ 1923 թ.

1905 թ. մարտի 17-ին Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայից ոչ հեռու, Վիտոշ լեռան լանջին նահատակուեց հայ ազատագրական պայքարի տեսաբան, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հիմնադիր եւ առաջնորդ Քրիստափոր Միքայելեանը: Քրիստափորը նահատակուեց Սուլթան Աբդուլ Համիդի դեմ ծրագրուած ահաբեկութեան համար պատրաստուող ձեռնաառումբի փորձարկման ժամանակ:

ԴՐՕՇԱԿ